

Մեր հարցն՝ Քիֆին, Մշակույթի ինքն-
 քրոնիսն, Գուստիայու, և
 «ՍՊՅԵՅ»-ն ճիշդ է
 ԴԻՆ, ԻՆՏԵՆՍ ՄԱՇԻՆ
 ԿԱՐՏԵՆ, ԲԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ
 ԿԱՐՏԵՆ, և
 Մեր հարցն՝ Քիֆին 2-11
 Պարտիստ ակտիվիստ և-11

ՄՇԿԿ

ՀԵՄԱՆԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Մեր
 (Բ
 Յայտ
 «ՍՊՅԵՅ»
 Ինտեն
 Մաշին

ԵՒՍ ԳԱՆՏՆԻԲ ԶԸ ՄՆԱՑ

և ոչ մի ծանուկ բան
 սկսեց թուլանալ, առանց
 այլ յայտարարելու, որ

յու համար կառավարության
 զլիկ յայտարարությանն էր պարզ
 ու մեկին են, առայց ու անվեր,
 ապարդուս քննադատության
 իրաւունքի գիտակցու
 մէջ ընկած յայտարարու
 թի թեմիսը Արաստ

բաւ է Քիֆին շուգարի և Քիֆին
 գուստի 19-20 տարեկան բազմա-
 ցիներ զգրանաւար:

ԴՆՆ-Նահանգապետի յայտարար-
 ւումքինը

Արդեւեւ պարզուած է, թէ կը
 կարծես այնքան ծառայողներն
 այնքան սաստիկանութեան պաշ-
 արմանք անգործ են
 և զպաշտներն և հաստա-
 ներն ապրանքներն և իրեք
 ունենան, որի նեւեւ
 են բաւականաւ
 իրի և իրե

L. ԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԸ

89
 ՅԻՐՈՐԴ

Ինքնագրութիւնը բաց է առաւանակ
 (բացի կրակի և այլն)
 Յայտարարութիւն
 Յայտարարութիւն

Ասանձեկով Մշակի՝ հանգուցեալ հիմ
 նարէն յետոյ այս պատասխանատու գոր-
 ծի ինքնագրութիւնը պէտքով և այն մեկ
 աւան և անկեղծ համակրութեամբ ու հե-
 արգրութեամբ, որ հասարակութիւնը բազմի
 ունի և առեւ պինդ այսօր զեպի Մշակը՝
 Ահա այդ պատճառներով էլ բաց ենք
 ուն այսօր Մշակի՝ 1904 թվ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼՐԱՆՈՒՄ Ե ԳՍԱՆՆԵՐՈՐԴ
 1893 թվ. Բնի
 1893 թվ. Բնի
 1893 թվ. Բնի

ՄՇԿԿ

1873 թվ. Բնի
 1873 թվ. Բնի
 1873 թվ. Բնի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՆԴՐՈՒՆ ԱԼՈՅԱՆ

**Համբարձում Առաքելյան
հրապարակախոսը**

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 070
ԳՄԴ 76.12
Ա 325

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝
ԼԵՆԴՐՈՒԾ ԱՐԱՄԻ ԱԼՈՅԱՆ

Խմբագիր՝ Բ.Գ.Թ., դոցենտ Նաղաշ Մարտիրոսյան

Ա 325 ԼԵՆԴՐՈՒԾ ԱՐԱՄԻ ԱԼՈՅԱՆ

Չամբարձում Առաքելյան հրապարակախոսը: -Եր., ԵՊՅ հրատ.,
Երևան, 2014 - 112 էջ:

Աշխատանքն առաջին փորձն է գիտական ամբողջական ուսում-
նասիրությամբ ներկայացնելու հետաքրքրունյան շրջանի «Մշակը»՝
սկզբնաղբյուրների, արխիվային և գրական նյութերի հիման վրա:

Նախատեսված է լրագրողների, լրագրագետների և ընթերցող
լայն հանրության համար:

ՀՏԴ 070
ԳՄԴ 76.12

ISBN 978-5-8084-1873-8

© ԵՊՅ հրատ., 2014
© Լենդրուշ Ալոյան, 2014

Առաջաբան

1892-ի դեկտեմբերի 19-ին վախճանվեց «Մշակի» հիմնադիր խմբագիր Գրիգոր Արծրունին, որով թերթը խմբագրել էր 20 տարի: Լրագրի գործունեությունը դադարեց 10 ամսով, մինչև ցարական գրաքննությունն ու կառավարչապետը կորոշեին նոր խմբագրի հաստատման հարցը: Արծրունու այրին՝ Մարիամ Մելիք-Աղամալյանը, իշխանություններին էր դիմել, որ խմբագրի պաշտոնում հաստատեն Համբարձում Առաքելյանին, սակայն մերժվեց այս առաջարկը մի քանի պատճառաբանությամբ: Առաջին՝ Համբ. Առաքելյանը, չնայած տիրապետում էր մի քանի լեզուների, բայց չունեւր բարձրագույն կրթություն: Նա կիսատ է թողնում Մոսկվայի Գյուղատնտեսության ակադեմիայի իր ուսումը Թավրիզում մեծահարուստ և մեծ բարերար հոր վաճառական գործերը նրա մահից հետո տնօրինելու համար: Երկրորդ՝ Առաքելյան հրապարակախոսի գործունեությունը քաղաքական վստահություն չէր ներշնչում, որովհետև նա 1882-ին գործուն մասնակցություն էր ունեցել Սեմյոն Հախումյանի՝ Ծուշիում հրատարակվող «Գործ» ամսագրին, որի առաջին համարը բռնագրավվել էր գրաքննության կողմից: Այդ համարում էր տպագրվել նաև Առաքելյանի «Հողատիրության և կալվածատիրական խնդիրները Անդրկովկասում» հոդվածը, որ նույնպես, ի թիվս այլ նյութերի, որակվում էր որպես «սոցիալիստական վտանգավոր ուղղության» կրող: Անվստահություն էր ներշնչում նաև Առաքելյանի գործունեության այն շրջանը, երբ 1892 թվականի կաթողիկոսական ընտրությունների նախօրյակին նա, իբրև պարսկահնդկական թեմի աշխարհիկ պատգամավոր, պաշտպանել էր Մկրտիչ Խրիմյանի թեկնածությունը: Նշել էին նաև, որ իբրև բարեգործական ընկերության քարտուղար՝ Առաքելյանը ևս արժանացել է գրաքննության կոմիտեի անբարյացակամությանը, շեշտվում էր, որ Արծրունու կենդանության օրոք նրան չէր հաջողվել իր գաղափարներն անցկացնել պարբերականում, որովհետև Արծրունին «Մշակի» էջերում հետևողականորեն դիմադրում էր 1880-ականների հայ «նարող-նիկ» գործիչների տպագրությանը: Այնինչ նրա մահից անմիջապես հետո գրաքննության բռնագրաված հոդվածները, որոնք պատկանում էին Համբ. Առաքելյանի գրչին, ունեին արմատական ուղղություն: Չնայած Առաքելյանը չհաստատվեց խմբագրի պաշտոնում, բայց մնաց որպես թերթի գլխավոր աշխատակիցներից մեկը, իսկ 1910-ին նաև հրատարակիչն էր մինչև 1913 թվականի հոկտեմբերի 20-ը, երբ վախճանվեց խմբագիր Ալեքսանդր

Քալանթարը և նրան փոխարինեց Յանք. Առաքելյանը, ով մինչ այդ էլ, դեռ 1910-ին ցարական իշխանություններից իրավունք էր ստացել խմբագրելու Թիֆլիսում հրատարակվող «Արոր» ամսագիրը:

Յանքարծում Առաքելյանը ծնվել է 1855-ին հայոց բերդաքաղաք Ծուշիում: 1865-ին տեղափոխվել է Թավրիզ, որտեղ էլ տիրապետել է պարսկերենին, գերմաներենին, ֆրանսերենին: Տասնիննամյա պատանին վերադառնում է Ծուշի, ապա ընդունվում է Բաքվի ռեալական ուսումնարանը: Ավարտելով այն, 1979-ին շարունակում է ուսումնառությունը Մոսկվայի Պետրովսկու անվան երկրագործական ակադեմիայում, բայց կրթությունը կիսատ է թողնում: 1887-ին նա Ծուշի է վերադառնում և տեղի թեմական օրիորդանց դպրոցում աշխատում որպես տեսուչ: 1892-ին վերջնականապես տեղափոխվում է Թիֆլիս: Այստեղ նա հրատարակական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ էր, դրամատիկական ընկերության փոխնախագահ, Գայանյան օրիորդաց դպրոցի հոգեբարձուների խորհրդի նախագահ: Ունենալով լիբերալ հայացքներ՝ Առաքելյանը դարձավ սահմանադիր-ռամկավարների (կադետական) կուսակցության անդամ և նրանց գաղափարների ջերմ պաշտպանն արևելահայ իրականության մեջ (1906-ի առաջին համարներում «Մշակի» գործիչները թերթը հայտարարեցին սահմանադիր-ռամկավարների օրգան՝ տպագրելով և մասսայականացնելով այդ կուսակցության կանոնադրությունը և ծրագրերը): Նրանք պահանջում էին ժողովների և միտինգների ազատություն, անկախ ընկերությունների և միությունների ստեղծման հնարավորություն, տեղական ինքնակառավարման ապահովում, հողահատկացման ու հողաչափության գործի վերակազմում, գյուղացիների հողաբաժնի ավելացում, գործադուլի իրավունք, ութամյա աշխատանքային օր, կանանց և երեխաների աշխատանքի իրավունք, հիվանդության և այլ դեպքերում պետական ապահովություն, տարրական դպրոցներում դասավանդման լիակատար ինքնավարություն և ազատություն, սահմանադրական կարգով ուսանողական և բանվորական ազատ կազմակերպությունների ստեղծման հնարավորություն... «Մշակի» գործիչները կադետական կուսակցության ջատագով լինելով հանդերձ, ի տարբերություն կադետների, դավանում էին զուտ ազգային իդեալներին: Յայ ռամկավարներն իրենց գործունեությունը ծավալում էին գլխավորապես հայ ազգային խնդիրների շրջանակներում:

1908-ին Առաքելյանը գործուղվեց Պոլիս, որտեղ էլ երեք ամիսների ընթացքում կազմակերպեց Արևմտահայաստանի սահմանադիր-ռամկավարների կուսակցությունը:

Յանքարծում Առաքելյանը և մշակականները սոցիալիզմը որպես

ապագա չէին ընդունում և լինելով ռեալիստական քաղաքականության կողմնակիցներ՝ պնդում էին, որ իրենց ծրագրի մեջ ներառում են միայն գործնականապես իրականալի պահանջներ. դրանք էին՝ բոլոր քաղաքացիներն անկախ սեռից, դավանանքից և ազգային պատկանելիությունից հավասար են օրենքի առաջ, յուրաքանչյուր քաղաքացու պիտի տրվեր խղճի և դավանանքի ազատություն, յուրաքանչյուր անհատ ազատ է ինչպես բանավոր, այնպես էլ մամուլի միջոցով մտքերը հրապարակավ արտահայտելու, իսկ սխալ ելույթի դեպքում պատասխանատու է միմիայն դատարանի առաջ:

1917-ին Առաքելյանը Պողոս Նուպար փաշայի հետ հիմնադրեցին Յայ ժողովրդական կուսակցությունը, և մինչև կուսակցության «Ժողովրդի ձայն» պարբերականի հրատարակությունը՝ «Մշակի» էջերում էին տեղադրում այդ անվանումով հատուկ էջը, ուր քննադատության էին ենթարկվում ՅՅԴ-ի վարած քաղաքականությունը:

Առաքելյանը թերթը խմբագրեց մինչև 1918-ի հուլիսի 9-ը՝ իր եղերական մահը, երբ անհայտ չարագործների ձեռքով սպանվեց իր բնակարանում: Ստեփան Մալխասյանն այդ առիթով գրում է. «Մարմինը կարող եք սպանել, բայց միտքը երբեք» հոդվածը՝ նրա սպանությունը որակելով չարաղետ ոճիր¹:

Կյանքից անժամանակ հեռացած խմբագրին թերթը բնութագրում է իբրև սկզբունքային և ուղղամիտ մի մտավորականի, որը մինչև վերջ պայքարել է իր համոզմունքի և գաղափարների համար, նպաստել հայ հասարակական ու քաղաքական մտքի զարգացմանը, ուստի և անաչառ պատմությունը պետք է գնահատի նրան:

¹ «Մշակ», 1918թ., N 132:

«Հայկական հարցը» Առաքելյանի բնութագրմամբ

Լինելով «Մշակի» գլխավոր գործիչներից մեկը՝ Առաքելյանը չէր կարող չանդրադառնալ հայ ժողովրդին հուզող խնդիրներին: Իր աչքի առաջ էր սույթան Համիդը կոտորում, Ալեքսանդր 3-րդ ցարը հալածում հայությանը: Բանը հասել էր նրան, որ երկու բռնակալներն արգելել էին նույնիսկ հայ ժողովրդի երկու հատվածների միմյանց հետ շփումները՝ արգելելով անգամ մամուլի օրգանների փոխանակումը: Բնական էր անաչառ մտավորականների զայրույթը, որը սակայն, խիստ արգելանքների պատճառով հաճախ հնչում էր տողատակերից, եզոպոսյան լեզվով, որովհետև գրաքննությունը հարմար պահը չէր կորցնում դադարեցնելու «հակակառավարական» որակված պարբերականների տպագրությունը:

«Արդարությունը Թուրքիայում» առաջնորդողում Յ. Առաքելյանը խոսում է կողմնապահության մասին, որ կատարվում է երկրի դատարաններում: Նույնիսկ եվրոպական երկրների դեսպաններն են բողոքել այն անարդարությունների դեմ, երբ հանցանքը չապացուցված, բայց, քանի որ մեղադրյալները հայեր են, խիստ պատիժներ են կիրառվում: Թերթը մեջ է բերում Մագոստ Սիմոն-բեյի մահափորձի առթիվ ձերբակալված 200 հայերի հարցը, որոնց մեղավորությունը չապացուցված, դատապարտվում են խիստ պատժաչափով²: Եվ շարունակությունը, թե «Մենք երբեք չէինք կարող երևակայել, որ թուրքած կառավարությունն այնտեղ կհասնի, որ թշնամաբար կվերաբերվի մի այնպիսի մարդասիրական գործին, ինչպիսին է սովյալներին օգնելը, քաղցածին հաց տալը, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ կառավարությունը բոլորովին անկարող էր իր սեփական միջոցներից, իր գանձարանից օգնելու սովյալներին: Եվ այդ անմարդասեր և հակակրեյի վերաբերմունքի հետևանքն այն եղավ, որ հազարավոր մարդիկ զոհ գնացին սովին, հազարավոր ընտանիքներ զաղթեցին դեպի օտար երկրներ, բազմաթիվ գյուղեր և գավառներ բոլորովին դատարկվեցին աշխատասեր, խաղաղ կուլտուրական ազգաբնակչությունից և բոլորովին քայքայվեցին ու ամայացան»: Թերթը լուրեր էր ստացել, թե «Սասունի հայերին զսպելու նպատակով կառավարությունը այնտեղ թուրքական զորք է ուղարկել և քրդական զնդեր»³: Եվ նույն համարում հայտնում են Սասունի դեպքերի մանրամասները³: Պարզվում է, որ խռովությունն առաջացել է հայերի պատժա-

² «Մշակ», 1894 թ., N 65:

³ «Մշակ», 1894 թ., N 104:

ռով, քանի որ ժողովուրդը հնարավորություն չուներ հարկեր վճարելու, իսկ թուրքերն ու քրդերն ահազին զորքով ու թնդանոթներով հարձակվել են անմեղ բնակչության վրա:

«Թուրքաց հայերը և նրանց գաղթականությունը» վերնագրով ընդարձակ հոդվածում Յ. Առաքելյանն արդեն ստիպված է արդարացնել գաղթականությունը, որովհետև. «Ինչպե՞ս մնալ, երբ քո ցորենի ու խոտի դեզերը կրակի ծարակ դառնալուց զատ, անբախտ լսելիքովդ լսում ես քո բոցակեզ տան խորքերից հարազատներիդ հառաչանքի վերջին ձայները և ծխից խեղդվող անմեղ մանուկներիդ սարսափելի ձիչերը, որոնք լուծում են հավիտյան մի մոխրակույտ դարձած: Ինչպե՞ս մնալ, բայց միթե՞ մեկն է պատճառը, տասն է, ասելով չի պրծնի»⁴: Իսկ անգլիական «Դեյլի նյուսը» այս օրերին գրում էր, թե մի բուխարացի հայ ինքնապաշտպանության դիմելով մի սպայի է վիրավորել, որի պատճառով 25 հայի են սպանել...

Իբր կազմվել էր հանձնաժողով Սասունի կոտորածներն ուսումնասիրելու համար, սակայն նույնիսկ գերմանական, անգլիական, ռուսական թերթերն էին գրում, եթե այս «շտապողականությամբ» հանձնաժողովը շարժվի, ապա մինչև նա Սասուն հասնի և իր գործունեությունը սկսի, շատ հետքեր կորած կլինեն, շատ վկաներ փախած կան ոչնչացված: Եվ առանց ամաչելու թուրքական թերթերը գրում էին, թե ոստիկանությունը երզնկայում բռնել են մեծ քանակությամբ պայթուցիկ նյութ, որոնք հավաքել էին հայ քարոզիչները: Եվ արդյունքը՝ 58 հայերից 24-ին մահվան դատապարտեցին, 5-ին ցմահ բանտարկության, մնացածին տաժանակիր աշխատանքի՝ 3-16 տարի ժամկետով:

Սուլթանը՝ խորամանկության դիմելով, հարցնում է հայոց պատրիարք Իզմիրլյանին, թե ինչ պահանջներ ունի հոտը: Յետևում է երկաթե պատրիարքի պատասխանը՝ «Յայերը միայն մի ցանկություն ունեն՝ իրենց կյանքի և սեփականության տերը լինելու»:

Թիֆլիսում գտնվելիս անգլիական «Դեյլի տելեգրաֆ» թերթի թղթակից Էմիլ Դիլոնի հետ հարցազրույց է անցկացրել Յամբարձում Առաքելյանը⁵: Յայ ազգի մեծ բարեկամը հայտարարել է, որ ինքը լիովին համոզված է այդ վայրագությունների առումով և գտնում է, թե «Մշակում» և այլ պարբերականներում տպագրված նյութերն անհերքելի փաստեր պարունակում են: Իսկ սուլթանի մի հայտարարությունը, թե հայերը շատ նահանգներում մեծամասնություն չեն կազմում, որ ինքնորոշման խնդիր դնեն, հետևում է Առաքելյանի պատասխանը՝ «Ընդունենք, որ հայերը մեծամասնություն չեն

⁴ Նույն տեղում, 1894 թ., N 104:

⁵ «Մշակ», 1895 թ., N 54:

կազմում, սակայն դա ձեզ իրավունք տալի՞ս է նրանց կոտորելու»:

Շուտով պարզ դարձավ, որ սուլթանը ռեֆորմների իրականացնող էր նշանակել Եաքիր փաշային, որի դեմ անգլիական բոլոր թերթերն են գրել, իսկ պատճառն այն էր, որ հենց այդ անձնավորությունն էր Համիդե գնդի կազմակերպիչը և Սասունի կոտորածը նախաձեռնողը:

Իսկ կոտորածների լուրերը հայտնում էին հայկական բոլոր նահանգներից: «Մշակը» թարգմանում և արտատպում էր ռուսական «Նովոստի» և այլ լրագրերի լուրերը, օրինակ՝ 1896-ի օգոստոսի 3-ի «Նովոստիի» հաղորդագրությունը, թե Վանում Սաաեդդին փաշայի գլխավորությամբ սկսվել էր սարսափելի կոտորած, որի նպատակն էր ոչնչացնել ամբողջ Վասպուրականի հայ բնակչությանը: Վանում միայն Պարսկաստանի հյուպատոսն էր ընդառաջել մեծաքանակ հայերին՝ ապաստան տալով հյուպատոսարանում, հայտարարելով, թե հայերին թուրք կառավարությանը չեն հանձնի նույնիսկ այն դեպքում, երբ ռմբակոծության ենթարկեն հյուպատոսարանը⁶:

Թերթի «Խառն լուրեր» բաժնում գետեղել են արտասահմանյան այն լրագրերի նյութերը, որոնք մեծ շուքով են նկարագրում միջազգային պատերազմական նավատորմի շքերթը թուրքական ջրերում: «Սրանք ոնց եկել են, այնպես էլ կվերադառնան», գրում է «Մշակը»՝ մեջբերելով Հակոբ Պարոնյանի տողերը, թե ավելի լավ կլիներ, եթե եվրոպական պետությունները Բոսֆոր ուղարկեն իրենց մարտանավերի լուսանկարները:

1895-96 թվականների համիդյան կոտորածներին զոհ գնացին 300 հազար հայեր: Ահավոր մեծ էր գաղթականների թիվը, որոնք ստիպված էին լքել հայրենի օջախները: Եվ հանկարծ թուրքական իշխանությունը երկու շաբաթ ժամանակ է տալիս գաղթականներին՝ վերադառնալու իրենց բնակավայրերը: «Սոռանում է օսմանյան կառավարությունը,- գրում է Հ. Առաքելյանը,- որ հարցը ժամանակամիջոցի մեջ չի, այլ երկրի պայմանների փոփոխության մեջ: Ոչ մի հայ, ինչքան էլ նրան ժամանակ տաք, չի համարձակվի վերադառնալ այն երկիրը, ուր նրան սպասում է սուր, բանտ, քաղց և աքսոր»⁷:

Առաքելյանը հայտնում է, թե «Քրդական երկու ցեղերի անընդհատ պայքարի պատճառով Դիարբեքիի 17 հայկական գյուղերի բնակիչներ թողել են իրենց տները և հեռացել՝ վախենալով կոտորածից: Բնակարաններին արդեն քրդերը տիրել են, իսկ վիլայեթում, Մարդինի բանտում բանտարկված 173 հայերից խնդիրք ստացավ, որի մեջ հայտնում էին, թե ահա 4 տարի է բանտարկվել են, սակայն չգիտեն նույնիսկ բանտարկության

⁶ «Նովոստի», 1896 թ., օգոստոսի 3:

⁷ «Մշակ», 1897 թ., N 30:

պատճառը, որևէ անգամ չեն ենթարկվել դատական քննության: Վալին վերջապես ազատել է նրանց, որակելով որպես «թյուրիմացության» զոհերի»:

«Արտաքին տեսություն» բաժնում Յ. Առաքելյանը «Մեր հարևան երկրները» հոդվածում քննադատում է իսլամական կրոնը, որը դարերի ընթացքում որևէ փոփոխության չի ենթարկվում, այնինչ միայն Ատրպատականի նահանգում խոլերան մի քանի ամսվա ընթացքում կոտորել էր 216 հազար մարդ: Նույնիսկ կառավարության կազմում կատարված փոփոխությունը ոչինչ չտվեց այդ երկրին, երբ մեծ վեզիր Աթաբեկին փոխարինելու եկավ Դովլեն: «Խաները, կուսակալները, կալվածատերերը դարձյալ շարունակում են կեղեքել թշվառ պարսիկ ժողովուրդը, երկրի մեջ չկան կայուն, հաստատ օրենքներ, գյուղական ազգաբնակչության վիճակը սոսկալի է, զեղումները, հարստահարումները ամեն տեսակի և գույնի անդադար կատարվում են և քանվում, ծծվում է ամբողջ երկրի հյուսն ու ծուծը»⁸: Հեղափոխության վերելքով պայմանավորված գրաքննության պայմաններում թերթի աշխատակիցները շատ հաճախ օգտագործում էին եզովպոսյան լեզուն՝ իրենց երկրում տիրող իրավիճակը մերկացնելու համար: Առաքելյանի այս հոդվածը դրանց թվին է պատկանում: Հոդվածագիրն անդրադառնում է նաև Թուրքիային: Նա տեսնում է, որ ժողովրդի վիճակն ավելի վատ է սուլթանական Թուրքիայում: Թուրքերը երկյուղ են կրում եվրոպական կարգ ու կանոնից, ռեֆորմներից: Ըստ Թուրքիայի քաղաքագետների, որոնք «ալլահի կամքով» ղեկավարում են լայնածավալ կայսրության բախտը, թող երկիրը շարունակի իր այժմյան նույն դրությունը: Եվ սա հասկանալի է, եզրակացնում է Առաքելյանը, քանի որ Եվրոպայի հետ շփումը կկործաներ փաշայական Թուրքիան, իսկ կալվածատերերն ավելի նպատակահարմար էին համարում ամբողջ Թուրքիայի, քան իրենց կործանումը: Ահա ինչու երկիրը դարձել էր «թատերաբեմ ցեղական-ազգայնական թշնամությունների, անլուր հարստահարությունների և վայրագ արհավիքների»:

1903-ի ռուսական ցարի հրահանգն էր՝ առգրավել հայկական եկեղեցապատկան հողերը, հուզումների ալիք բարձրացրեց ողջ Անդրկովկասում: Անկախ կուսակցական պատկանելությունից՝ ողջ հայ ժողովուրդը ոտքի ելավ, խնդրելով կաթողիկոսին չենթարկվել հրահանգին, քանի որ ծանր վիճակ էր ստեղծում կրթության ու լուսավորության բնագավառում: Փակվում էին ծխական բոլոր դպրոցները, որոնք ֆինանսավորվում էին եկեղեցապատկան հողերի հաշվին, այսինքն անելանելի դրություն էր ստեղծվել արևելահայության համար: Մյուս կողմից էլ 1904-ին սկսվել էր ռուս-ձապոնական պատերազմը, որի արդյունքը Ռուսաստանի համար ջախջախիչ էր:

⁸ Նույն տեղում, 1905 թ., N 1:

Ամեն օր նորանոր լուրեր էին ստացվում ռուսական նավատորմի պարտությունների մասին, երկրում տարածվում էր սովը և ժողովրդի ուշադրությունը սոցիալական խնդիրներից շեղելու նպատակ հետապնդեց ծայրամասային ժողովուրդներին իրար դեմ հանելը: Արդեն 1905-ի փետրվարի 9-ի համարի «Դժբախտ թյուրիմացություն» առաջնորդողում թերթը տպագրում է ռուսական «Կավկազ» լրագրի հաղորդագրությունը, թե չափազանց տխուր և վերին աստիճանի անախորժ արյունահեղ ընդհարումներով դեպքեր են, տեղի են ունեցել Բաքվում հայերի և թուրք-թաթարների միջև: «Երեսուն տարուց ավելի է,- գրում է Առաքելյանը,- որ հայ առաջադիմական մամուլը քարոզում է համերաշխություն և փոխադարձ հարգանք ազգերի միջև երբեք չէր կարող հրահրել թշնամություն մեր երկրի ազգաբնակչության խավերի մեջ: Մենք պետք է ամեն ջանք գործ դնենք կղզիացնելու մասնավոր դեպքերը, գրկելու ծագած անախորժությունները ու թյուրիմացությունները և խաղաղեցնելու կրքերը: Պատմությունը և բախտը վիճակել են Կովկասին զետեղելու մի որոշ տարածության վրա բազմաթիվ ազգություններ: Այդ ազգությունների գոյությունն իրականության փաստ է և նրանց միասնակեցությունը մի ձակատագրական անհրաժեշտություն: Մենք՝ բոլորս, պետք է ապրենք նույն հողի վրա, շենացնենք այն, կերակրվենք նույն հողից: Խանգարելով միմյանց, մեզանից յուրաքանչյուրը կխանգարի նաև ինքն իրեն»⁹: Եվ չնայած հայության հորդորներին՝ վերջ տալ եղբայրասպան ջարդերին, հայ-թաթարական ընդհարումները տարածվեցին ամենուր:

Տխրահռչակ իշխան Գոլիցինին Կովկասի կառավարչապետի պաշտոնում ցարը փոխարինեց Վորոնցով-Դաշկովով, սակայն սա էլ հետևում էր «բաժանիր, որ տիրես» սկզբունքին՝ գաղտնի զենք մատակարարելով և՛ հայերին, և՛ թաթարներին: Վրացիների այն պնդումը, թե նոր կառավարչապետը պաշտպանում է հայությանը, փուչ խոսքեր էին:

Արդեն 1907-ին թուրքական կառավարությունն արտաքսում էր բնիկ հայ ժողովրդին Մուշի և Բիթլիսի նահանգներից: Չդիմանալով ճնշումներին, հայերը փախչում էին Էրզրումից և Դիարբեքիից: Կառավարությունը, անգոր զսպելու հեղափոխական ագիտացիան քրդերի և երիտթուրքերի մեջ, մտադիր էր խեղդել այդ շարժումը հայկական արյան մեջ: Առաքելյանն անդրադառնալով այս հարցին և մեջքերելով անգլիական թերթերից քաղվածքներ և ահազանգ հնչեցնելով թշվառ արևմտահայությունը վերջնական կորուստից փրկելու համար, գրում է. «Չերիք է թշվառ տաճկահայերին օրորեն նույն երգերով, նույն խաբուսիկ խոստումներով: Քաղաքական հանգամանքները փոխվել են, իսկ պայքարի պրիմիտիվ ձևը հայությանը տանում է դեպի

⁹ «Մշակ», 1905 թ., N 18:

գերեզման»¹⁰:

«Հայաստանը մոռացված» առաջնորդողում Առաքելյանը հայտարարում է, թե տասնյակ տարիներ ի վեր «Հայկական հարցը» շոշափվում է ամենատարբեր առյուծներում, սակայն այժմ էլ, երբ Ռուսաստանը և Անգլիան նոր դաշնագիր են կնքում, նորից խնդիրը չի շարժվում մեռյալ կետից՝ մնալով քաղաքական խաղերի առարկա: Անգլիայի բաղձանքն է սուլթանից որոշ արտոնություններ կորզել, իսկ Ռուսաստանն ամեն ինչ անում է, որ Թուրքիան Գերմանիայի գիրկը չընկնի, ահա ինչու երկու երկրներն ավելի ձեռնտու համարեցին զոհել Սերձավոր Արևելքը¹¹:

Անդրադառնալով թուրք-պարսկական ընդհարմանը՝ Առաքելյանը հայտնում է, թե թուրքերը գրավել են պարսկական մի քանի բնակավայրեր, պատճառաբանելով, թե դրանք իրենց են պատկանում: Սրանով թուրքերը երկու հարց են լուծում, նախ միացնում են իրենց քրդական նոր հողատարածքներ, ապա նաև փակելով ճանապարհը հայ հեղափոխական տարրերի դեմ, որոնք Պարսկաստանից կարողանում են Թուրքիա զենք-զինամթերք տեղափոխել: Եվ զարմանում է Առաքելյանը, թե ինչպես են Անգլիան և Ռուսաստանը թույլ տալիս այդպիսի ոտնձգություն, չնայած գիտի, որ Թուրքիայի թիկունքին արդեն Գերմանիայի Վիլհելմ կայսրն է կանգնած¹²:

Ճահիրիար-Առաքելյանը «Մտքեր և փաստեր» բաժնում հայտարարում է, թե Արևմտահայաստանը դատարկվում է, իսկ սա բոթ է, որի մասին պիտի մտածեն բոլորը: Ինչպես հնչակյան Սուրադը, այնպես էլ Անդրանիկ փաշան համաձայն են, որ մի համաժողով գումարվի, որն էլ վճռի մեր անելիքները: Առաքելյանը պնդում է, թե դա ոչ թե կուսակցությունների համաժողով պիտի լինի, որն, ըստ նրա ոչ արդյունավետ է, այլ ժողովրդի համաժողով, որովհետև հայության գոյությունը պահպանելու հարցի լուծման համար անհրաժեշտ է ոչ թե կուսակցական, այլ համազգային ժողով¹³, ուր ժողովուրդը որոշի իր ապագան:

«Մտքեր և փաստեր» բաժնում Առաքելյանը գրում է Թուրքիայի սահմանադրության մասին, որը հռչակում է սուլթանը և քննադատում դաշնակցության «Ջանգակ» թերթի գործիչներին, որոնք հավաստիացնում են, որ նաև իրենք են ստիպել սուլթանին անելու այդ քայլը: Առաքելյանը զգուշավորության է դիմում նրանց, որովհետև ընդամենը պիտի զգույշ գործել, որ գոնե սահմանադրության այդ փոքրիկ լույսը հայերի վրա ընկնելու փոխարեն, մի նոր ողբերգության չտանի նրանց: Առաքելյանը գրում է. «Որքան

¹⁰ Նույն տեղում, 1907 թ., N 68:

¹¹ «Մշակ», 1907 թ., N 145:

¹² Նույն տեղում, 1907 թ., N 106:

¹³ Նույն տեղում, 1907 թ., N 108:

հայտնի է, երիտթուրքերի ծրագիրը բացասում է առանձին ազգություններին կամ ժողովուրդներին որևէ ավտոնոմիա տրամադրելու գաղափարը: Նա պահանջում է ընդհանուր ռեֆորմներ ամբողջ օսմանյան կայսրության համար, նա ճանաչում է միայն օսմանյան քաղաքացի և ոչ թուրք, քուրդ, հայ, հույն...: Պետք է լինի մի ընդհանուր օսմանյան պետություն, մեծագոր Փաղիշահի գայիսունի ներքո, իսկ տիրապետող կրոնը պետք է լինի իսլամը: Արդյոք այդպիսի հանգամանքներում ջուրը չեն ընկնում թե Բեռլինի, թե Կրետեի դաշնագրերով և թե մայիսյան ծրագրերով հայերին խոստացաված ռեֆորմները, ապահովությունները, հայերի ձեռք բերած միջազգային իրավունքները»¹⁴: Տա աստված, որ թույլատրվի պանդուխտ հայերի վերադարձը դեպի իրենց հայրենի հողը, իսկ հայ հեղափոխականները երիտթուրքերից սովորեն լռելյայն, շրջահայաց գործելու առաքինությունը եզրափակում է Առաքելյանը:

«Ձգուշացեք չափազանցություններից» առաջնորդողում Յ. Առաքելյանը գրում է. «Ձգուշացեք, եթե չեք կամենում վտանգված տեսնել թուրքահայերի ազատագրության գործը: Թուրքիան մինչև այսօր մի կատարյալ դժողոք էր ոչ միայն հայերի, այլև այդ պետության ամբողջ ազգաբնակչության համար: Ոչ մի անհատ այդ դժոխքում չուներ ոչ կյանքի, ոչ գույքի, ոչ պատվի ապահովություն, այստեղ չկար քաղաքացի, այլ կար հպատակ, ստրուկ, զրկված կյանքի ամենատարրական իրավունքներից: Եվ թե հայերը, թե մյուս տարրերը և ցեղերը ձգտում են մի նպատակի՝ ձեռք բերել մարդկային գոյության տարրական իրավունքներ, բայց դրանք ձեռք բերելու համար հայերը և մյուս ժողովուրդները սոսկալի, զարհուրելի զոհեր տվին և ահա հանկարծ, բոլորովին անակնկալ կերպով ծագում է Թուրքիայի վրա ազատության արշալույսը: Չայերը հիմա գոհ պիտի լինեն, եթե նոր ռեժիմը հնարավորություն տա իրենց զարգացնել հայոց լեզուն, գրականությունը, դպրոցները, և ձեռք բերել ընդհանուր քաղաքացիական իրավունքներ, համահավասար պետության բոլոր մյուս տարրերի հետ և պահպանել իրենց նախկին ինքնավարական իրավունքները...¹⁵: Ահա և շրջահայաց մոտեցում ռամկավարների կողմից, ասել է թե ժամը չի ամպագոռգոռ հայտարարությունների և անիրականալի պահանջների: Նա օրինակ է բերում հույների, որոնք ավելի շրջահայաց են, հանդես չեն գալիս հեղափոխական կոչերով, ահա ինչու թուրքերը մեծամասամբ հարձակվում էին հայերի վրա՝ նրանց որակելով հեղափոխական տարրեր»:

Եվ չնայած դաշնակցության և հնչակյանների ցնծությանը, թե նաև

¹⁴ «Մշակ», 1908 թ., N 153:

¹⁵ Նույն տեղում, 1908 թ., N 185:

իրենց օգնությամբ են երիտթուրքերն իշխանության գլուխ գալիս, ողբերգական էր 1909-ի Ադանայի կոտորածը, երբ մեկ օրում թուրքական յաթաղանի զոհ դարձան շուրջ 30 հազար հայեր, իսկ երիտթուրքերի պատասխանը, թե դա թյուրիմացության արդյունք էր, հնչում էր զավեշտական: Ռուսական թերթերի հարցազրույցները նախկին մշակական, իսկ այդ օրերին դաշնակցական հաչատուր Մալումյանի (էր. Ակնունի) հետ լույս էր սփռում իրադարձությունների վրա, որ ցանկության դեպքում երիտթուրքերը կարող էին հեշտությամբ կանխել այդ կոտորածը: Յ. Առաքելյանի եզրակացությունը, թե մեծ տերությունների բոլոր նավերը մոտենում են Կիլիկիայի ափերին միայն իրենց բաժինը պոկելու համար¹⁶: Համարներ անց Առաքելյանը «Հայկական ահռելի աղետը» հողվածում գրում է. «Բովանդակ հայությունը պետք է ընկղմվի խորին սուգի մեջ, ի լուր այն սոսկալի ջարդերի, որոնց ենթակա է այժմ հայ ժողովուրդը՝ խռովություններով, ապաստամբությամբ ավելոժվող, տարուբերվող Թուրքիայում»¹⁷: Բայց ինչու՞ միայն հայերին են ջարդում, հարցնում է Առաքելյանը և պատասխանում, թե դա նախօրոք նախատեսված էր, և որ դրա մեջ նաև սուլթանի մատն էր խառն:

«Ստքեր և փաստեր» բաժնում Առաքելյանը խոսում է հայերի շրջահայացության մասին, որովհետև, ըստ հողվածագրի, և՛ Թուրքիայում, և՛ Պարսկաստանում, և՛ Ռուսաստանում հալածվում է հայկական տարրը, իսկ պատճառը նա համարում է դաշնակների և հնչակյանների սխալ, չմտածված վարքագիծը¹⁸:

«Թուրք կառավարությունն ու հայերը» առաջնորդողում Առաքելյանը պնդում է, որ սահմանադրական Թուրքիայում հայերի վիճակը մազաչափ անզամ չի փոխվել: «Քրդերի հարստահարությունները, ոճրագործությունները հայերի դեմ անխափան շարունակվում են: Հայերը առաջվա նման մորթոտվում են, կողոպտվում: Տարբերությունը նախկին համիդյան բռնապետական և այժմյան «սահմանադրական» ռեժիմների մեջ այն է, որ առաջ հայերը երկյուղ էին կրում բողոքել և անմունչ տանում էին իրենց խաչը, իսկ այսօր թեև նրանք «ազատություն» են ստացել բողոքելու, բայց այդ բողոքը ոչ մի հետևանք չունի»¹⁹:

«Բազմաչար Հայաստանը» առաջնորդողում նորից Առաքելյանը շոշափում է կոտորածների հարցը, որոնք ահագնում էին օրեցօր, թուրքն ու քրդերն իրենց իրավունք էին վերապահում կոտորելու հայերին, որովհետև նրանք իրենց խլված հողն էին ետ ուզում, իսկ հայությանը մեղադրում էին,

¹⁶ «Մշակ», 1909 թ., N 70:

¹⁷ Նույն տեղում, 1909 թ., N 73:

¹⁸ Նույն տեղում, 1909 թ., N 109:

¹⁹ «Մշակ», 1911 թ., N 59:

թե նրանց եվրոպական տերությունները պաշտպանում են: Առաքելյանը սա զավեշտ է համարում և գրում, թե 1878-ից սկսած հային ոչ մի թիզ հող չի տրվել, որ սա միայն պատրվակ է, իսկ ինքնապաշտպանության համար գոնե հայերին պիտի թույլատրվի զենք կրել, զինավորվել և սա ոչ թե դաշնակցականները պիտի կարգավորեն, այլ պատրիարքարանը, օրինավոր մյուս կազմակերպությունները²⁰:

1913-ի N 1-ում թերթը հայտնում է, որ Յ. Առաքելյանը Պողոս Նուբար փաշայի հրավերով մեկնել է Փարիզ, ուր խորհրդակցություններ էր ընթացնում դիվանագիտական աշխարհում հայկական հարցին նպատակահարմար ընթացք տալու համար: Այս խորհրդակցությանը մասնակցում էին նաև Մինաս Չերազը, Աղթուն բեյը, Վիկտոր Բերնարը, Արշակ Չոպանյանը, ովքեր մեծ գործ էին կատարելու, որպեսզի ֆրանսերեն լեզվով մեր պահանջները ներկայացվի ֆրանսիական կառավարությանը:

«Մշակը» տպագրել է Յ. Առաքելյանի Փարիզից ուղարկված հոդվածը, որը վերաբերվում էր Փարիզի «Տեմպս» լրագրի մի հաղորդագրությանը՝ նվիրված ռուսական կառավարության որոշմանը²¹, ըստ որի կառավարությունը բարեհաճ դիրք է բռնում դեպի հայ ժողովրդի պահանջները և որոշել է ամեն կերպ իրագործել տալ ռեֆորմներն Արևմտահայաստանում: Դեսպան Իզլովսկին ցանկություն է հայտնել Առաքելյանին, որ այս լուրը հասնի համայն հայությանը, թե կայսրական կառավարությունը, հետևելով իր դարավոր ավանդությանը և համակված խորին համակրությամբ դեպի հայ ժողովրդի տանջանքներին, մտադիր է ապագայում ևս բարեհաճ դիրք բռնել Թուրքիայի հարստահարյալ հայ ժողովրդի կարիքների նկատմամբ²²:

«Անհրաժեշտ է համերաշխություն» առաջնորդողում Յ. Առաքելյանը քննության է առնում կաթողիկոսի պատգամավորության պարտականությունները և այն եզրակացությանը հանգում, որ անհատ, մասնավոր, կուսակցական շահը այլևս մի կողմ պետք է ձգել, հասել է ժամը, որ բոլորս միասին մտածենք երկու միլիոնից ավելի մեր եղբայրների ապագայի մասին: Դա նշանակում է, որ պետք է հասնել այն բանին, որ այդ երկու միլիոնն ունենա կյանքի, գույքի, պատվի ապահովություն, ունենա կուլտուրական ազատ զարգացման հնարավորություն, ապրեն իբրև մարդ: «Եկել է այն ժամը, այն րոպեն, երբ բոլոր կուսակցական մասնավոր շահերը, նկատառումները պետք է լռեն և տեղի տան ժողովրդի, ազգի ընդհանուր շահերի առաջ»²³:

²⁰ Նույն տեղում, 1911 թ., N 196-197:

²¹ «Տեմպս», 1913 թ., 4 հունվարի:

²² «Մշակ», 1913 թ., N 3:

²³ Նույն տեղում, 1913 թ., N 24:

«Զուր եք զուօ հայցում» առաջնորդողում Առաքելյանը շոշափում է այն հարցը, թե ինչպես էվրոպայում թուրքերն աղաղակում են, թե սերբերը, բուլղարները, հույները գազանաբար են վարվում իրենց հանդեպ: Նա շարունակում է. «Այսօր արդարադատությունը, պատմությունը կարծեք կամենում է վրեժխնդիր լինել: Այսօր, իրենք, թուրքերը ստիպված են օգնություն հայցել, ստիպված են էվրոպայի միջամտությունը պահանջել, և ոչ ոք արձագանք չի տալիս նրանց կոչին ու պահանջին: Դուք,- շարունակում է Առաքելյանը,- ժամանակին չխնայեցիք մի թշվառ, մարտիրոս ժողովրդի, դուք տասնյակ տարիներով ամենափոքր ուշադրություն չդարձրիք նրա լաց ու կոծին, դուք չկամեցաք ամենափոքր ամոքումը տալ նրա ցավերին, դուք չհասկացաք, ավաղ, այն հավիտենական ճշմարտությունը, թե «ինչ որ կամենում ես, որ մարդիկ անեն քեզ, նույնը արա դու նրանց»: Եվ այսօր համաշխարհային արդարադատությունը ևս փակել է իր ականջները ձեր լաց ու կոծի, ձեր բողոքների առաջ: Ինչ որ սերմանեցիք, այն էլ հնձում եք այսօր»²⁴:

1913-ի N 234-ը հայտնում է Ալեքսանդր Քալանթարի մահվան լուրը, ով Րաֆֆու մահվան 25-ամյակի տարելիցին, նրա գերեզմանին ճառ արտասանելիս՝ հանկարծամահ եղավ: Նրա մահից անմիջապես հետո ցարարական իշխանություններն արդեն վստահեցին Յ. Առաքելյանին և նրան հաստատեցին «Մշակի» խմբագրի պաշտոնում և ընդամենը համարներ անց նա ««Մշակն» այսուհետև» առաջնորդողում²⁵ հայտնում է, թե «թերթի էջերն այսուհետ բաց են լինելու նորագույն դեմոկրատիայի կուլտուր-ազատական շարժման, առաջադիմության գաղափարների առաջ, նույնիսկ այն դեպքում, եթե սկզբունքային տարբերություններ լինեն մեր աշխարհայացքների միջև, բավական է, որ այդ աշխարհայացքների տարբերությունն ուղղված լինի դեպի ժողովրդի բարօրությանը»: Նա կոչում է ազգային համերաշխություն և միություն, որովհետև այդ են պահանջում ժողովրդի շահերը:

Այս հայտարարությունից անմիջապես հետո «Մշակի» գլխավոր աշխատակից դարձավ Ա. Ծիրվանզադեն, թերթի Մոսկվայի թղթակից դարձավ Վահան Տերյանը, աշխատակիցներ՝ հռչակավոր գրականագետ Սուրխաթյանը և Ալ. Քալանթարի որդի Լևոն Քալանթարը...

«Մեր երախտագիտությունը» առաջնորդողում Առաքելյանն անդրադառնում է Պողոս Նուպար փաշայի հեռագրին, որը նա Փարիզից հղել է կաթողիկոսին, որով շնորհավորում է համաձայնության կնքումը Հայաստանի բարենորոգությունների հարցում: «Ճիշտ է,- գրում է Առաքելյանը,- որ համաձայնությունը գործի սկիզբն է, ճիշտ է, առայժմ միայն թղթի վրա է այդ

²⁴ Նույն տեղում, 1913 թ., N 34:

²⁵ «Մշակ», 1913 թ., N 243:

համաձայնությունը ստորագրված, կյանքի մեջ դեռ չեն օգտագործվում այդ ռեֆորմները, ճիշտ է, այդ ռեֆորմները շատ չնչին են համեմատաբար առաջարկված ծրագրերին, բայց չի կարելի ուրանալ, որ նրանք, այնուամենայնիվ, կտան Թուրքիայի բազմաչարչար հայ ժողովրդին ապրելու, զարգանալու ապահովություն, եթե... բարեխղճորեն գործադրվեն»²⁶: Նա նաև շնորհակալություն է հայտնում հայ մեծ բարերար Պողոս Նուպարին մեծ տքնանքի գնով շրջափելի արդյունքի հասնելու համար:

Սակայն ուրախությունը շատ կարճ տևեց: Ծուտով թերթը հայտնում է, թե Էրզրումի, Դիարբեքիի վիլայեթներում թուրքերն արհեստականորեն քրդական շարժումներ են հրահրել (իբր հարկերի բարձրացման դեմ), սակայն որն ուղղված է հայերին կոտորելու խնդրին: Բիթլիսում հայերը զինաթափ են արվել, որը նշանակում էր, թե քավության նոխազ նորից հայերն են դառնալու: Եվ «Կոմեդիան վերսկսվում է» առաջնորդողում Առաքելյանը գրում է. «Քրդերի խլրտումները, ապստամբությունը Բիթլիսի շրջանում անմիջապես ռեֆորմների ծրագիրը հրատարակելուց հետո ոչ մի կասկած չեն թողնում, որ թուրքաց կառավարության կամ Աբդուլ Համիդի ռեժիմի նախկին կոմեդիան վերսկսվում է»²⁷: Ըստ Առաքելյանի դա առերես խաղ է, ուրիշ ոչինչ, իբր մենք ուզում ենք ռեֆորմ, բայց քրդերը դեմ են: Եվ մեկ ուրիշ տխուր լուր: Թերթը հայտնում է, թե Թուրքահայաստանի վերատեսուչներ Յոֆը և Վենստենեկը սպառնում են հեռանալ Թուրքիայից, որովհետև իշխանությունները հրաժարվում են իրավունք տալու նրանց փոփոխել վալիներին, այլ պաշտոնյաների և նրանց տալ զինվորական-քաղաքացիական լիազորություններ²⁸:

Ծուտով թերթը հայտնում է, թե սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որի մեջ ներքաշվել են Ավստրիո-Հունգարիան և Սերբիան, նաև հաղորդագրություն, թե մեծ զորահավաք է հայտարարված Ռուսաստանում, իսկ 1914-ի հուլիսի 20-ին լուրը ցնցեց ողջ աշխարհը, երբ հայտնի դարձավ, որ Գերմանիան է սկսել պատերազմը Ռուսաստանի դեմ:

Համբարձում Առաքելյանը «Ներկա պատերազմը և հայ ժողովուրդը» առաջնորդողում գտնում է, որ հայը պետք է հավատարիմ հպատակի պես կռվի հանում Ռուսաստանի, քանի որ սա միակ քրիստոնյա երկիրն է, որ հոգացել է մեր ցավերը՝ հույսի, փրկության և ազատագրության համար և այն, որ Ռուսաստանի կողմից այս պատերազմն ազատագրական է, որովհետև Գերմանիան ուխտադրուժ հարձակում է գործել նվաճելու համար, որը Առա-

²⁶ Նույն տեղում, 1914 թ., N 27:

²⁷ «Մշակ», 1914 թ., N 65:

²⁸ Նույն տեղում, 1914 թ., N 98:

քելյանն ագրեսիա է անվանում²⁹: Նա նաև ուրախությամբ արձագանքում է Ռուսաստանի և Ֆրանսիայի հաղթական ծակատամարտին, երբ գրավում էին Լվովը, Լեմբերգը, նաև ծիշտ գուշակություն անում, թե թուրքերն անգլիացի մասնագետներին վճռում են երկրից, նրանց փոխարինելով գերմանացի սպաներով, իսկ պատրաստությունը, ըստ Առաքելյանի, միմիայն Ռուսաստանի դեմ է և համարում է, թե ժամն է հատուցման, երբ արևմտահայ գրկանքներ տեսած տարրն էլ վերջապես կստանա իր ազատությունը:

«Արթնացումը գալիս է» առաջնորդողում Յ. Առաքելյանը միամտորեն հայտարարում է, թե գերմանական սոցիալ-դեմոկրատները պաշտպանում են Վիլիեմ կայսրին պատերազմի և գազանությունների հարցում և գտնում, որ նրանք այդ քայլով թաղում են Մարքսին և Բեբելին: Կան առաջավոր մտածողներ, որոնք իսկապես քննադատում են կայսրին ու նրա քաղաքականությունը, իբրև համանվիրոպական չարիքի սկզբնաղբյուրի: Ուրեմն արթնացում կա³⁰: Եվ ամենախայտառակը՝ թուրքական իշխանությունն արդեն նույնիսկ պատրիարքական արտոնություններն է ջնջում: Սա և ազգային ժողովի վերացումը նա անվանում է բռնավոր և անօրեն ակտ, բայց որին սպասել, իսկապես, պետք էր:

Առաքելյանն անդրադառնում է Ատրպատականի հայերի գաղթականության հարցին, որը մեծ հարված էր հայկական դատին: Նա կոչ է անում հայությանը գաղթելու փոխարեն Ռուսաստան մեկնած հայերը վերադառնան հայրենիք և ամեն միջոց ձեռք առնեն զենք ձեռք բերելու համար և ռուսական զորքի հետ ձեռք ձեռքի տված պաշտպանեն իրենց օջախը թուրքերի և քրդերի հարձակումից: Իսկ 1914-ի հոկտեմբերի 18-ին հայտնում է, թե Թուրքիան հարձակվել է Ռուսաստանի վրա, առանց պատերազմ հայտարարելու: Սա ուրախալի լուր էր հայության համար, որովհետև վերջապես հնարավորություն էր ստեղծվում ազատագրելու Արևմտյան Չայաստանը թուրքական լծից: Նա գրում է. «Այն օրից, որ թուրք պետականությունը ոտք կոխեց Եվրոպա և Ասիա, նա հանդիսացավ միայն իբրև կործանարար ուժ, ոչ մի շինիչ, ստեղծագործ հատկություն և ընդունակություն նա ցույց չտվեց: Նա ավիրեց, ամայացրեց, մոխիրով ծածկեց պտղավետ, արգավանդ դաշտերը, ամբողջ երկրներ նա մարդկային դիակներից լեռնակույտեր ստեղծեց իր կոտորածներով, նա մարդկային արյան վտակներով ոռոգեց իր ավիրած երկիրները: Նա հանդիսացավ մի տեսակ զանգրեն քաղաքակիրթ մարդկության մարմնի վրա, մի փտախտ, որ պետք է կտրել և դեն նետել, առողջ

²⁹ Նույն տեղում, 1914 թ., N 160:

³⁰ «Մշակ», 1914 թ., N 202:

մարմինը վարակումից ազատելու համար»³¹: Ըստ Առաքելյանի, հիմա հասել է ժամը, որ վերջ դրվի թուրքական իշխանությանը, և ազատելու բազմաթիվ կոլտուրական ազգեր ու ժողովուրդներ նրա զգվելի լծից:

«Հանգանակիչ մասնաժողովի անհրաժեշտությունը» հոդվածում էլ Առաքելյանը գտնում է, որ ռուսական զորքի կողմից գրաված Ալաշկերտի, Բայազետի և Էրզրումի շրջաններում տեղական հայ ժողովուրդը թալանված ու կողոպտված է, ահա ինչու, բացի վիրավորներից, որոնց օգնություն է ցուցաբերվում, կամավորների ընտանիքներից, հոգալ է պետք նաև այդ հատվածի ցավերը: Ահա ինչու, ըստ նրա, կաթողիկոսն անմիջապես պիտի վերականգնի «հանգանակիչ հանձնաժողովի» գործունեությունը և ռուսահայերի օգնությամբ հոգա այդ տառապյալ ժողովրդի ցավերը³²:

Ստեղծվում էին հայ կամավորական խմբեր, որոնք մեծ օգնություն էին ցուցաբերում ռուսական զորքին: Կամավորական չորս խմբերից ամենամեծն ու պատրաստվածը գործում էր թուրք-պարսկական սահմանագլխին, որի հրամանատարն էր Անդրանիկը: Իր օգնական Սամսոնի հետ փաշան կանչվել է ռուս զեներալի մոտ, ով հայտարարել է, թե ինքը հավատում է հայերի հավատարմությանը, ում Անդրանիկը պատասխանել է՝ «Խումբը դրա համար էլ եկել է, որպեսզի զոհի իր կյանքը թշնամուն հաղթելու համար»:

Ահեղ պայքար էր գնում հայ կամավորների և թուրքական կանոնավոր զորքի միջև: «Մշակը» ուրախությամբ արձագանքում է, թե սպանվել է թուրքաց 34-րդ դիվիզիայի պետը, 88-րդ գնդի հրամանատարը, զորքի 45 տոկոսը: Քեռու խումբն ընդամենը 6 զոհ է տվել, վիրավորվել են 2 հայ:

1915-ի N 1-ում Առաքելյանը գրում է. ««Մշակը» նոր տարին չի շնորհավորում, որովհետև գտնում է, որ հայության համար այժմ նոր տարի չկա, բայց մաղթում է տոկունություն, արիություն այն տառապանքների ու տանջանքների մեջ, որոնք նրան բաժին է ընկել, որովհետև միայն արիությամբ, տոկունությամբ կարելի է հաղթահարել բոլոր փորձություններն ու տառապանքները և ստեղծել լավագույն ու երջանիկ ապագա»: Բայց և նույն համարում հայտնում, որ փախստականների թիվն արդեն 80 հազարի է հասել և՛ Պարսկաստանից, և՛ Թուրքիայից:

«Մշակը» ցավով է հայտնում, որ Ռուսաստանի կառավարության նոր որոշման համաձայն հակառակորդ պետությունների հպատակները մինչև 1915-ի ապրիլի մեկը պետք է թողնեն Ռուսաստանի սահմանը: Սա նշանակում էր, որ Սև ծովի ափերին ծվարած 60 հազարից ավելի հայերը, որոնք 30 տարուց ավելի ապրում են Աբխազիայում, Աջարիայում, մշակել են հողը,

³¹ «Մշակ», 1914 թ., N 235:

³² «Մշակ», 1914 թ., N 247:

բարիքներ ստեղծել նույնպես պիտի գաղթեն, բայց ուր...: Առաքելյանը սա մարդատյացություն է որակում, բայց և նույն համարում³³ ողջունում այդ օրերին էջմիածնում կայացած համագումարի որոշումը, ըստ որի կաթողիկոսի գլխավորությամբ ստեղծված Գլխավոր Կարգադրիչ կամ Կենտրոնական հանձնաժողովը՝ բաղկացած 7 հոգևորական և 8 աշխարհական ընտրյալ ներկայացուցիչներից, հոգալու է փախստականների գործերը: Որոշմանը, սակայն, դեմ են արտահայտվել Ընդհանուր Բարեգործական ընկերությունն ու նրա կենտրոնական կոմիտեն, Տնայնագործական ընկերությունը, որոնք իրենց իրավունք են վերապահել, անկախ նոր ստեղծված օրգանից, շարունակելու իրենց գործունեությունը փախստականների համար: Նորից տարածայնություն ու ամոթ:

Թերթը հաղորդում է, թե Վանում կենտրոնացված են թուրքական մոտ 20 հազար կանոնավոր զինվոր և 10 հազար բաշիրզուկ: Քաղաքում քրիստոնյաների կոտորածը դեռ չի սկսվել, բայց խիստ միջոցներ են ձեռք առնված քրիստոնյա գործիչների փոխադարձ հարաբերությունները խզելու համար: Մթերքն ու անասունները խլված են հայերի ձեռքից, կրպակներն ու խանութները փակ, փողոցում զորքը խլում է նույնիսկ բնակիչների զգեստները:

1915-ի ապրիլի 9-ին «Մշակը» հաղորդում է, թե սիստեմատիկ կոտորած է էրզրումում, Ջեյթունում և շրջակա գյուղերում: Արյունահեղ ընդհարումներ են Բիթլիսում, Վանում և Մուշում: Կիլիկիայում ապստամբություն է: Բռնություններ և սպանություններ են Ակնում և ամբողջ փոքր Հայքում: Իրադե է հրապարակվել իշխանությունը զինաթափել հայ զինվորներին և բնակիչներին: Միակ փրկությունը եվրոպական տերություններին բողոքելն է, սակայն պատերազմական այդ դրության մեջ հայերի բողոքներին ո՞վ է լսելու:

Եվ ապրիլի 26-ի հեռագիրը Ջուլֆայից. «Ստացված հաստատ տեղեկությունների համաձայն Վանի հայերի մեծ մասն ընտանիքներով ապաստան են գտել ամերիկյան միսիայում, որին նույնպես վտանգ է սպառնում: Հայերը հերոսաբար պաշտպանվում են և դրսի օգնության սպասում: Ջավիդ փաշան անընդհատ ռմբակոծում է քաղաքը, այն պաշարված է քրդական հրոսախմբերով: Վանի շրջակա գյուղերն գլխովին սրի են քաշված: Իշխանը սպանված է, Վռամյանն աքսորված»: Աբգար Պայազատը խնդրում է ռուսական զորքին անհապաղ օգնության հասնել վանեցիներին, այլապես կոտորածն անխուսափելի է: Նրանց միայն ռուսների օգնությունը կփրկի:

Հայոց կաթողիկոսը դիմել է Վորոնցով-Դաշկովին, արտաքին գործոց

³³ «Մշակ», 1915 թ., N 50:

Նախարար Մազոնովին, ուր ասվում է. «Ստացված տեղեկությունների համաձայն տեղի է ունենում անպաշտպան ու անզեն հայերի կոտորած էրզրումում, Դերջանում, Ջեյթունում և շրջակայքում, արյունահեղ ընդհարումներ Բիթլիսում, Վանում, Սուշում, բռնություններ, թալան, սպանություններ Ակնում, Կիլիկիայում»: Միաժամանակ նա դիմել է չեզոք պետություններին. Իտալիայի թագավորին՝ պաշտպանել ոչնչացող խաղաղ բնակչությանը: Թերթն առաջարկում է հրապարակ հանել բոլոր այն երիտասարդ ու անձնագրի ուժերը, որոնք ընդունակ են ռազմի դաշտ դուրս գալու: Կամավորների լեգիոնները պիտի տարածվեն Արաքսից մինչև Եփրատ, Տավրոսից մինչև Պոնտոսյան լեռները: Իսկ անձնագրի մարտիկների զինման ու պարենավորման գործը պետք է չափազանց արագ կազմակերպել: Բուպեն շատ թանկ է, մանր, չարչիական հաշիվների ժամանակը չի, պետք է բացվեն քսակները: «Ըքեղ պալատներում առատության մեջ ապրող հայ մեծատունները գոնե այս անգամ ցույց տան, որ մեռած չի ընդմիշտ իրենց կրծքի տակ գտնվող սիրտը»³⁴:

Շուտով թերթը հայտնում է, թե Վանում ձերբակալվել են հնչակյան գործիչներ Աբրահամ Բրուտյանը, Արտավազդ Սուլաքյանը, Տիգրան Օտյանը (Ասո) և Հմայակ Արամիզյանը: Նրանք բանտում խեղդամահ են արվել: Պոլսի բանտում բանտարկված հնչակյաններ Փարամազը, Ռուբեն Կարապետյանը ենթարկվում են չարաչար տանջանքների: Դավադրության մեջ մեղադրվող Սապահ-Գուլյանին, Վարազդատին և այլ գործիչների դատապարտում են մահվան³⁵:

Վան և Մանազկերտ է մեկնել Համբարձում Առաքելյանը տեղում հայ թշվառների վիճակին ծանոթանալու համար որպես նպաստամատույց ընկերության փոխնախագահ: Նա տպագրության է ուղարկում Վանի նոր ստեղծված շրջանային վարչության դիմումը հայությանը, ուր խնդրվում է օգնության հասնել իրենց շրջանի ծով կարիքներին, ով որքան կարող է: «Անթիվ են հիվանդների և սննդի կարոտ հայ դժբախտների թիվը: Չկան երկրագործության գործիքներ, օգնեք ինչով կարող եք»³⁶: Նույն համարում հայտնվում է, թե անտանելի է ձերբակալված հայերի վիճակը, մանավանդ Խաչատուր Մալումյանի (Էդ. Ակնունու), որ միամտաբար խնջույքի էր Թալեաթ և Էնվեր փաշաների հետ ապրիլի 23-ի գիշերը և ապշահար էր եղել, թե իր ձերբակալությունը թյուրիմացություն է, թե այս անիրավությանը հաստատապես տեղյակ չեն երիտթուրքերի պարագլուխները:

³⁴ «Մշակ», 1915 թ., N 100:

³⁵ «Մշակ», 1915 թ., N 122:

³⁶ Նույն տեղում, 1915 թ., N 142:

«Դժոխային ծրագիր» առաջնորդողում Առաքելյանը համոզվում է, թե թշնամին վճռել է արմատապես ոչնչացնել, ջնջել հայ ժողովրդին: Մասսայական կոտորածները բավարար չհամարելով, նրանք կոտորածից զերծ մնացած ժողովրդին քշում են դեպի Յալեպ, դեպի անապատ, որը գերմանացի Ռորբախի ծրագիրն է, բայց նա նաև լավատես է, թե այսպիսի շատ դժբախտություններ է տեսել հայը, բայց չի հուսահատվել: Յասել է բռնակալի տապալման ռուպեն, որ բերել է տանջանքների մեջ գտնվող թուրքահայության փրկությունը³⁷: Իսկ հույս ու հավատ էր ներշնչում միմիայն ռուսական բանակի նորանոր հաջողությունները հայկական վիլայեթներում:

Թերթը հայտնում է, որ ազատագրվել է Վանը, Արմենակ Եկարյանը նշանակվել է Վանի գավառական ոստիկանության ընդհանուր հրամանատար, իսկ վանեցիները երախտագիտորեն Փանոս Թերլեմեզյանի ամենահաջողված «Վարագա լեռան տեսարանը ձմեռվա ձյունով» կտավը նվիրել են ռուս զեներալին:

Առաքելյանը գտնում է, որ Արևմտահայաստանում այլևս հայ չի մնացել, խոսքը միայն այն 100 հազարավոր փախստականներին է վերաբերում, ովքեր Արևելահայաստանում են, իսկ կաթողիկոսի՝ քաղաքներում շրջագայելն ու դրամահավաքը աննպատակահարմար է համարում և դիմում ողջ հայությանը չխնայել ոչինչ նրանց օգնություն հասնելու համար: Իսկ «Մշակի» գլխավոր աշխատակից դարձած Ծիրվանզադեն «Դուք կեղծում եք» հոդվածում³⁸ քննադատել է այն հարուստներին, որոնք կոկորդիլոսի արցունք են թափում, թե նրանք այնքան դրամ չունեն, որքան հասարակությունը կարծում է: Ուրիշ խոչընդոտ. հայտարարում են թե չենք տալիս, որովհետև չենք հավատումն ոչ ձեզ, ոչ էլ ձեր ձեռնարկած գործերին: «Իսկ կաթողիկոսը, մի՞թե նրան էլ չեք հավատում,- հարցնում է Ծիրվանզադեն»: Թերթի աշխատակիցներ Տիգրան Նազարյանը և Բ. Մկրտումյանը պնդում են, թե նախ պետք է փախստականների առաջ բացել բոլոր դպրոցների դռները, ապա ջարդել վարձով տնատերերի կամակորությունը, որովհետև ժողովրդին ապաստան է պետք, իսկ մենք նորանոր արգելքներ ենք բացում նրանց առաջ:

1915-ի հուլիսի 7-ից 20-ը Յ. Առաքելյանի էսսեն են տպագրում «Տանջված Յայաստան» վերնագրով, որն արդյունք էր Թուրքահայաստան կատարած նրա ուղևորության: «Զսպեք ձեր ագահությունը» առաջնորդողում Առաքելյանի ուշադրության թեման այդ ծանր օրերին, երբ երկիրը ճկում էր աղետների ծանրության ներքո, երբ փախստականների սոսկալի հոսանքը պայթել է Արևմտահայաստանի գլխին և համատարած սուգ ու շիվան է,

³⁷ Նույն տեղում, 1915 թ., N 152:

³⁸ «Մշակ», 1915 թ., N 160:

պետք է չափավորել անձնական փոխառությունները նրանց, որոնք սահմանափակ իրենց փոխառած, հնացած ապրանքներից հարյուր հազարներ են աշխատել և դրանից գոնե մի տոկոս չեն տվել հոգուտ տառապյալ ժողովրդի, որից վերցրել են այդ հարյուր հազարները: Առաքելյանը դիմում է իրավասու մարմիններին, թե պետք է կտրուկ միջոցներ ձեռնարկել արհեստականորեն ստեղծված թանկության առաջն առնելու համար:

Տրապիզոնից հաղորդում են, թե 14 հազար հայերից միայն 100-են ազատվել կոտորածից, իսկ Պոլիսի ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուին հանձնարարվել է հայտնել Թուրքիայի արտաքին գործոց նախարարին, որ եթե իր երկրում չդադարեն հայկական կոտորածները, կխզվեն բարեկամական կապերն այդ երկրի հետ: Իսկ Յ. Առաքելյանն ու Ծիրվանզադեն նոր կազմակերպություն են պահանջում ստեղծել, որը հոգա Չայաստանի ապագա բախտը: Ըստ նրանց պիտի համախմբվեն աշխարհի բոլոր երկրների խելացի հայերը, հրաժարվեն նեղ ազգայնական ու կուսակցական շահերից: Այլ ձանապարհ չկա³⁹:

Իսկ N 227-ը տպագրել է, թե Վանում, ինչպես նաև Չայաստանի մյուս մասերում հայությունը ջնջված է: Չայ ժողովուրդը, որի բնօրրանը Վան-Վասպուրականը, իր քրտինքով ու արյունով ողողել է այդ երկրի ամեն մի քարը, այժմ արյունաբերու բարբարոսի ձեռքով ջնջված է և այդ անմահ երկիրը երկի մի այլ բախտավոր ցեղի հայրենիքի վերածվի:

«Էջմիածնում» հողվածում թերթի գլխավոր աշխատակիցներից Աշոտ Աթանասյանը (Սալ-Ման) գրում է. «Մահվան մղձավանջը անցել, վերացել է: Էջմիածնում այժմ մնացել են ընդամենը 6-7 հազար գաղթականներ: Հիվանդություններն ու մահացությունը շարունակվում է: Օրական մեռնում են 15-20 հոգի, այնինչ գավառներում զոհերի թիվը օրեցօր մեծանում է և սպառնում ընդունել համաճարակի բնույթ: Գաղթականները պետական նպաստ են ստանում շունչը ամսական 4 ռուբլի 50 կոպեկ, որը հազիվ է բավարարում հաց գնելուն, իսկ մյուս բոլոր կարիքները մնում են չբավարարված»⁴⁰:

Եվ խայտառակություն: Ռուսաց կառավարության որոշմամբ Պողոս Նուպար փաշան դատի է տրված կաթողիկոսի հրամանով դրան հավաքելու և կամավորական խմբերին մատակարարելու համար: Տասօրյա ժամկետում եթե նա չներկայանա, կարող են նրան կալանել և հարքունիս գրավել ողջ ունեցվածքը, նույնիսկ ջրանշանները⁴¹:

Ուրիշ խայտառակություն: Թերթը հայտնում է, թե Գերմանիայի Վիլհեմ

³⁹ «Մշակ», 1915 թ., N 216:

⁴⁰ Նույն տեղում, 1915 թ., N 229:

⁴¹ Նույն տեղում, 1915 թ., N 230:

կայսերի հրամանով իր պաշտոնից հրաժարեցրել են Բեռլինում Թեհրանի դեսպան, մեծ Ծեքսպիրի անզուգական թարգմանիչ Յովհաննես Խան Սասեհյանին, այն բանի համար, որ նա ստորագրել է Բեռլինի հայ գաղութի պետիցիայի տակ, որը վերաբերում էր Թուրքիայի Արևմտահայաստանի գործած գազանություններին: Սա արվել է Բեռլինի թուրքաց դեսպանի պահանջով⁴² :

1916-ի առաջին համարում Սարգիս քահանա Ասլանյանն Աստրախանից տպագրել է «Նոր տարի» հոդվածը, ուր գրում է. «Մենք անցած ամբողջ տարի հոգնել ենք լացից, արտասուքից: Մենք հուսահատվել ընկձվել ենք մեզ հասած անհաջող ընթացքից: Մենք թուլացել ենք, անհավատ ենք դարձել դեպի մեր սուրբ և արդար դատը: Ոչ, նոր տարին գալիս է նոր հավատ, նոր հույս ներշնչելու մեզ: Նա մեզ գալիս է ասելու՝ «Հայեր, մի հուսահատվեք, մի ընկձվեք, նույն հավատով ու եռանդով շարունակեցեք ձեր սկսած սուրբ գործը: Խնայեցեք ձեր եղբայրներին, սրբեցեք նրանց արտասուքը և նորից պահանջեցեք ձեր արդար դատը»:

Գևորգ Դարաշյանը «Մի լուսաբանություն» հոդվածում ցավ է հայտնում, որ հայերը նորից չհասկացան իմպերիալիստական պատերազմի նվաճողական բնույթը, երբ փոքր ազգերի կոտորածներն ու կոլ գնալը մեծ երախներում բնական երևույթ է: «Մենք տարվեցինք ամբոխային տրամադրությամբ, ինչպես կասեր իմ հանգուցյալ բարեկամ դաշնակցության հիմնադիր Քրիստափոր Միքայելյանը: Մեծ թե փոքր, կին թե տղամարդ, բանաստեղծ թե հրապարակախոս, ուսանող թե ուսուցիչ, բուրժուա թե քաղաքական գործիչ, տարված այդ ամբոխային տրամադրությամբ, ջանացին մեկը մյուսին գերազանցել իրենց վառ «հայրենասիրությամբ»: Այնինչ պետք էր հասկանալ, որ ավտոնոմիայի ժամանակը չէ, այլ պետք էր մտածել միայն հայ ժողովրդի ֆիզիկական գոյության մասին: Եվ վարպետորեն թալեաթներն ու էնվերները մեր այդ սխալներից օգտվեցին, հայտարարելով, թե ապստամբություններ են բարձրացնում մեր դեմ, մենք էլ լռեցնում ենք»⁴³: Որ Թուրքիան շատ վաղուց հայերի բնաջնջման ծրագիր ուներ, պարզ էր, բայց պետք էր անել ամեն ինչ, որ ժողովուրդը քիչ զոհերով դուրս գար այդ պատերազմից:

Յոչակավոր հայդուկապետ Քեռու մահն է ազդարարում թերթը, ով դեռ Սարգիս Կուկունյանի կռվում է կամավորական եղել, մասնակցել Սասունի կռիվներին Անդրանիկի, Գևորգ Չաուչի և այլոց հետ, մասնակցել հեղափոխական շարժումներին Պարսկաստանում իբրև Եփրեմ խանի օգնական:

⁴² Նույն տեղում, 1915 թ., N 256:

⁴³ «Մշակ», 1916 թ., N 56:

Նա կամավորական խմբի ղեկավար էր Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելու հենց առաջին օրից: Նա էրզրումցի էր և զենքը ձեռքին էլ զոհվեց Ռևանդուզի ճակատամարտում: Թերթը ցավակցությունների շարք է տպագրել 4-րդ գնդի հրամանատար Քեռուն նվիրված, որին հողարկավորել են Խոջավանքի գերեզմատանը⁴⁴:

«Սկանդալ և կոնֆոզ» հոդվածում Մոսկվայի «Մշակի» թղթակիցը հաղորդում է, թե միայն «Ռուսակիե վեդոմոստի» լրագրից իմանում ենք⁴⁵, որ այս բուպեիս Պետերբուրգում հայկական համագումար է տեղի ունենում՝ փախստականների հարցերին նվիրված, որին մասնակցում են միայն 150 հոգի, այն էլ մեծ մասամբ միայն Մոսկվայից, Պետերբուրգից և Յուսիսային Կովկասից: Բուն Կովկասի հայությունը համագումարից դուրս է մնացել: Եվ սրանք պիտի խոսեն ամբողջ հայ ժողովրդի անունից: Չավեշտ է, քանի որ կաթողիկոսը խնդրել էր հետաձգել նիստերը, իսկ Պողոս Նուպար փաշան Յամբարձում Առաքելյանին էր ներկայացուցիչ նշանակել: Նրանք չեն մեկնել Պետերբուրգ, բայց իրենց առաջին ջութակ ներկայացնող մի քանի հոգի, որոնք պատրաստ են զոհել հայ ազգի ամենագերագույն շահերը, համագումարը սկսել են⁴⁶:

Աշոտ Աթանասյանը, ով քաղաքների միության հանձնաժողովի հետ վանում էր, ցավով հայտնում է, թե վանը նորից դատապարտված է, որովհետև թուրքն արդեն Արտամետում է: Եվ նորից փախուստ, այն էլ նույնների ցրտերին և ոչ թե հարյուրներ, այլ 14-15 հազար ժողովուրդ:

«Արձագանքներ Յայաստանից» բաժնում⁴⁷ զետեղել են էրզրումից Յ. Առաքելյանին գրված Չավեն վարդապետի գրությունը, ուր ասվում է, թե համաշխարհային պատերազմում ամենից շատ տուժողը հայ ազգն է. «Երկյուղս գրում են Բարձր Յայքի ամենավիրավոր և ավերակ կենտրոնավայր էրզրումից, չէ թե ավելացնելու կամ վշտացնելու առանց այն էլ Ձերդ մեծապատվություն կսկծալից սիրտն ու հոգին, այլ գեթ քիչ չափով թեթևություն տալու, հուսո մի աղբյուր բանալու խեղճության ու թշվառության, տնից ու վաթանից, թացից ու չորից, բարեկամից ու հարազատներից զրկված, ձմռան ցուրտ ու բուքի ենթակա, քաղցած ու մերկ (գրությունը գրված է 1916-ի դեկտեմբերի 9-ին), անտեր ու անխնամ, թափառաշրջիկ ու կմախք դարձած հայության բեկորներից»: 250 հազար հայերից միայն 30 հազարն են մնացել, այն էլ սովի ճիրաններում: Վարդապետը ցավում է, թե հայը մուրացիկների ազգ չէ, որ ձեռքը զինվորներին պարզի, ուրեմն փրկեք նրանց մահից, գոնե հաց

⁴⁴ «Մշակ», 1916 թ., N 117:

⁴⁵ «Ռուսակիե վեդոմոստի», 1919 թ., 11 մայիսի:

⁴⁶ «Մշակ», 1916 թ., N 113:

⁴⁷ Նույն տեղում, 1916 թ., N 283:

և տաք շորեր առաքելով: Ապա Դեր-Էլ-Չորից լուրն է, թե բոլորը մեռնում են, քաղց է, վարակիչ հիվանդություններ, հարյուրից 20-ն էլ չեն մնում կենդանի: Ծտապ օգնություն է հարկավոր⁴⁸:

1917-ի N 45-ը հայտնում է Ալֆրեդ Տերեմի մահը, ով Վանի նախկին նահանգապետն էր, գնդապետ, ծագումով ֆրանսիացի և Արմենակ եկարյանի հետ մեծ գործ է կատարել ռուսների կողմից Վանն ազատելուց հետո:

Թերթը հայտնում է, որ շուտով Թիֆլիսում հրատարակվելու է մի նոր օրաթերթ՝ «Հայաստան» անվանումով, որին աջակցում են հայտնի խմբապետ Անդրանիկը, դոկտոր Պոնափարտյանը, Զարդարյանը, Յ. Տեր-Յարությունյանը, ովքեր պատկանել կամ պատկանում են դաշնակցական կուսակցությանը: Խմբագրել է թերթը Վահան Թոթովենցը: «Մշակը» ողջունում է Անդրանիկի այս նախաձեռնությունը, որովհետև նոր թերթն ամբողջությամբ նվիրվելու էր թուրքահայ դատին, չի պատկանելու որևէ հոսանքի կամ կուսակցության: «Մշակը» մաղթում է, որ նոր թերթը կարողանա շիտակորեն, անձնվիրաբար ծառայել թուրքահայ հատվածի շահերի և իրավունքների պաշտպանությանը⁴⁹: N 70-ում թերթը հայտարարում է Հայկական նոր քաղաքական կուսակցության՝ Հայ Ժողովրդական կուսակցության, ծնունդը և տպագրում նրա դեկլարացիան: Նրանք ընդունում են Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը որպես Դումայի կողմից ընտրված միակ օրինական իշխանություն:

Ծրագրի հիմնական կետերն են՝

1. Հայ Ժողովրդական կուսակցությունն ընդհանուր պետական հարցերում հարում է ռուսաց ժողովրդավարան Ազատության կուսակցության (կադետական) որպես բարեփոխված ծրագրին:

2. Ազգային հարցում ելակետ ունենալով նույն կուսակցության ծրագիրը՝ Հայ Ժողովրդական կուսակցությունը ընդունում է հետևյալ սկզբունքը: Անդրկովկասի հայաբնակ վայրերում հայերը պետք է ստանան լայն տերիտորիալ-քաղաքական ինքնավարություն իր օրենսդրական մարմնով՝ մնալով Ռուսաստանի անբաժանելի մասը:

Ծանոթություն 1. Անդրկովկասյան ինքնավար երկրների սահմանները որոշելիս, ներկա ադմինիստրատական սահմանները պետք է փոխել ըստ ազգային համախմբումների:

Ծանոթություն 2. Անդրկովկասյան բոլոր ինքնավար երկրներում փոխադարձաբար հարգվելու են փոքրամասնություն կազմող ազգերի ազգային-կուլտուրական իրավունքները:

⁴⁸ «Մշակ», 1916 թ., N 289:

⁴⁹ Նույն տեղում, 1917 թ., N 63:

3. Հայկական հարցը (Թուրքահայաստանը) ընդունելով, որ դա միջազգային հարց է և կարող է լուծում ստանալ միջազգային կոնգրեսում, կուսակցությունը ամեն կերպ պետք է աշխատի, որ այդ հարցը լուծվի ըստ թուրքահայերի ցանկության:

4. Եկեղեցական գործերում կուսակցությունը պահանջում է.

1) Վերականգնել հայոց անկախ եկեղեցու բոլոր իրավունքները:

2) Գումարել ազգային-եկեղեցական ժողով հոգևորականներից և աշխարհականներից՝ հիմնական բարեփոխումներ մտցնելու համար եկեղեցական գործերի մեջ՝ ժամանակակից պահանջների հետ համեմատ:

Ստորագրել են՝ Գեղամ Տեր-Պետրոսյանը, Յ. Առաքելյանը, Ստ. Մալխասյանցը, Գևորգ Մելիք-Ղարաբյոզյանը, Միք. Աթաբեկյանը, Բագրատ Նավասարդյանը, Յովսեփ Դորղանյանը, Հարություն Փիրալյանը, Լևոն Դուլյանը, Անտոն Քալանթարյանը և այլք:

Թերթը տեղ է հատկացրել Անդրանիկի «Հայաստան» թերթի կարծիքին՝ Հայ ժողովրդական կուսակցության մասին, որ հայտարարում է, թե այդ կուսակցության առաջարկը, Թուրքահայաստանի հետ կապած, համարում է պատմական կշիռ ունեցող փաստաթուղթ⁵⁰:

1917-ի հոկտեմբերին կայացած ազգային խորհրդակցության մասնակիցները վերջապես համաձայնության են եկել և կազմել Ազգային խորհուրդ հետևյալ կազմով՝ դաշնակցականների կողմից Ավետիս Ահարոնյան, Ա. Գյուլխանդարյան, Ռ. Տեր-Մինասյան, Խ. Կարձիկյան, Ն. Աղբալյան, Կ. Ղազարյան: Էսէրներից՝ Լ. Աթաբեկյան և Հ. Տեր-Օհանյան: Խորհրդի առաջին նիստում, որ կայացել է հոկտեմբերի 16-ին, նախագահ է ընտրվել Ավ. Ահարոնյանը, փոխնախագահներ՝ Տ. Բեզգադյանը, Ղ. Տեր-Ղազարյանը և Լ. Աթաբեկյանը: Սրանցից բացի ընտրվելու է Ազգային ժողով՝ 35 հոգուց բաղկացած⁵¹:

«Կարևոր լուր» բաժին հայտնում է, որ թուրքերն արդեն մեր հայաբնակ բոլոր գավառները բռնի բնակեցնում են մուսուլմաններով, որպեսզի հաշտության դեպքում ցույց տան, որ բնակչների մեծամասնությունը մուսուլմաններ են: Եվ թերթի ցավալի եզրակացությունը, թե ի՞նչ են մտածում մեր փախստականները, որ չեն վերադառնում իրենց երկիր⁵²: Իսկ ինչպե՞ս վերադառնա մահասարսուռ դեպքերի ականատեսը:

«Թուրքաց Հայաստանի հարցը» առաջնորդողում Առաքելյանը ցավում է, որ հաշտություն է կնքվում Թուրքիայի հետ և, Արևմտյան Հայաստանին,

⁵⁰ «Մշակ», 1917 թ., N 103:

⁵¹ «Մշակ», 1917 թ., N 222:

⁵² Նույն տեղում, 1917 թ., N 258:

իբր ինքնավարություն է տրվում Թուրքիայի շրջանակներում, ուրեմն էլ ի՞նչ Հայաստան⁵³: Իսկ 1918-ի մարտի 3-ի համարում (N 45) թերթը հայտնում է էրզրումի անկման լուրը՝ այն անվանելով մեծ կատաստրոֆա: Ըստ Առաքելյանի, սակայն, սա դեռ սկիզբն է մեծ ողբերգության, թե սրան հետևելու են ավելի մեծ կորուստներ, իսկ վրացիները սա չեն հասկանում, որ միմիայն ձեռք-ձեռքի տալով կարելի է դիմագրավել թե՛ թուրք հրոսակներին, թե՛ բուլղարիկների արշավանքներին:

Եվ նորից սահմակեցուցիչ լուր՝ 1918-ի մարտի 30-ին Վանը հանձնվել է թուրքերին, որտեղ մոտավորապես 25 հազար հայ էր պաաստան գտել: Հանձնվում էին Կարսը, Արդահանը, բայց Առաքելյանը համոզված չէր, թե թուրքերը կբավարարվեն ձեռք բերածով և չեն առաջանա նորանոր շրջաններ գրավելու: Առաքելյանի գուշակությունն իրականություն դարձավ: Մայիսի 15-ին թուրքերը ռմբակոծեցին Ալեքսանդրապոլ քաղաքը և շարժվում էին առաջ: Նրանց նորանոր պահանջները ոչ մի կասկած չէին թողնում, որ կա որոշակի ծրագիր, որի նպատակն է ստեղծել Անդրկովկասում երկու ավտոնոմ մարմին՝ Վրաստան և Թաթարստան կամ Ազարբեջան, իսկ հայաբնակ գավառները միացնել Թուրքիային: Նրանք նույնիսկ արդեն երկաթուղին են գրավել՝ դեպի Ջուլֆա ճանապարհը հեշտացնելու համար:

«Սարսափի օրերը» առաջնորդողում⁵⁴ Առաքելյանը հաղորդում է, թե թուրքերն արդեն արշավում են Ղարաքիլիսայի վրա, գրավում են Ջալալօղլին, իսկ հայերը գլխակորույս փախչում են, ոչ մի դիմադրություն, այնինչ նույնիսկ Ռուսաստան փախչողներին թույլ չեն տալիս ինգուշները, չեչենները: Առաքելյանը կոչ է անում հայությանը պինդ կանգնել մայրենի հողի վրա և մեռնել հայրենիքում: Ըստ նրա 500 հազար թուրքահայ փախստականներին հիմա էլ մի այդքան արևելահայեր են միացել:

1918-ի N 99-ից «Մշակը» բացում է «Հայ-թուրքական զորածակատ» բաժինը, ուր մանրամասն հաղորդագրություններ են տպագրում Ղարաքիլիսայում, Բաշ-Ապարանում և Սարդարապատում ընթացող կատաղի մարտերի մասին:

Թերթը հայտնում է նաև, որ Ազգային խորհրդի պատվիրակությունը՝ Յովհ. Քաջազնունի, Մ. Պապաջանյան, Ալ. Խատիսյան, մայիսի 28-ին մեկնեցին Բաթում՝ ընդունելու Թուրքիայի ուլտիմատումը: Այլ ճանապարհ չկա, ըստ «Մշակի», պետք է համաձայնել նրանց առաջարկներին՝ ազգը փրկելու համար⁵⁵:

⁵³ Նույն տեղում, 1918 թ., N 36:

⁵⁴ «Մշակ», 1918 թ., N 95:

⁵⁵ Նույն տեղում, 1918 թ., N 100:

Չնայած ուշացումով, բայց «Երկու ողբերգական մահ» հաղորդագրության մեջ հայտնվում է «Մշակի» նախկին աշխատակիցներ Տիգրան Զավենի և Մելքոն Կյուրճյանի մահը, որը թերթում հանդես էր գալիս Ծահեն կեղծանվամբ: Տիգրան Զավենը «Մշակին» աշխատաքցելուց զատ Թիֆլիսում հրապարակում էր «Երկրի ծայն» շաբաթաթերթը: Այնուհետև նա Պոլսում հավատաց երիտթուրքերին և այնտեղից մեզ թղթակցում էր Արաբո ստորագրությամբ: Պատերազմն սկսվելուց հետո թերթը լուր չի ունեցել նրանց մասին, միայն հիմա Կյուրճյանի եղբորորդին հայտնել է, թե երկուսն էլ 1915-ին թուրք կառավարության հրամանով դատապարտվել են մահվան, կախաղանի միջոցով, չնայած նրանք հայկական որևէ քաղաքական կուսակցության չեն պատկանել:

Եվ մի հիանալի բացատրություն, թե ինչու գերմանացիք, որոնք թուրքերի դաշնակիցն են, վրացական զորքի հետ մաքրում են Բորչալոյի գավառը մուսուլմաններից և շարժվում դեպի Փամբակ: Բայց այդ միամիտ հարցասերները մոռանում են ազդեցության ոլորտի մասին, չէ՞ որ Լոռվա ձորը հարուստ է հանքային հարստություններով, ուրեմն ինչու՞ այն թուրքերին թողնել⁵⁶:

⁵⁶ «Մշակ», 1918 թ., N 115:

Հայ-ռուսական հարաբերություններն Առաքելյանի գնահատմամբ

Արդեն 1882-ին ցարական իշխանությունների կողմից Յ. Առաքելյանը որակվել էր որպես անբարեհույս տարր այն պատճառով, որ Շուշիում հրատարակվող Սեմյոն Հախումյանի «Գործ» հանդեսի առաջին համարում տպագրել էր կալվածատիրական կարգերի մասին հոդված: Նա որակվել էր որպես սոցիալիստական գաղափարների կողմնակից, ահա ինչու ցարական իշխանությունները մերժեցին նրան «Մշակի» խմբագիր հաստատվել: Բնականաբար, Առաքելյանը դասեր քաղել էր և աշխատում էր հեռու մնալ գրաքննության ուշադրությունից, բայց և պատեհ առիթը բաց չէր թողնում իրեն իրենց անունով կոչել, չէ՞ որ հայատյաց Ալեքսանդր 3-րդ ցարը, Աբդուլ Համիդի հետ ձեռք ձեռքի, կտրել էր երկու Հայաստանների հետ կապը, իսկ ռուսական մամուլի ծախու օրգանները հարմար պահը չէին կորցնում վարկաբեկելու հայերին: Մասնավորապես «Նովոստի» լրագիրը գրում էր, թե հայերը ստախոս են, վատն են, ահա ինչու էլ ճնշվում են սուլթանի կողմից⁵⁷: Խարկովում հրատարակվող «Յուժնի կրայ» լրագրի հոդվածում, որը նվիրված էր հայ մամուլի պատմության 100-ամյակին, լրագրողը վայրահաչում է հայերի հասցեին, թե նրանք անկախություն են ուզում, թագավորություն, իսկ սա հենց թշնամանք էր հայ և ռուս ժողովուրդների միջև⁵⁸.

Նրանցից ետ չէր մնում «Նովոյե վրեմյան»՝ պնդելով, թե հայերը պետականություն չեն սիրում, թե նրանք պարտադիր ռուսերեն պիտի խոսեն, բայց իրավունք չունեն ռուսական գիմնազիաներ, համալսարաններ մտնելու: Նաև ավելացնում էր, թե հայոց կաթողիկոսի աթոռը էջմիածնից Պետերբուրգ պիտի տեղափոխել: Եվ սրան ձայնակցող «Մոսկովսկիե վեդոմոստի», «Գրաժդանին» թերթերն էլ պաշտպանում էին մուսուլմաններին: Եվ թերթի եզրակացությունը, թե, իհարկե, պիտի պաշտպանեն, քանի որ ինչպես սուլթանը, հիմա էլ ռուսական ցարն է շքանշաններ բաժանում թուրք փաշաներին⁵⁹:

Թերթը տպագրել է բանաստեղծ Ալ. Ծատուրյանի մի հոդվածը, ուր նա քննադատում է ռուսական պահպանողական մամուլի օրգաններին, որոնք դեմ են հայերի առաջադիմությանը: Նա գրում է. «Թող իմանան և ամոթով հաշտվեն այդ ցեխոտ գրչի ներկայացուցիչները այն մտքի հետ, որ հայերն էլ ունեն ոչ միայն մտավոր ու հասարակական կյանք, իդեալներ, գրակա-

⁵⁷ «Նովոստի», 1893., 14 հոկտեմբերի:

⁵⁸ «Մշակ», 1894թ., N 131:

⁵⁹ «Մշակ», 1896թ., N 14:

նություն, մամուլ, այլև ներկայացուցիչներ գեղարվեստի զանազան ասպարեզներում՝ բանաստեղծություն, բեմ, նկարչություն, դրամա, օպերա և այլն: Թող իմանան, որ հայն էլ իբրև կուլտուրայի ձգտող ժողովուրդ, ընդունակ է իր հոգեկան ուժերով, իր շնորհով ու տաղանդով ծառայելու և՛ գրիչին, և՛ վրձնին, և բեմին»⁶⁰:

Թերթը հաղորդում է, թե «Կավկազ» լրագիրը մի անպատկառ նկատողություն է տպագրել հայերի հասցեին⁶¹, հայտարարելով, թե հայոց մամուլը չի թաքցնում հայերի վատ կողմերը: «Մշակը» հասկանալով, որ իրեն է ուղղված ռուսական թերթի դիտողությունը, գրում է. «Ի՞նչ նմանություն եք գտնում մեր և ձեր մեջ: Մենք ասում ենք ժամարտությունը, ուշադրություն չդարձնելով, որ դուք ձեր իդեալի նպատակների համար շահագործում եք մեր ասածները: Մեզ չեն լռեցնի ձեր դիտավորությունները, ինչպես չկարողացան լռեցնել երկար տարիների ընթացքում հայկական խավարամիտ հակառակորդները: Մեզ և ձեզ լավ են ճանաչում: Մեր մտրակը ձգտում է վերանորոգել, ոչնչացնել հինը, փտածը, նա թշնամու մտրակ չէ: Իսկ դուք ծիծաղել եք, երբ մտնում եք մեր վկայությունների տակ, որպեսզի ձեր սիրած ու փայփայած թշնամությամբ առաջ տանեք, մենք լույս, գիտություն ենք պահանջում, դուք մի շարք անհեթեթ, սոփեստություններով ուզում եք Թիֆլիսի պոլիտեխնիկումի հարցը խեղդել: Մեր դավանանքը պարզ է, պարզ է և այն, ինչ դուք եք դավանում, բայց մի մոռացեք, որ մինչև ձեր երևան գալը, մենք ձեզ նախատիպի դեմ էինք կռվում: Թե ձեր և թե ձեր ներշնչողների ազդեցությունը եղել է և կլինի մեզ համար խորթ, վայրենի, միջնադարյան»⁶²:

Ավագակությունը Կովկասում անասելի չափեր էր ընդունել և ռուս շովինիստներն ամեն կերպ ձգտում էին այդ ախտը հայերի հետ կապել: Ռուսական «Նովոյե վրեմյայի» N 8140-ում տպագրված հոդվածում թերթի գործիչները ձգտում էին ապացուցել, թե հայ ավագակները պայքարի այդ ձևն են ընտրել ռուսական իրականության դեմ դուրս գալու համար: «Մշակը» «Դա միակ միջոցը չի»⁶³ առաջնորդողում պնդում է, թե այդպիսի շովինիստական, կողմնակալ քննադատությամբ անհնար է չարիքի առաջն առնել: Ավագակությամբ, ըստ «Մշակի» զբաղվում են այն մարդիկ, ովքեր կրթությունից, լուսավորությունից հեռու են, իսկ պարզ բան է, որ Կովկասում այլ ազգեր կան մինչև հայերին հասնելը: Թերթը պաշտոնական տվյալներ է մեջ բերում, հայտարարում, թե մուսուլման ազգաբնակչության 90 հազարի համար դպրոց չկա, այնինչ հայերի յուրաքանչյուր 15 հազարը մի դպրոց ունի:

⁶⁰ «Մշակ», 1896թ., N 34:

⁶¹ «Կավկազ», 1898թ., փետրվարի 4:

⁶² «Մշակ», 1896թ., N 14:

⁶³ «Մշակ», 1898թ., N210:

1903-ի N 32-ում «Մշակը» տպագրել է Վելիչկոյի ռուսաց ժողովրդա-րանի (Պետերբուրգ) դահլիճում կայացած մի դասախոսության մասին, որին չեն թույլատրել մասնակցել Կարսի հերոս հայ գեներալ Լազարևի որդուն: Երբ նա «Նովոյե Վրեմյայի» խմբագրին է դիմել նամակով, թերթում Վելիչկոն պատասխանել է, թե ինքն իրավունք ունի հրավիրելու միայն այնպիսի հյուրերի, որոնց հարմար է գտնում, իսկ դասախոսությունը նվիրված էր Կարսի գրավման 25-ամյակին, որի հերոսը հենց գեներալ Լազարևն էր, որն իր ամբողջ կյանքը նվիրել էր Ռուսաստանին և զոհվել պատերազմի դաշտում: Վերմիշկին, որին նույնպես մերժել էին մասնակցելու այդ երեկոյին, գրում է. «Ինձ թույլ չտալու պատճառը երևի նույնպես թաքցված է այն հանգամանքի մեջ, որ ես պատկանում եմ հայ ազգությանը»: Սակայն պարզվում է, որ այդ «Չինական պարսպի» ետևում նաև շատ հայասեր ռուսներ տեղ չեն ունեցել:

«Մշակը» 1903-ի N 95-ում հայտնում է, որ «Նովոյե վրեմյա», «Մոսկովսկիե վեդոմոստի» լրագրերը շարունակում են իրենց հայատյաց քաղաքականությունը՝ պնդելով, թե հայերը վաշխառու են, խաբեբա, ճնշում են վրացիներին, թաթարներին, ցանկանում են Կովկասում սեփական թագավորություն հիմնել՝ հասցնելով այն մինչև Ռոստով: Վայրահաչություններին պատասխանում է Խ. Վերմիշկը «Չայի մտքերը հայկական հարցի մասին» հոդվածում⁶⁴: Նա բազմաթիվ փաստերով ապացուցում է, որ հայերը հավատարմության շատ ապացույցներ ունեն՝ թվելով Պետրոս Առաջինի, իշխան Պոտյոմկինի, Եկատերինա 2-րդի, այլոց հետ կապված փաստերը: «Կարծում ենք,- գրում է հոդվածագիրը,- որ եթե կանոնավոր վերաբերմունք լինի դեպի Ռուսաստանի միլիոնավոր հայ ազգաբնակչությունը, եթե թուրքահայերի հարցը խաղաղ ձևնապարհով լուծելու ջանքեր լինեն, այն ժամանակ ոչ մի բարեխիղճ մարդ չի առաջնորդվի մակերևութային տպավորություններով և անհիմն լուրերով»:

Իշխան Գոլոցինի ջանքերով էր, որ ցարը հրաման արձակեց պետականացնելու հայկական եկեղեցապատկան հողերը, որն էլ մեծ աղմուկ բարձրացրեց հայության շրջանում: Բողոքի դուրս եկան անխտիր բոլոր կուսակցությունները՝ պահանջելով բեկանել անիրավ որոշումը:

«Նովոստի» լրագիրն անընդհատ ռուսներին լարում էր կովկասյան ժողովուրդների դեմ՝ հայտարարելով, թե հայերն ու վրացիները իրենց Դաշնակցություն և Սաքարթվելո կուսակցությունները միավորում են, որ Կովկասը կտրեն Ռուսաստանից: Այս հերյուրանքը ժխտում է Յ. Առաքելյանը՝ հայտարարելով, թե գոլիցինյան ռեժիմի մնացորդներն ու բյուրոկրատներն են այդպես մտածում, իսկ կովկասցիները հիանալիորեն հասկանում են, որ

⁶⁴ «Նովոյե վրեմյա», 1903 թ., N9750:

եթե Ռուսաստանից բաժանվեն, ապա Թուրքիան հարմար պահը չի կորցնի կոլ տալու նաև Արևելյան Չայաստանը:

Արդեն որերորդ անգամ գլուխ է բարձրացնում ռուս հետադիմական օրգան «Նովոյե վրեմյան» իր երկարամյա աշխատակից Մենշիկովի հողվածաշարով: Ինչ հանցանքներ ու ոճրագործություններ ասես, որ չի թափում հայերի գլխին: Այս անգամ առիթը Պարսկաստանում ծագած խռովություններն էին, որոնք, ըստ Մենշիկովի, լուրջ վտանգ էին նաև Ռուսաստանի համար: Իսկ մեղավորներին նա հեռվում չի փնտրում, դա ատելի հայն է, հայ հեղափոխականը:

Արդեն 1905-ի 2-րդ համարում թերթը տպագրում է անփառունակ կառավարչապետ Գոլիցինի պաշտոնաթող անելու լուրը:

Հակակառավարական ելույթները ծավալվում էին ողջ Ռուսաստանում, ինչպես նաև Անդրկովկասում: Թերթն արտատպություններ էր կատարում ռուսական պարբերականներից:

Ծուռով հայոց կաթողիկոսի հեռագիրն է տպագրում թերթը Վորոնցով-Դաշկովին, ով նշանակվել էր Կովկասի նոր կառավարչապետ: Եվ որովհետև հասարակական կարգը խանգարված էր, ուստի ցարը հրամայում է Բաքուն և նրա նահանգը համարել պատերազմական դրության մեջ: Կովկասի կառավարչապետին տալ պատերազմական վիճակում գտնվող վայրերի մեջ զինվորական իշխանությանը հատկացված իրավունքներ և պարտականություններ:

Ցարական կառավարությունն իրեն սպառել էր. իշխանությունների դեմ բողոքները դարձել էին հսկայածավալ, ահա թե ինչու է Ալ. Քալանթարը և Զ. Առաքելյանն այն կարծիքին էին, որ շատ ավելի նպատակահարմար կլիներ վարչակարգի հին մարդիկ շուտ հեռանալին ասպարեզից և նրանց փոխարինելու գալին նորերը: Եվ իրենց ասածը հաստատելու համար նրանք թարգմանաբար տպագրեցին «Ստրանա» լրագրի առաջնորդողը. «Այժման ընդհանրապես խորին տրագիկամ նրա մեջ է, որ գահը շրջապատող անձանց մեջ չկա մի հատ կենդանի, զգայուն մարդ, որը հասկանար և բացատրեր, թե ինչ վտանգների է ենթարկվում և երկիրը, և միապետությունը պալատական խորհրդականների ինտրիգներից և շահասիրությունից: Լավագույն ուժերը հետզհետե թողել, հեռացել են պալատական շրջանից և նրանց տեղը բռնել են հետամնաց մտքեր, կամայականության ֆանատիկոսներ, կարերիստներ: Նրանք հեղեղեցին Ռուսաստանը արյունով, սվիններով և թնդանոթներով: Նրանց միակ նպատակը ոչ թե երկիրը կառավարելն է, այլ հղփանալը...»:

«Քաղաքական տեսություն» բաժնում⁶⁵ Զ. Առաքելյանը անդրադառ-

⁶⁵ «Մշակ», 1906 թ., N 231:

նում է Միլանում գումարված խաղաղության համաշխարհային 15-րդ կոնգրեսի որոշմանը, ուր դատապարտվում է ցարական Ռուսաստանը, ինչպես նաև մյուս եվրոպական երկրների հանցավոր քաղաքականությունը, որոնք թույլատրեցին սարսափելի ոճիրներ հայ ազգի նկատմամբ և պահանջվում է եվրոպական երկրներից անմիջապես կիրառել Բեռլինի կոնգրեսի 61-րդ կետը: «Մշակը» արտատպել է գերմանական «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» լրագրում գետեղված առաջին պետական դումայի նախագահ, պրոֆեսոր Մ. Մուրումցևի հոդվածը, ուր նա հայտարարում է, թե վերջին երկու տարում կարծես ոչինչ չի փոխվել ֆեոդալական Ռուսաստանի իրականության մեջ: Ռուսաց կառավարությունը երբեք այնպես ջերմ կերպով չի ջանացել, որ պահպանողական տարրերը հաղթանակ տանեն, երբեք նա այնպես կուրորեն չի հավատացել կատաղի ռեպրեսիայի փրկարար ուժին⁶⁶: Բայց, ըստ հոդվածագրի, ռուս ժողովուրդն իր մեջ վճռականություն գտավ անվստահություն հայտնելու կառավարությանը: Մուրումցևը գտնում է, որ 2-րդ դումայի և ներկա կաբինետի երկուստեք գոյությունն անհնարին է և դուման անպայման պիտի ցրվի: Առաքելյանը քաղաքական մեծ ակտ է անվանում Ռուսաստանի և Անգլիայի միջև կնքված նոր դաշնագիրը, ըստ որի այս երկրների տնօրինության են անցնում որոշակի հատվածներ, որոնք իրենց ազդեցության շրջանակներում կմնան: Մասնավորապես դա շատ կարևոր է Պարսկաստանի համար, որն անցնում է Ռուսաստանի հովանավորության տակ և Թուրքիան այլևս չի կարող ճնշումներ գործադրել Պարսկաստանի վրա: Թերթը հաղորդում է նաև, որ «Մշակի» գլխավոր աշխատակից Յ. Առաքելյանը դիմել է Թիֆլիսի նահանգապետին՝ խնդրելով թույլատրել հրատարակել 1910 թվականի հունվարի 1-ից հայերեն ամսագիր «Ակոս» վերտառությամբ, ընդհանուր գրական-գեղարվեստական և ժողովրդականացրած-գիտական ուղղությամբ: Ամսագրի շուրջ համախմբվելու են ազատամիտ ու առաջադիմական գրողներ, ինչպես նաև անկուսակցականներ: Այն հրատարակվելու է «Մուրձ» հանդեսի չափերով⁶⁷:

1911-ի հունվարի 22-ին Թիֆլիսի նահանգապետը Յ. Առաքելյանին հաստատել է «Մշակի» երկրորդ (co редактор) խմբագիր: Առաքելյանն, անդրադառնալով ողջ Ռուսաստանում տարածվող ուսանողական հուզումներին, գրում է, թե պահպանողականների ռեպրեսիաներին դիմելու եղանակն արդեն հնացած է, պետք է պայմաններ ստեղծել, որ թարմ ուժերով երիտասարդներ ասպարեզ գան, իսկ դա կլինի միայն մի դեպքում, երբ համալսարաններն ու բարձրագույն դպրոցները դառնան իսկապես գիտության

⁶⁶ «Մշակ», 1906 թ., N 231:

⁶⁷ Նույն տեղում, 1909 թ., N 246:

տաճարներ, տրվի նրանց ինքնավարություն, ավտոնոմիա⁶⁸:

1914-ին արդեն, երբ Ռուսաստանում կացությունը շատ դժվար էր և երկրի ղեկավարությունը նույնիսկ իր երկրում չէր կարողանում կարգուկարգուն հաստատել, Գերմանիան առանց վախենալու դրդում էր Թուրքիային լուծելու հայերի հարցը, որովհետև ռուսաց կառավարության ազդեցությունն արտաքին քաղաքականության վրա շատ թույլ էր:

Պետական Դումայում Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տված հաշվետվության ժամանակ ելույթ է ունեցել պատգամավոր Մ. Պապաջանյանը, բայց նրա ելույթն ինչպես թուրք Ջաֆարովը, այնպես էլ վրացի Չխենկելին և ռուս Սկոբելը համարել են նացիոնալիստական: Յ. Առաքելյանն առարկում է նրանց և բացատրում, թե հայ պատգամավորի ամբողջ ճառի իմաստն այն էր, որ վերջապես Ռուսաստանը հասկացավ, որ մի մեծ և քրիստոնյա պետություն, որը սահմանակից է Թուրքիային, մի պետություն, որի մեջ ապրում են միլիոնավոր հայեր, չպետք է սառն ու անտարբեր մնալ դեպի այն սոսկալի տանջանքները, որին ենթարկված են այդ հայերի մի այլ մեծ հատված: Եվ քանի որ ռեֆորմները դեռ մնում են թղթի վրա, իսկ դառը փորձերը ցույց են տվել, որ թուրքաց կառավարությունը միշտ էլ աշխատել է չկատարել իր խոստումները և հանձ առած պարտավորությունները, Պապաջանյանը ցանկություն է հայտնել միայն, թե Ռուսաստանը չպետք է խնդիրը կես ճանապարհին թողնի, այլ աշխատի իրագործել ռեֆորմների ծրագիրը, քանի որ հենց այդ իրագործումը միանգամայն համապատասխանում է իր Ռուսաստանի քաղաքական և տնտեսական շահերին: Իսկ հայերը հեռու են անջատողական ձգտումներից և հետամուտ չեն ավտոնոմիայի և Թուրքահայաստանի միացմանը Ռուսաստանին⁶⁹:

Ջաֆարովն առարկում էր, թե Պապաջանյանը կոչ է անում հայերին պետական դավաճանություն կատարել, թե ռեֆորմների հարցը Թուրքիայի ներքին քաղաքականության խնդիրն է, որին մի օտար պետություն իրավունք չունի միջամտել: Չխենկելին էլ առարկում է, թե քրդերն ամենևին դեր չեն կատարում հայերի ստրկացման գործում, թե Թուրքիայում պետք է բոլոր աշխատավոր զանգվածները միանան տիրող դասակարգերի և պետության դեմ: Սկոբելն էլ առարկում է Պապաջանյանին, թե նա թունդ շովինիզմ է քարոզում:

Այնուհետև «Մշակը» պարբերաբար ներկայացնում է վրացական մամուլի որոշ օրգանների ելույթներն առանց կրճատումների և ընթերցողների դատին է թողնում նրանց զագրախոսությունները: Հենց նույն համա-

⁶⁸ Նույն տեղում, 1911 թ., N 28:

⁶⁹ «Մշակ», 1914 թ., N108:

րում էլ Առաքելյանը զետեղել է «Չակավկազսկայա ռեչ» թերթի հոդվածը⁷⁰, ուր այսպիսի տողեր են հնչում. «Ընթերցողներն արդեն գիտեն հեռագրերից այն կոպիտ շովինիստական ճառի բովանդակությունը, որով հանդես եկավ պետական դումայում հայ պատգամավոր Պապաջանյանը: Դրդելով Ռուսաստանին խառնվել Թուրքիայի ներքին գործերին՝ նա պահանջեց որպեսզի Ռուսաստանի բարեկամությունը Թուրքիայի հետ չկապի Ռուսաստանի ձեռքերը եռանդուն գործողություն սկսել հոգուտ թուրքահայերի, հիշելով, որ առանց Չայաստանի հանգստության Եվրոպան հանգիստ չի կարող լինել»: Ավելի առաջ է գնացել «Չվենի էրի» թերթը, թե Կովկասի բոլոր ժողովուրդները կմիանան, որպեսզի միահամուռ կռիվ մղեն հայ շովինիստների էջմիածնական ագրեսիվ քաղաքականության դեմ: Եվ որպես վերջաբան զավեշտին՝ սոցիալ-դեմոկրատների պատգամավորների եզրակացությունը՝ օտար պետությունները չպետք է միջամտեն Թուրքիայի ներքին գործերին: Ուրեմն, հետևացնում է Յ. Առաքելյանը, սոցիալ-դեմոկրատ կոչեցյալ պատգամավորների բերանով խոսում են մուսուլմանը, վրացին և աղանդավոր ռուսը, որովհետև նրանք տգետ չեն պատմությունից և գիտեն, որ օրինավոր պայմաններ Թուրքիայում չկան և չեն կարող լինել:

Թերթը տպագրել է Սանկ-Պետերբուրգի հեռագրական գործակալության հեռագիրը Սարաևոյից՝ սպանված են արքայադուքս Ֆրանց Ֆերդինանդը և կինը: Ավստրիական թագաժառանգի մահվան կապակցությամբ հեռագրերի հեղեղ է սկսվել: Առաքելյանը եզրակացնում է, թե ազգայնական թշնամանքով կատարված այդ սպանությունը նոր բարդություններ է առաջացնելու միջազգային հարաբերություններում⁷¹:

Թերթը տպագրել նաև Ալ. Մարտունու «Ազգային հարցի մոտիվ անցյալից Ռուսաստանում» ընդարածակ հոդվածը, ուր հեղինակը սխալ է համարում հայկական ավտոնոմիայի պահանջը Ռուսաստանում:

1914-ի հուլիսի 20-ին թերթն աշխարհը ցնցող լուրը տպագրեց՝ Գերմանիան պատերազմ է սկսել Ռուսաստանի դեմ: Առաքելյանը «Ներկա պատերազմը և հայ ժողովուրդը»⁷² առաջնորդողում համոզունք է հայտնում, որ հայը պիտի հավատարիմ հպատակի պես կռվի հանուն Ռուսաստանի, քանի որ սա միակ քրիստոնյա երկիրն է, որ հոգացել է մեր ցավերը Չայաստանի փրկության համար և այն, որ Ռուսաստանի կողմից այս պատերազմն ազատագրական է, քանի որ Գերմանիան ուխտադրուժ հարձակում է գործում նվաճելու համար, իսկ սա Առաքելյանը որակում է ագրեսիա: Թերթը

⁷⁰ «Կավկազսկայա ռեչ», 1914 թ., N 112:

⁷¹ «Մաշակ», 1914 թ., N 132:

⁷² «Մշակ», 1914 թ., N 160:

Վիլիելմ 2-րդին անվանում է եվրոպական ահավոր միլիտարիզմի, մարդկային կատակոմբերի և կուլտուրական ահավոր ավերածության պատճառած զարհուրելի աղետների տխուր հերոս: Եվ մեջ է բերում Ավգուստ Բեբելի խոսքերը. «Մեզ՝ գերմանացիներին, ատում են ամենուրեք»:

«Մշակը» «Հայկական համազգային ժողովի կարևորությունը» հոդվածում հայտարարում է՝ «Հայրենիքը այն վեց վիլայեթներն են, որոնք դարերով խեղդվել են արյան մեջ: Այժմ եկել է սպասված թուլան, այժմ կամ երբեք: Իսկ դրան մենք հասնելու ենք միայն համերաշխությամբ և փոխադարձ սիրով»⁷³:

Թերթը կրիտիկական է համարում պահը և ձիշտ եզրակացության հանգում, քանի որ հայերը ռուսական ցարին են զորավիզ, ուրեմն ըստ հին սովորության, Թուրքիան վրեժ է լուծելու անգն գավառներից: Եթե Ռուսաստանն այս պահին մտներ Վանի, Մուշի, Էրզրումի վիլայեթները, հայերի անելիքները պարզ կլինեն, բայց քանի դեռ Ռուսաստանը պատերազմ չի հայտարարել Թուրքիային, ապա պետք է այլ գործելակերպ մշակել: Այս առնչությամբ «Մեր պարքը» վերնագրով հոդվածում⁷⁴ Վահան Տերյանն արծածում է շրջահայացության հարցը: «Չպետք է մոռանալ,- գրում է նա,- որ ամենաչնչին սխալն այսպիսի մի ժամանակ կարող է անդարձ կորստյան դուռ բանալ մեր առջև, կարող է անթիվ դժբախտությունների առիթ հանդիսանալ: Ուրեմն չմոռանանք, որ ձակատագրական է թուլան, իսկ մեր գործը սուրբ է»:

1914-ի հոկտեմբերի 18-ին Առաքելյանը հայտնում է, որ Թուրքիան էլ վերջապես առանց պատերազմ հայտարարելու հարձակվել է Ռուսաստանի վրա:

Եվ ուրախալի լուրերը՝ Մոսկվայի հայ գաղութը կամավորների մի խումբ է հավաքագրել երկիր մեկնելու համար: Հայ կամավորականների խումբը՝ 1000-ից ավելի մարտիկներով, անցել են թուրքաց զորքի թիկունքը և պաշարել Վանը: Այս քաղաքն առանձնապես կարևոր էր որպես հարուստ արսենալ:

«Նրանք գնացին» հոդվածում Սոֆիա Դանիել-Բեկը գրում է. «Նրանք գնացին, մեր սիրելի կամավորները նվիրական պարտքը կատարելու, նրանք գնացին ոգևորված հայրենիքի սուրբ սիրով: Ողջույն ձեզ, մեր հերոսներ, հարգանք ձեր վեհ սրտերին, բարի երթաք, ազնիվ քաջեր, մեր սիրելի հերոսներ...»⁷⁵:

Թերթն Աստրախանից ժամանած 50 կամավորների նամակն է զետեղել Հայկ Բժշկյանի և այլոց ստորագրությամբ, թե մենք եկել ենք կամավոր

⁷³ Նույն տեղում, 1914 թ., N 213:

⁷⁴ «Մշակ», 1914 թ., N 220:

⁷⁵ «Մշակ», 1914 թ., N 245:

մեկնելու ռազմաճակատ, իսկ որովհետև այս գործով զբաղվողներ չկան, արդեն քանի օր է պարապ թափառում ենք Թիֆլիսի փողոցներում⁷⁶:

Թերթն ուրախությամբ է արձագանքում, որ հայ կամավորների խմբապետ Անդրանիկը ստացել է սուրբ Գեորգիի շքանշան Երևանի զորքի զորապետից⁷⁷:

Մեծ կոտորած է սկսվել Վանում: Փախստականները տասնյակ հազարներով անցել են Սարիղամիշ: Իսկ Ամերիկայից իրենց սեփական միջոցներով 30 կամավորները, որոնք Պանդուխտի գլխավորությամբ հունվարի 23-ին մեկնել են ճակատամարտ: Յնչակյան գործիչ Սուրադը 370 ֆիդայիներով Չոքմազվանի լեռներն է եկել: Յաճնում և Ջեյթունում հնչակյանների կազմում կամավորական ջոկատները պատրաստ են Կիլիկիայի հայությանը պահպանել անակնկալներից:

«Մշակը» թարգմանաբար իր էջերում գետեղել է ռուսական «Ռեչ» լրագրի կադետ Ն. Մելժուկովի հոդվածը, ուր նա գրում է. «Յայերին օգնելով, մենք ոչ միայն փրկում ենք ցեղի ապահովությունը, որի գոյությունից է կախված ռուսական կուլտուրական միսիայի հաջողությունը թուրքական շրջաններում, որոնք վերջնականապես ազատվում են օսմանյան վայրենության ծանր ճնշումից: Թող ուրեմն ռուս հասարակությունը սրտագին վերաբերվի անբախտ հայ փախստականների վիճակին, որ կորցրել են կամք, առողջություն և հաճախ նույնիսկ գիտակցություն, այսինքն ամենը, բացի կյանքից: Թող թուրքահայերի գործի համար նա բաժին հանի այն համակրությունից, որով վերաբերվեց Բելգիայի, Սերբիայի և Լեհաստանի դեպքերում»⁷⁸:

Նույն թեմային է անդրադառնում «Սլովո» լրագիրը՝ գրելով. «Մի չափազանց աշխատասեր ժողովուրդ, հնուց կուլտուրական, ընկել է մի ցեղի իշխանության տակ, որը ցեղով, կրոնով, լեզվով, կենցաղով օտար է իրեն, մի ցեղի, որի կուլտուրան ավելի քան տարրական է, կոպիտ, իսկ տեղ-տեղ իշխանության տակ է նախնիների արյունարբու ու կատաղի վայրենիների: Եվ դարերով շարունակվում է հայ ժողովրդի այս մարտիրոսությունը, դարերով կատարում է այս կուլտուրական ցեղի սիստեմատիկական ոչնչացումը վայրենի ցեղերի ձեռքով: Ուստի շտապեցեք, որովհետև ձեր նվիրած յուրաքանչյուր տուփ ապրանքի ետևում կանգնած է տանջված, հյուծված կանանց, մայրերի և քույրերի մի խիտ ամբոխ և քաղցած ու հուսահատ երեխաների հսկա մի խումբ»: «Պետերբուրգսկի կուրիեր» թերթն էլ շարունակում է, թե հայ ժողովուրդն այժմ էլ համարվում է մեր քաղաքացիականության և պետականության առավել ակտիվ տարրը Առաջավոր Ասիայում և հայերին

⁷⁶ Նույն տեղում, 1914 թ., N 294:

⁷⁷ «Մշակ», 1915 թ., N 4:

⁷⁸ «Մշակ», 1915 թ., N 60:

մեր կողմից ցուցաբերված օգնությունը, օգնություն է հենց մեզ՝ ռուսներին»:

Ահա և երկու ծայրահեղ կարծիքների դրսևորում ռուսական հայաստյաց մամուլի և օբյեկտիվ մտավորականության: Թերթը տպագրել է նաև Փարիզի հայկական կոմիտեի նամակը Պետերբուրգի քաղաքագլուխ կոմս Տոլստոյին, ուր երախտագիտություն է հայտնվում հայ փախստականներին օգնող պետերբուրգյան կոմիտեի ստեղծելու առթիվ, ուր գրել են. «Ռուս ժողովրդի վեհանձն վերաբերմունքը դեպի հայերը, մարդկության և հայ ցեղի պատմության վճռական, հանդիսավոր պահին հարյուրապատիկ ավելացնում է ի սփյուռս աշխարհի հայերի սերը⁷⁹»:

«Մշակը» արտատպել է «Ռուսակիե վեդոմոստի» թերթի 1915 թվականի մի հոդվածը՝ «Հայաստանը առանց հայերի» վերնագրով⁸⁰, ուր հեղինակ Ն. Օգանովսկին նկարագրում է այն սարսափելի վիճակը, որի մեջ գտնվում է արդեն ոչնչացված Արևմտահայաստանը:

Լորդ Բրայսը հայկական կոտորածների հարցով ելույթ է ունեցել լորդերի պալատում, պահանջելով անհապաղ դադարեցնել ոճրագործությունները, որ թույլ են տալիս թուրքերը: Այս մասին տեղեկություններ են տպագրել «Թայմս», «Մորնինգ պոստ» և «Դեյլի տելեգրաֆ» թերթերը (1915-ի հունիսի 29-ի համարներում): Նա խնդրել է Արշակ Չոպանյանին Հայաստանում պատահած բոլոր դեպքերի մասին մանրամասն տեղեկություններ: Նույն մտատանջությունն է հայտնում նաև լորդ Կրոմըրը:

Սանկտ-Պետերբուրգի «Գոլոս» թերթից թարգմանել են «Հայերի մասին» հոդվածը, ուր մեջ են բերել լորդ Բրայսի խոսքերը, թե թուրքերին պիտի վտարել այնտեղ, որտեղից եկել են: Պետք է անմիջապես հայերին ավտոնոմիա տալ Փոքր Ասիայում, դեպի Միջերկրական ծով և խաղաղությունն այդ երկրամասում կհաղթի: Եվրոպան և մանավանդ Անգլիան շատ են պարտական հայերին: Անգլիան մեղավոր է Բեռլինի դաշնագրի և Կիպրոսի պայմանագրի համար, որի շնորհիվ Թուրքիայում շատ տարիներ կողոպտում և սպանում են հայերին⁸¹:

«Պետական դումա» բաժնում մեջ է բերված կաղետների ղեկավարներից մեկի Միլյուկովի ճառից, որը նվիրված էր հայության վիճակին: Ըստ նրա, հայերը դժբախտության այդ բաժինն ստացել են, որովհետև հավատարիմ են եղել ռուսներին: Եվ այժմ, երբ գրաված են նրանց բնիկ հողերը, պետք է անմիջապես ավտոնոմիա հռչակել այնտեղ և ոչ մի կոզակով կամ հայերի թշնամի քրդերով այդ հողերը չբնակեցնել: Հրաժարվենք գեթ հի-

⁷⁹ «Մշակ», 1915 թ., N 66:

⁸⁰ «Ռուսակիե վեդոմոստի», 1915 թ., N 205:

⁸¹ «Մշակ», 1915 թ., N 287:

մա, ոտնահարված իրավունքի և արդարության այս հանդիսավոր ժամին, նացիոնալիստական էգոիզմի նեղ ծրագրերից (խոսքը վերաբերում էր ռուս գաղթականներով այդ հողերը բնակեցնելուն)⁸²: «Ֆիգարո» լրագիրն իր 1916-ի N 77-ում հայտնում է, թե Սորբոնում կայացել է հայերի ցույց, ուր ելույթներով հանդես են եկել սենատի նախագահ Դեշանելը, Անատոլ Ֆրանս-ցը և այլոք:

«Մշակը» մեջ է բերում «Թեմպս» լրագրում հրատարակված մի հոդված, ուր առաջ է քաշվել գերմանացի հրապարակախոս Ռոհրբախի մի միտքը, որը շատ հետաքրքրական է մինչև օրս: «Ռուսական Կովկասում,- գրում է նա,- ապրում են 7-8 միլիոն մուսուլմաններ, որոնք ցեղակից են թաթարներին: Եթե Թուրքիան կարողանար դեպի հյուսիս շարժել իր մուսուլման ազգաբնակչությանը կկազմեր մի շրջան բնակեցված 14-15 միլիոն մարդկանցով, միացած կրոնով և ծագումով, որը և կներկայացներ վտանգավոր ուժ: Հայաստանը խանգարում է այդ ծրագրի իրագործմանը, ուստի անհրաժեշտ է նրա բնակիչներին արտաքսել և երկիրը գաղութավայր դարձնել»⁸³: Ահա ինչու Գերմանիան ցանկանում էր հայերին արտաքսել նոսր բնակեցված Միջագետք, իսկ Հայաստանը բնակեցնել Թրակիայից և Ռուսաստանից գաղթեցված մուսուլմաններով: Այս կերպ էլ պատմական Հայաստանը ազատ կմնար ռուսական ազդեցությունից:

Փաստորեն դեռ 100 տարի առաջ է գերմանացիների ու թուրքերի կողմից որոշված եղել Հայաստան անունը անհետացնել երկրի երեսից և այսօր էլ այդ հարցը թուրքերի համար օրակարգային է:

«Մշակը» հետաքրքիր մի լուր է տպագրում, թե ռուս հայտնի գրող Ալ. Ամֆիտեատրովը մի նոր աշխատություն է հրատարակել «Армения и Рим» վերնագրով, որտեղ հեղինակը, օգտվելով պատմական մի շարք աղբյուրներից, նկարագրում է Հայաստանի և Հռոմի հետ ունեցած կապերը: Նա մանրամասն ներկայացնում է նաև հայոց Արտավազդ արքային, որը հմտորեն կարողացել է չեզոքություն պահպանել ասիական պետությունների և Հռոմի կայսրության ընդհարումների ժամանակ⁸⁴:

«Ռուս մամուլ» բաժնում թերթն անդրադարձել է Ս. Գրուշևսկու «Ռուսկիե վեդոմոստի» թերթում տպագրված հոդվածին⁸⁵, որը նվիրված էր փոքր ազգությունների հարցին: Նա հայտարարում է, թե բոլոր ազգերն էլ այս արևի տակ տեղ ունեն, օրինակ Հոլանդիան, Նորվեգիան. «Ո՞վ կարող է երաշխավորել, որ ամենափոքր ազգության օջախից վերջիվերջո չի դուրս

⁸² Նույն տեղում, 1916 թ., N 62:

⁸³ «Մշակ», 1916 թ., N 80:

⁸⁴ Նույն տեղում, 1916 թ., N 82:

⁸⁵ «Ռուսսկիե վեդոմոստի», 1916 թ., N 122:

գա մեծ հասարակական ստեղծագործություն, խոշոր գանձ ընդհանուր կուլտուրական գանձարանի մեջ, ինչպես տվեցին փոքրիկ Ֆլորենցիան, Յուլանդիան, Նորվեգիան: Իսկ այն մարդիկ, ովքեր գրգռում են Ռուսստանի ժողովուրդներին միմյանց առելու, պատճառ բերելով պետականության շահն ու միությունը՝ թող հիշեն հին, չժամգուտված ձյնարտությունը, որ այդ աշխատանքով իրենք արջի ծառայություն են անում ոչ միայն մարդկությանը կուլտուրայի շահերին, այլև Ռուսաստանի շահերին»:

Նույն թեմային է անդրադառնում թղթակից Ագյանը Մոսկվայից՝ գրելով, թե ռուսական իշխանության վերին շրջաններում կարծիք է հայտնվել դատարկվող հայկական հողերը բնակեցնել կազակներով, իսկ հայերը կարծես քնած են: Նա առաջարկում է հայկական դպրոց հիմնել նաև Մոսկվայում Գասպարյան անկելանոցի բազայի վրա և այս մասին շտապ պիտի մտածի Մոսկվայի եկեղեցական խորհուրդը: «Չէ՞ որ,- գրում է նա,- այս տաժանալի օրերին, երբ հայության բնաջնջման խնդիր է դրված երկու կողմից էլ, մենք պարտավոր ենք պահպանել, գուրգուրել և նայել յուրաքանչյուր հայի, հայերեն սովորեցնել ցանկացող յուրաքանչյուր անհատի»⁸⁶:

Ծուռով թերթը հաղորդում է պետական հեղաշրջման մասին Ռուսաստանում: Առաքելյանն ուրախ է, որ վերջապես տապալվեց հին, փտած կառավարությունը⁸⁷: Նույն համարում Պետերբուրգից հայտնում են, թե դրությունը լուրջ է, մայրաքաղաքում անիշխանություն է: Փողոցներում տեղի են ունենում անկարգ հրաձգություն, զորամասերը կրակում են իրար վրա, անհրաժեշտ է շտապ կարգով կազմել նոր կառավարություն, որովհետև ամեն մի հապաղումը կարող է մահացու լինել:

Աշոտ Աթանասյանն այս առիթով գրում է, թե ծանր էր օդը, թույնը շատ, խեղդիչ գոլորշիներ կային, փակ էին պատուհանները, օդը գնալով ավելի թունավոր էր դառնում: Բայց շառաչելով փշրվեցին ապակիները, բացվեցին պատուհանի փեղկերը և թթվածնով ներծծված օդը մտավ մեր տները: «Լայն բացեք պատուհանները,- գրում է նա,- լույսն է տարածվում շրջապատում և այդ լույսն ազատ խոսքն է մամուլի, գրքերի, իսկ մենք շատ կարոտ էինք դրան: Արդարությունը, որը նույնպես շղթայված էր, պետք է վերջապես ձանաչի արյունաքամ հայրենիքի իսկական թշնամիներին, որոնք անկշտում ու անդադար գոփում ու թալանում էին խեղճերին»⁸⁸:

Նախարարների խորհրդի նոր կազմում ընդգրկվել էին հինգ կադետական կուսակցության անդամներ, երեք հոկտեմբերական, մեկ աշխատավորական (Կերեսիկ): Նոր կառավարությունն ամնիստիա է հայտարարել խոս-

⁸⁶ «Մշակ», 1916 թ., N 201:

⁸⁷ Նույն տեղում, 1917 թ., N 47:

⁸⁸ «Մշակ», 1917 թ., N 48:

քի, մամուլի ազատության, կրոնական ու ազգային սահմանափակումների վերացում, նոր սահմանադրության քննարկում մասսայականորեն և ընդունում, ոստիկանության փոփոխությունը ժողովրդական միլիցիայով, տեղական ինքնակառավարական մարմինների ընտրություն ընդհանուր, ուղղակի, հավասար ու գաղտնի քվերականությամբ, զորամասերի զինաթափում Պետրոգրադում, զինվորական խիստ կարգապահություն զորանոցներում և ծառայության վայրերում: Նախարարների խորհրդի նախագահ ընտրվեց Լվովը, արդարադատության նախարար Կերենսկին, ռազմական նախարար Գուշկովը, Պետերբուրգի զինվորական հրամանատար Կոռնիլովը:

«Հրաշալի, կախարդական օրեր» առաջնորդողում Հ. Առաքելյանը գրում է. «ՌՎ կարող էր երևակայել, որ դարերով ձնշվող, հարստահարվող, հոգի, միտք կաշկանդող բռնապետությունը, միահեծանությունը, երբ միլիոնավոր ժողովուրդ իբրև ստրուկ, գերի ենթարկվում էր մի քանի անխիղճ, անօրեն և անբարոյական պալատականների և անբարոյական կանանց քմահաճույքներին, երբ մարդկային ամենատարրական իրավունքները ոտնակոխ էին լինում, երբ բանտերում փտում էին Ռուսաստանի լավագույն զավակները, երբ մի հետին և կոպիտ ժանդարմ կարող էր ոչընչացնել, ծեծել, անարգել ամենատաղանդավոր հասարակական ու մտավոր գործչի, երբ ոչ ռուսական ազգությունները վիրավորվում, անարգվում էին ազգային ամենանվիրական զգացմունքների մեջ, երբ կաշառակերությունը համատարած ախտ էր, երբ ինքնիշխանությունն ամեն միջոցներ և պրովոկացիաներ գործ էր դնում գրգռել փոքր ազգություններն իրար դեմ և զինավորված, արյունահեղ ընդհարումներ առաջ բերելու թշնամություն, նախանձ սերմանելու նրանց միջև, որպեսզի նրանք չկարողանան ապրել իրար հետ համերաշխորեն: ՌՎ կարող էր երևակայել, որ այդպիսի ատելի ու սոսկալի մի ռեժիմ մի գեղեցիկ օր հիմնահատակ կլինի և անդառնալի խորտակվի»⁸⁹:

Բայց հին ռեժիմի ներկայացուցիչներն, իհարկե, տքնելու էին հակաշարժում առաջ բերել երկրի ներսում, որի համար ստիպված էին լինելու օգտագործել կուսակցությունների տարածայնությունները...: Ծուտով հայտնվում է, թե ժամանակավոր կառավարությունն Անդրկովկասը կառավարելու համար կազմել է առանձին կոմիտե դումայի անդամներ Վ. Խարլամովի, Մ. Պապաջանյանի, Մ. Ջաֆարովի, իշխան Կ. Աբաշխձեի և Պ. Պերևերզնկի մասնակցությամբ՝ երկրում դրությունը նորմալացնելու համար: «Մշակը» սրտանց ողջունում է պետական կոմիսարների: Հայտնվում է նաև, որ մարտի 16-ին տեղի է ունեցել առաջադիմական-դեմոկրատական կուսակցության ստեղծողների առաջին նիստը, որի պլատֆորմն ընդհանուր

⁸⁹ «Մշակ», 1917 թ., N 56:

առմամբ մոտ է լինելու ռուսական սահմանադիր-ռամկավարական կուսակցության ծրագրին: Նախագահության անդամներ են դարձել Զ. Առաքելյանը, Ստ. Մալխասյանցը, Մ. Աթաբեգյանը, Մ. Բերբերյանը, Գ. Տեր-Պետրոսյանը և Սոֆյա Դանիել-Բեկը:

Զ. Առաքելյանն անդրադառնալով մայրաքաղաքի ցույցերին, որոնք նա արդյունք է համարում ագիտացիայի, որը կատարում է մեծամասնական կամ բոլշևիկ Լենինը, առաջ քաշելով առանց անեքսիայի և կոնդուիբուցիայի լոզունգը և սեպերատ հաշտություն կնքելու գաղափարը, կործանարար է համարում հայ ժողովրդի համար⁹⁰: Բայց ո՞վ է Լենինը և ի՞նչ է կամենում: «Լենինի քարոզած մտքերն այնքան տարօրինակ են, որ շատերը նույնիսկ սկսեցին կասկածել, որ նա կաշառված է Գերմանիայից, ուստի և առաջարկեցին հետ ուղարկել նրան Գերմանիա, որտեղից եկել էր: Սակայն, այն հանգամանքից, նրա քարոզչությունը՝ կնքել հաշտություն սեպերատ և անմիջապես սկսել քաղաքական, այսինքն՝ դասակարգային կռիվ Ռուսաստանում, ինչպես 1870-71թթ. Ֆրանսիայում, շատ ձեռնտու է Գերմանիային: Պետք է հուսալ, որ ռուս ժողովրդի առողջ դատողությունը և հայրենասիրությունը հաղթանակ կբերեն և Լենինն իր կողմնակիցներով անկարող կլինեն մխրձել Ռուսաստանն անիշխանության մեջ»⁹¹:

Առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի Լենինի կոչը շահավետ էր միայն Ռուսաստանի թշնամիներ Գերմանիային, Ավստրիային և Թուրքիային: Այս մասին հայտարարել էր նաև կաղետ Միլյուկովը: Իսկ այս լոզունգն ամենաշատը հայերին էր վերաբերում, որովհետև Թուրքիայի այն հողերը, որ ռուսների ձեռքին էր, պետք է հետ վերադարձվեր և դեռ տուգանք էլ տրվեր: Իսկ ինչ էր լինելու արևմտահայերի վիճակը, որոնց իրենց հողից քշել էին Միջագետք:

Խժդժություններ էին կազմակերպում Լենինի կողմնակիցները. անում էին ամեն ինչ Ռուսաստանն անարխիայի վերածելու համար, և զայրացած ու զարմացած էր Առաքելյանը, որ ռուս սոցիալ-դեմոկրատներն այնպիսի պահանջներ էին դնում, որն անհնար էր կատարել: Մասնավորապես, ըստ նրանց, այս հեղափոխությունից հետո ժողովրդի դրությունը չլավացավ, բայց միթե հնարավոր էր հաշված օրերի ընթացքում սովահար երկիրը դրախտի վերածել: Նա Ռուսաստանը համեմատում է ծարավ ու սոված մարդու հետ, որին բժիշկներն էլ չեն թույլատրի միանգամից շատ ուտեցնել և խմեցնել, որովհետև կտրաքի: «Իսկ հիմա, երբ փառասերները չեն հաշտվում ժամանակավոր կառավարության հետ, հետևանքը եղբայրասպան պատերազմն

⁹⁰ «Մշակ», 1917 թ., N 82:

⁹¹ «Մշակ», 1917 թ., N 82:

է լինելու, ուրեմն պարզ է, որ բոլշևիկների այժմյան գործելակերպը երկիրը տանում է քայքայման և ստրկացման: Իսկ հիմա սա ձեռք է տալիս գերմանացիներին, որոնք կգրավեն Ռուսաստանը և կստրկացնեն ռուս ժողովրդին»⁹²:

«Ռուս մամուլ» բաժնում խոսվում է բոլշևիկների նոր կարգախոսի մասին՝ Արևմտյան Հայաստանից հանել ռուսական զորքերը, որոնք համարյա ամբողջությամբ գրավել էին հայկական բոլոր վիլայեթները և հրձվում էր ժողովրդը, թե վերջապես Արևմտահայստանն ազատագրվում է թուրքական լծից, և այսպիսի բոթ: Յ. Առաքելյանը գրում է. «Դուրս բերել ռուսական զորքը Հայաստանից, առանց սպասելու, առանց ձեռք բերելու վերջնական հաշտություն, բորիների ձեռքը տալու նորից հայությանը, որ համաշխարհային պատմության մեջ ենթարկվեց անլուր աղետի միայն նրա համար, որ անցավ ռուսական զորքի կողմը, գրկաբաց ընդունեց նրան, իր լավագույն զավակների արյունը խառնեց ռուս զինվորների արյանը, կնշանակի գործել ամենամեծ դավաճանությունը և ծածկել ռուս անունը նախատինքով ապագա պատմության առաջ»⁹³:

Թերթը արտատպել է ռուսական «Եղինստվո» լրագրում տպագրված Կոնստանտին Ֆելդմանի մի հոդվածը Լենինի մասին, ուր նա որակվում է որպես ամենաձայրահեղ անարխիստ: Նա կողմ է անիշխանության ամբողջ աշխարհում: Եթե նա իշխանության գլուխ անցավ, կսկսվի գլխոտիների դարը, իսկ Մարքսից նա միայն ճարպիկ ֆրագներից է օգտվում, ուրիշ ոչինչ: Նա արյան ծարավ է և նրան ոչինչ չի հետաքրքրում, միայն թե համաշխարհային հեղափոխություն լինի և պարտվեն բոլոր պետությունները⁹⁴:

«Մռայլ է մեր ապագան» առաջնորդողում Առաքելյանը համոզմունք է հայտնում, թե բոլշևիկների կոչը մասսայական զինվորականությանը լքել է տալիս ռազմի դաշտում իր դիրքերը: Սա շատ վտանգավոր է հայության համար, քանի որ եթե դա կատարվի նաև կովկասյան ռազմաձևակառուցում, ապա ամեն ինչ վերջացած կլինի հայության համար: Ուրեմն ամեն կերպ պետք է բոլշևիկներին հեռու պահել կովկասյան ռազմաձևակառուցից: Ավելին, հետաքրքիր է «Մշակի» պահանջը, թե հազարավոր հայ սպաներ ու զինվորներ վխտում են արևմտյան ռազմաձևակառուցում, այնինչ նրանք այսօր անհրաժեշտ են Կովկասյան ռազմաձևակառուցում, ու՞ր են հայրենասեր հայ զինվորներն ու սպաները, ու՞մ համար են նրանք կռվում, երբ հիմնահատակ ավերվում է հայրենի հողը:

1917-ի հոկտեմբերի 27-ին թերթը հայտնում է բոլշևիկյան հեղափոխության մասին, որն, ըստ «Մշակի», սկիզբ է դնելու եղբայրասպան կռվի:

⁹² Նույն տեղում, 1917 թ., N 113:

⁹³ «Մշակ», 1917 թ., N 126:

⁹⁴ Նույն տեղում, 1917 թ., N 136:

«Անդրադառնալի սխալ» հոդվածում Առաքելյանը համոզված է, որ Ռուսաստանը խայտառակ վիճակում է, որի մեջ չի գտնվել վերջին երեք հարյուր տարում: Լավ-վատ նա ունեցել է կառավարություն, որին ճանաչել են բոլորը, այնինչ հիմա Լենինին ոչ ոք չի ընդունում: «Իհարկե, ապագա անաչառ պատմությունը ցույց կտա այդպիսի տհաս քաղաքականության բուրյուր աղետալի հետևանքները: Իհարկե, ապագայում իրենք սոցիալիստները կհամոզվեն, որ մեծ ու անդառնալի սխալ են անում, բայց այլևս ուշ կլինի և երկիրն ահռելիորեն տուժելու է այդ սխալից»⁹⁵: Թերթը շարունակում է, թե շանտաժիստ Լենինը համոզում է միամիտ մարդկանց, թե պետք է հեղափոխությունն ավելի խորացնել: «Ի՞նչ արած, այդպես է: Անտեր եկեղեցուն սատանաներն են տեր լինում և այդ սատանաներից մեծերը Լենինն ու Տրոցկին են, որ առանց հաշիվ տալու հողմ են ցանում՝ փոթորիկ հնձելու մտքով»:

«Վերջին տեղեկություն» բաժնում հայտնվում է, թե Լենինի կառավարության հրատարակված դիպլոմատիկական գաղտնի դաշնագիրը ցույց է տալիս, որ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան պայմանավորված են եղել բաժանել թուրքաց պետությունն իրենց մեջ՝ տալով Սիրիան, Կիլիկիան, Պաղեստինը Ֆրանսիային, Միջագետքը՝ Անգլիային, Չայաստանը՝ Ռուսաստանին: Այդ փաստաթղթի մեջ որևէ խոսք չկա Չայաստանի ավտոնոմիայի կամ առանձին իշխանություն կազմելու մասին: Իսկ «Չաշտության նախօրյակին» առաջնորդողում Առաքելյանը գրում է. «Այո, Թուրքիան ամեն տեսակ խոստումներ կտա բոլշևիկներին և Անդրկովկասի կոմիսարիատին (նախագահ՝ Գեգեչկորի), թե հսկելու է այդ խոստման իրագործման վրա: Մռայլ և հուսահատական է հայ ժողովրդի ապագան: Սեպերատ հաշտությունը եթե կնքվի Թուրքիայի հետ, բերելու է իր հետ հայ ազգի համար սոսկալի աղետ, ի նկատի ունենալով այն պայմանները, որոնց մեջ նա կնքելու է: Եվ այն պատերազմը, որից մենք սպասում ենք ազատություն և անկախություն, բերելու է մեզ կորուստ և մահ»⁹⁶:

«Լենինի կոմունիզմը»⁹⁷ հոդվածում թերթը ծաղրում է նրան, թե նա իշխանություն է հիմնել սվինների վրա. «Այսօր կատարյալ պրոլետարիատի դիկտատուրա է, իսկ Լենինի կառավարությունն՝ ունենալով իր տրամադրության տակ զորամասեր և իշխանական բարձրություն, չի կարողանում ոչ հաշտություն տալ բազմատանջ Ռուսաստանին (Վիլիելմը նոր կառավարությունը չի ճանաչում), ոչ հաց նրա սովատանջ զավակներին և ոչ էլ իրականացնել սոցիալիզմը: Ինչու՞: Ի՞նչ է պատահել: Պատահել է սարսափելի՞ն՝ զորքն ու ժողովուրդը հիասթափվել է, ավելին՝ Լենինը հաջողությամբ ձեր-

⁹⁵ «Մշակ», 1917 թ., N 244:

⁹⁶ Նույն տեղում, 1917 թ., N 251:

⁹⁷ Նույն տեղում, 1917 թ., N 263:

բակալում է իր հետ ոչ համաձայն անհատներին, ժողովներ է ցրում, լրագրերը փակում»։ Սա՞ էր նրա խոստացած հողը գյուղացուն՝ գործարանը բանվորին կարգախոսը։

Սոֆիա Դանիել-Բեկը «Դեպի ձակատ» հողվածում հորդորում է բուլոբին պաշտպանել մեր երկիրը, երբ ռուս զինվորը թողնում է դիրքերը և հեռանում։ Նա դրամի, մտքի և զգացմունքի բոլոր դասալիքներին դեպի ձակատ է հրավիրում, որովհետև ահավոր վտանգի մեջ է մեր երկիրը, մեր կյանքը, մեր ապագան։ Տպագրում են նաև Անդրանիկի կոչը հայ ժողովրդին։ Նույնիսկ Մ. Գորկին է հանդես եկել Լենինի տեռորի դեմ, երբ կաղետական կուսակցության էր...

1918 թ-ի 2-րդ համարում «Ինչ ապագա է մեզ սպասում» առաջնորդողում Առաքելյանը գրում է, թե Գերմանիան, Ավստրիան և Թուրքիան սեպարատ այնպիսի հաշտության պայմանագիր են մեզ առաջարկում, որ նույնիսկ Լենին-Տրոցկի երկյակը դրան համաձայնվել չի կարող, բայց շարունակել պատերազմն էլ չի կարող, քանի որ զորք չունի, եղածն էլ ուղարկում է իրենց հնարած «հակահեղափոխությանը» ձնշելու Ուկրանիայի, Դոնի կազակների դեմ, իսկ մեր ազգային զորամասերն էլ պատրաստ չեն Կովկասի սահմանները պաշտպանելու։ Նա ցավով է նշում, որ կոմունիստների հայ կուսակիցներն էլ աշխատում են, որ նոր կազմվող հայկական զորագնդերի մեջ ևս տարածվի դասալքության թույնը, որը, սակայն կործանումը կլինի հայության, որովհետև դասալիք ռուսի տեղը հայը պետք է կովկասյան ձակատում դիմավորի թուրք ասկյարին։ Հայոց մայրերին, քույրերին նա կոչ է անում հետևել անգլիացի հայրենասեր կանանց օրինակին և բոլոր տղամարդկանց ուղարկել պաշտպանելու հայրենիքը։ Թաթարները ինչպես Կարայազ կայարանում, այնպես էլ Գանձակ-Աղստաֆա երկաթգծի վրա զինաթափում են փախչող ռուս զինվորներին, պարենը խլում, սպանում կամ նրանց թողնում քաղցի ձիրաններում։

Թերթը գրում է, թե Ռուսաստանը կործանվեց և հիմա ծնկաչոք հաշտություն է աղերսում, իսկ մենք ականատես ենք, թե ինչպես այդ փլատակների տակից ազատվելու ձիգեր են անում բոլոր այն ազգերը, որոնց ռուս իմպերիալիզմը բերել մի ընդհանուր տարածքի մեջ էր դրել։ Եվ սա շատ բնական է։ Բայց դժբախտությունը այն է, որ այդ ազգերը, ցեղերը փոխանակ իրար ձեռք մեկնելու, իրար աջակից լինելու, յուրաքանչյուրն իր հերթին զբաղվում է իր սեփական տան կառուցմամբ։ Բայց նրանք այդ կառույցներն ավարտել չեն կարող, քանի որ նրանց գլխին դամոկլյան սրի նման կանգնած է վիլիենյան իմպերիալիզմն իր գայլի ախորժակով և էնվերյան պանիսլամիզմը իր վայրագությամբ։ Իսկ լենինյան դեղատոմսով իրականացվելիք

սոցիալիզմը փորձված և հմուտ գործիչները դա ցնորք են համարում, ավագի վրա շինված մի տուն: Թերթը դիմում է հայագրի գինվորներին, սպաներին, որոնք չորս տարի ծառայել են ցարական բանակում, ուշքի գան և միավորվելով պաշտպանեն հայրենի հողը: Չէ որ հայն էլ է ազգ և այս հողի վրա ապրելու իրավունք ունի, ուրեմն չպետք է սողալ, այլ պետք է ապրել, ուրեմն պատվասիրություն ունենանք, որովհետև այսօր դրա քննությունն ենք հանձնում: Այնինչ թերթը տխրությամբ հաղորդում է, թե Անդրանիկի գլխավորությամբ Թիֆլիսից հավաքագրված 4000 կամավորներից էրգրում են հասել ընդամենը 450-ը, մնացածները փախել են, իսկ սրանք էլ չեն լսում հրամանը դեպի Երզնկա շարժվելու⁹⁸:

1918 թ-ի N 20-ում թերթը գետնեղել է Ռուսաստանի ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար Ստալինի Թուրքահայաստանի մասին ելույթը, ուր նա հայտարարում է, թե հայը կռվող է, բայց քաղաքագետ չէ: Բայց բոլշևիկները հայության անկախացման հարցն են դնում և թող ամենքն իմանան, որ ժողովրդական կոմիսարների խորհուրդն ազգերին ճնշող իմպերիալիստական քաղաքականությանը կհակադրի ճնշված ժողովուրդների կատարյալ ազատագրության քաղաքականությունը:

«Ի՞նչ է մեր ուզածը» առաջնորդում Յ. Առաքելյանը անդրադարձել է ռուսական «Վոզրոժդենիե» թերթի մի հոդվածին⁹⁹, ըստ որի հայերը թեքվել են բոլշևիկների կողմը, որովհետև Բաքվի արտակարգ կոմիսարը Ստեփան Ծահույանն է: Առաքելյանն առարկում է, թե դա միայն ՅՅԳ-ի դիրքորոշումն է, որն, այնուամենայնիվ, ողջ հայ ժողովուրդը չի: Բայց «Յայ ժողովուրդն այսօր ծարավ է զորեղ, հեղինակավոր իշխանության, մի կառավարության, որ կարողանա վերջ տալ թուրք ավազակների արշավանքներին, պաշտպանել հային սպանություններից, ալան-թալանից, սահմանել երկրում կարգ ու կանոն, անդորրություն: Եթե սա կարողանան անեն բոլշևիկները, այն է վերջ տալ սոսկալի անիշխանությանը, հայ ժողովուրդը ոչ մի հիմք չի ունենա մերժել բոլշևիկների իշխանությանը, թեև իր աշխարհայացով, ուղղությամբ դեմ է բոլշևիկյան վարդապետությանը: Յայ ժողովրդի համար միևնույն է, լինի Անդրկովկասյան կառավարության գլուխ Գեգեչկորին, թե Ծահույանը, միայն թե երկրում վերջ դրվի սոսկալի անիշխանությանը, որից ամենից շատ տուժում է հայ ժողովուրդը: Սա իհարկե, մեր անձնական կարծիքն է, բայց կարծում ենք, որ այսպես է մտածում հայ ժողովրդի մեծամասնությունը»¹⁰⁰:

«Յաշտությունը Թուրքիայի հետ և մեր պահանջները» հոդվածում Առաքելյանը գրում է. «Այն սոսկալի հարվածը, որ բոլշևիկ սոցիալիստները

⁹⁸ «Մշակ», 1918 թ., N 13:

⁹⁹ «Վոզրոժդենիե», 1918 թ., փետրվարի 2:

¹⁰⁰ «Մշակ», 1918 թ., N 25:

հասցրին Ռուսաստանին և նրա հետ նաև Կովկասին և, մասնավորապես, հայ ժողովրդին, անօրինակ է պատմության մեջ»¹⁰¹: Նրանք ըստ Առաքելյանի՝ ծվեն-ծվեն են արել զորքը, կազմալուծել պետությունը, սկսել վայրենի քաղաքացիական պատերազմը, ոչնչացրել հայրենասեր լավագույն ուժերին, կարող և քաղաքագետ մարդկանց: Եվ այժմ էլ գլուխները խոնարհեցին Գերմանիայի և Թուրքիայի առաջ:

Եվ 1918 թ-ին N 37-ում թերթի ճակատին գլխատառերով հայտարարություն է. «Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտությամբ Թուրքիան ետ է ստանում ոչ միայն Արևմտահայաստանը, այլև՝ Կարսը, Արդվինը և Բաթումը իրենց շրջաններով»:

Անդրկովկասի սեյմն իր արտակարգ նիստում փետրվարի 18-ին բողոքեց այդ հաշտության դեմ և բողոքներ ուղարկեց բոլոր պետությունների ղեկավարներին:

Գանձակում նորից արյունահեղ կռիվներ են տեղի ունեցել ռուս էշելոնների և թուրքերի միջև:

Ախալքալաքի գավառում մուսուլմանները շրջապատել են 8 գյուղ և կալանավորել Անդրկովկասյան կոմիսարիատի այնտեղ ուղարկած պատգամավորությանը:

Եվ որպես զավեշտ է հնչում Վեհիբ փաշայի հեռագիրը դատարկել Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները, քանի որ բուլշևիկների հետ այդպիսի պայմանավորվածություն ձեռք է բերված:

«Մշակը», 1918 թ-ի N 61-ում արտատպել է «Ռաբոտչեն սլովո» ռուսական թերթում տպագրված Մաքսիմ Գորկու հոդվածը, ուր նա այն միտքն է առաջ քաշում, թե ժողովրդական կոմիսարներն էլ, որոնք միայն հաշտարարությամբ են իբր ժողովրդի կամքը կատարում, չեն ամաչում ֆիզիկական ուժ էլ գործադրելուց նրանց կամքը կոտրելու համար: Սվիններով և գնդակով կամք չես արտահայտի: Նրանք չեն քաշվում ոչ մի միջոցից, ինչպես չի քաշվում ոչ մի կառավարություն սպանություններով՝ գնդակահարելով և իր հետ անհամաձայններին ձերբակալելով, չքաշվելով ոչ սրից, ոչ էլ բամբասանքից:

Շուտով «Մշակը» հայտարարում է սրբազան պատերազմի սկիզբը: Բանն այն էր, որ Տրապիզոնի բանակցությունների ժամանակ համաձայնության չեն եկել, և Թուրքիան շարունակում է պատերազմը:

Այսպիսով՝ Անդրկովկասը հայտարարված է պատերազմական դրության մեջ, ուրեմն կեցցե պատերազմը, որովհետև Թուրքիայի ծրագիրն էր նվաճել ոչ միայն Անդրկովկասը, այլ նաև ողջ Կովկասը, իսկ պաշտպանողական պատերազմ մղելը յուրաքանչյուր հայի գործն էր: Սակայն նաև զգու-

¹⁰¹ Նույն տեղում, 1918 թ., N 34:

շանում են հայ մտավորականները: Բանն այն էր, որ թաթարները կրոնական-ցեղական նկատառումներով Թուրքիայի հետ չէին պատերազմի, վրացիներն էլ, ինչպես միշտ, խուսափում են կռվից և մարտի դաշտում միայն հայերն են մնում, որոնց հաղթելու հնարավորությունը չնչին էր:

«Թուրքերը՝ չբավարվելով Կարս-Արդահանով, չնայած զինադադարին, արդեն Իգդիրի վրա են հարձակվում», - հաղորդում է Երևանի հայոց ազգային խորհրդի նախագահ Մուսինյանը. դա 1918 թ-ի ապրիլի 15-ին թվագրված հաղորդումն էր: Եվ շարունակությունը, թե արդեն 200-ից ավելի գյուղեր ոչնչացված են, 150 հազարից ավելի բնակիչներ փախել են, դրան գումարենք նաև 100 հազար փախստականների հոսքը Իգդիրից: Շատ շտապ օգնություն է հարկավոր, գոնե գարի չկա հաց թխելու համար¹⁰²:

«Նոր հարվածը» հոդվածում¹⁰³ Առաքելյանը գրում է, թե մինչ մենք Բաթումից լավ լուրեր էինք սպասում, չարագուշակ լուրեր հասան, թե մայիսի 15-ին թուրքերը ռմբակոծել են Ալեքսանդրապոլը և շարժվում են առաջ: «Թուրքերի արշավանքն Ալեքսանդրապոլի վրա և նրանց նորանոր պահանջները ոչ մի կասկած չեն թողնում, որ որոշ ծրագիր կա կազմված և այդ ծրագիրը ոչ մի կապ չունի Բաթումում վարվող բանակցությունների հետ: Այդ բանակցությունները լոկ դեկորացիաներ են, շատ լավ պաճուճված թուրքերի կողմից: Իսկ ծրագիրն է ստեղծել Անդրկովկասում երկու ավտոնոմ մարմին՝ Վրաստան և Թաթարստան կամ Ազերբայջան, իսկ հայաբնակ գավառները միացնել Թուրքիային»:

Ալեքսանդրապոլն առանց մարտերի գրավելուց հետո թուրքերն արդեն արշավում են Ղարաքիլիսայի վրա, գրավել են Ջալալօղլին, հայերը գլխապատահ փախչում են, բայց նրանց ճանապարհն էլ դեպի Ռուսաստան փակում են ինգուշները, չեչենները: «Մշակը» սարսափների մեջ է, ախր 500 հազար արևմտահայ գաղթականներին այժմ միացել են մի այդքան էլ արևելահայեր: «Չայաստան» թերթի խմբագիր Վահան Թոթովենցն էլ Առաքելյանին ձայնակցելով՝ հորդորում է կանգ առնել, դիմագրավել թշնամուն, այլ ճանապարհ չկա:

Մայիսի 23-ին թերթը տպագրել է գեներալ Սիլիկյանի հեռագիրը, թե իր գորքերը հարձակվել են թուրքերի վրա և գրավել Սարդարապատ կայարանը և գյուղը, շարժվում են Սարգարայի ուղղությամբ, իսկ դասալիքները կամաց-կամաց վերադառնում են:

Եվ 1918-ի հուլիսի 9-ին թերթը հայտնում է Չամբարձում Առաքելյանի մահը, որը կազմակերպել էին երեք տեռորիստներ հենց մեծ հրապարակախոսի տանը:

¹⁰² «Մշակ», 1918 թ., N 86:

¹⁰³ Նույն տեղում, 1918 թ., N 93:

Գրականության, արվեստի, լուսավորության ու կրթության հարցերը «Մշակում»

Ինչպես Արծրունու շրջանում, այնպես էլ հետագայում «Մշակը» միտումնավոր գրականության պաշտպան էր, և թերթի հետ համակարծիք էին ժամանակի առաջավոր բոլոր գրողները: Նրանք գտնում էին, որ գրողները պետք է ստեղծեն «գործնական գաղափարներ հայտնող գրվածքներ»: Ըստ Արծրունու հետնորդների՝ միտումնավորությունը ոչ թե վնասում էր գրականությանը, այլ բացարձակ անհրաժեշտություն էր: Նրանք պաշտպանում էին գրականության մեջ կյանքի ճշգրիտ արտացոլման հարցը և մերժում կյանքից կտրված ու սենտիմենտալ մորմոքներ պարունակող գրական գործերը:

Այս թվականների արևելահայ մամուլը շարունակում էր գրականության ու արվեստի հարցերի լուսաբանումը: Տպագրվում էին նոր հանդեսներ՝ «Յանդես գրական և պատմական», «Թատրոն», «Ազգագրական հանդես», «Արաքս», «Լուսն», որոնց էջերում մեծ տեղ էր հատկացվում գրականության ու արվեստի, բանասիրական հոդվածներին: Մամուլի օրգաններում շրջափվում էին ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալական ու ազգային հարցեր: Տպագրվում էին համաշխարհային ու ռուս գրականության աչքի ընկնող գործերը, մեկնաբանվում էին գիտական աշխարհի նորությունները, գրվում էին հայագիտական նոր ուսումնասիրություններ, զարգանում էր պատմագրությունը:

Հայ գրականության մեջ իր հաղթանակն էր տոնում ռեալիզմը, քննադատվում էր «արվեստն արվեստի համար» տեսությունը: Բայց այդքանով հանդերձ Արծրունու հետնորդները չէին ըմբռնում հայ պոեզիայի նոր շրջանը: Թերթի էջերում համարյա բացակայում էր բանաստեղծությունը, բացառությամբ միայն Ալ. Ծատուրյանի, Ռ. Պատկանյանի գործերը:

«Մշակը» տպագրում է Ղ. Աղայանի, Լեոյին, Ավ. Ահարոնյանի, Ա. Ծահնագարյանի, Ստ. Տեր-Ավետիսյանի, Տիգրան Զավենի, Պերժ Սյունու, Գ. Բաշինջաղյանի գործերը: Մեծ տեղ է հատկացվել թարգմանական գրականությանը: Տպագրել են Կորոլենկոյի, Գ. Պոտոպենկոյի, Մ. Գորկու, Պուշկինի, Բարանցկիչի, Անդրե Լավրդոնի, Բ. Խոտենսկու, Մարսել Պրևոյի, Գի դը Մոպասանի, Իվան Վազովի, Մ. Գարաշանի, Կարմեն Սիլվայի, Ա. Ծիվանսկու, Ալֆոնս Դոդեի, Անատոլ Ֆրանսի, Հենրիկ Սենկևիչի և բազմաթիվ այլ գրողների գործեր: Եվ եթե թերթը քիչ է տպագրել արևմտահայ գրողների գործեր, սակայն բազմիցս անդրադարձել է դրանց և որևէ տարբերություն չի դրել արևելահայ և արևմտահայ հատվածների և նրանց գրականության միջև: Բազմաթիվ բանասիրական, գրաքննադատական, հրապարակախո-

սական հողվածները դրա ապացույցն են: Առանձնապես թերթը մեծ տեղ էր հատկացնում գրաքննադատությանը, որն արդեն ձևավորվում էր որպես գիտություն: Թերթի «Բանասիրական», «Մատենագրություն», «Խառը լուրեր», «Կիրակնօրյա գրույցներ», «Մանրանկարներ», «Օրեցօր», «Շաբաթե շաբաթ», և այլ բաժինները ղեկավարում էին Ալ. Քալանթարը, Յ. Առաքելյանը, Լեոն, Տիգրան Յովհաննիսյանը, Վահան Նալբանդյանը, Խաչատուր Մալումյանը (էդ. Ակնունի), Քր. Կարա-Մուրզան, Մակար Եկմայանը, Ստ. Մալխասյանը, Ալ. Ծատուրյանը, Վրթ. Փափազյանը, Ա. Աթանասյանը, իսկ հետագայում նաև Ալ. Ծիրվանզադեն, Վ. Տերյանը, Յ. Սուրխաթյանը, Մ. Սարյանը, Գ. Ղարիբջանյանը, Կոմիտասը, Յ. Սաղաթեյանը, Աշ. Յովհաննիսյանը, այլոք:

Յ. Առաքելյանը, որն այս թվականների թերթի գլխավոր աշխատակիցներից էր, հետագայում նաև թերթի խմբագիր, հաճախ էր հանդես գալիս գրաքննադատական հողվածներով, թատերական գրախոսություններով: Նա շատ բարձր է գնահատել Գ. Սունդուկյան գրողին: Խոսելով նրա «Քանդած օջախ» ստեղծագործության հաջողության մասին՝ հեղինակն ընդգրկում էր հերոսների կենսունակությունը, նկատելով, որ 30 տարի հետո էլ գրողի նկարագրած տիպերը շարունակում են ապրել մեր շրջապատում¹⁰⁴:

Յ. Առաքելյանը գրախոսական է տպագրել Ղ. Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» գործի մասին: Նա գտնում է, որ այդ գիրքը քննել անհնար է, որովհետև այն մի ուղղություն է բերում, որն, ըստ Առաքելյանի, գրականության մեջ շեղում է նշանակում այն օգտակար շավիղից, որով ընթացել է մեր գրականությունը: Նա էլ է գտնում, թե Աղայանը մանկական գրքերի անզուգական հեղինակ է, սակայն չի ընդունում այս «ինքնակենսագրական» վեպը: Յամարյա նույն կերպ է վարվում նաև Պռոշյանի «Յուզիկներ» գրքի կապակցությամբ: Նա գրում է. «Մենք համոզված ենք, որ «Սոս և Վարդիթերի», «Յացի խնդրի» հեղինակն իր ժամերն ավելի օգտակար կարող էր գործածել, քան թե գործ է անել այս անգամ: Սա գրական վաստակ չի, այլ հեղինակի նեյնիմները»¹⁰⁵:

Այլ կերպ է Առաքելյանն արտահայտվում Ծիրվանզադեի «Ունե՞ր իրավունք» նոր դրամայի մասին, որը բեմադրել էր Թիֆլիսում: Քննադատն այս դրամային մոտենում էր վերաբերմունքի մասին ծայրահեղ կշռաչափով՝ ժխտելով դրամայի և՛ գաղափարական, և՛ գեղարվեստական, և՛ բարոյա-

¹⁰⁴ «Մշակ», 1902 թ., N 247:

¹⁰⁵ «Մշակ», 1894 թ., N 119:

կան արժեքները: Ծիրվանգաղեի հարցադրումները և մանավանդ հարցերի լուծումն ամբողջովին կտրելով իրականության մեջ խմորվող տրամադրություններից, քննադատը ոչ մի արժեք չէր տեսնում այդ դրամայի մեջ և Ծիրվանգաղեին մեղադրում նույնիսկ դեկադենսիսն տուրք տալու գործում¹⁰⁶: Թերթի հաջորդ համարում Ծիրվանգաղեի նույն պիեսին է անդրադառնում նաև Արտաշես Գրիգորյանը, որը քննադատում է «Նովոյե օբոգրենիե» լրագրի գրաքննադատին այն բանի համար, որ վերջինս իրենց թերթում չնայած քննադատել է դրաման, թե այն որևէ նոր բան չի բերում հայ դրամատուրգիայի ասպարեզում, ծանծրալի է և այլև, սակայն նաև գովաբանում է Ծիրվանգաղեին, թե նրանից վարպետ գրող չկա հայ իրականության մեջ: «Մշակի» հեղինակը գտնում է, թե կա անաչառ քննադատություն, իսկ գալարումների հարկ չկա, որովհետև այդպիսի հեղինակները հասարակական պարտականությունները հասկացող մամուլին արջի ծառայություն միայն կարող են մատուցել: Ծիրվանգաղեն իր դրաման պաշտպանում է «Լումա» հանդեսում¹⁰⁷: Սակայն «Մշակը» փաստում է, թե այդ գործը նաև «Թիֆլիսկի լիստոկն» է քննադատել, «Բաքու» լրագրի Թիֆլիսի թղթակիցը, «Մուրժ» ամսագիրը...: «Մշակը» մեջ է բերում Բելինսկու միտքը՝ «Մեր ժամանակի ոգին այնպես է հնացել. եթե նա կբավականա «Թռչունի երգով», եթե նա իր համար աշխարհը կստեղծե, որ ներկայի պատմական և փիլիսոփայական իրականության հետ ոչինչ կապ չունի, եթե նա կերևակայե, թե աշխարհը անարժան է նրան, թե նրա տեղը ամպերի վրա է, թե աշխարհային տանջանքներն ու հույսերը չպիտի վրդովեն նրա խորհրդավոր երազները: Այդպիսի ստեղծագործող ուժի գործերը, որքան էլ մեծ լինի այդ ուժը, չեն մտնի կյանքի մեջ, համակրանք և ոգևորություն չեն զարթնացնի ոչ ժամանակակիցների և ոչ էլ ապագա սերնդների մեջ»¹⁰⁸:

Իհարկե, «Մշակը» կարող էր քննադատել ինչպես այս, այնպես էլ «Եվգինե» դրամաները, քանի որ դրանցում սահմանափակ էր Ծիրվանգաղեի աշխարհայացքը: Նա չէր տեսնում հասարակական կյանքում կնոջ ազատագրման համար անհրաժեշտ սոցիալական հիմքերը և այդ հարցը բաժանում էր հասարակական շարժումից: Սակայն իրավացի չէր թերթը, երբ Ծիրվանգաղեի նման մի խոշոր հեղինակի միջակություն էր համարում, քանի որ այս դրամաներում հեղինակը քննադատում էր լիբերալիզմը, որը կանանց ազատագրության հարցում զանազան տեսություններ էր առաջադրում, սակայն որոնք գործնականում կիրառում չէին գտնում: Չպետք

¹⁰⁶ Նույն տեղում, 1901 թ., N 244:

¹⁰⁷ «Լումա», 1903 թ., N 2:

¹⁰⁸ «Մշակ», 1903 թ., N 105:

է աչքաթող անել նաև այն հանգամանքը, որ թերթը թշնամական դիրք էր բռնել Ծիրվանզադեի նկատմամբ դեռ Արծրունու շրջանից: Բանն այն է, որ Ծիրվանզադեին բազմաբնույթ հողվածներով հանդես գալով «Մշակում», հանկարծ կտրուկ շրջադարձ է կատարում՝ հրաժարվելով թերթից, որն էլ իր դեմ է հանում մշակականների ողջ բանակը: Իսկ Արծրունուց հետո նա բոլորովին հակադրվեց «Մշակի» փայփայած «կուսակցության» գրականության զարգացմանը, թե «Մշակի» քարոզած «կուսակցությունը» մանրացնում է գրականության առջև դրված խնդիրը:

Եվ եթե մինչև Քալանթարի մահը թերթը շեշտված չափով միտումնավոր գրականության կողմնակիցն էր և գերազանցապես տեղ էր տալիս իր կուսակից գրողներին ու գործիչներին, ապա խմբագիր դարձած Յ. Առաքելյանը լրագրի էջերը բացեց «այլախոհ» գործիչների առաջ ևս և թերթի աշխատակիցներ դարձան Ալ. Ծիրվանզադեն, Վ. Տերյանը, Ծ. Կուրղինյանը, Ատրպետը: Թերթն իր էջերը տրամադրեց Ստ. Ծահունյանին, Ալ. Մյասնիկյանին, Պ. Մակինցյանին, այլոց:

Թերթի կարծիքով ինքնուրույնության, ազգային դեմքը պահպանելու համար հայ գրականությունը ոչ թե պետք է կառչի անցյալին ու պարփակվի իր մեջ, այլ պետք է մրցակցի եվրոպական ու ռուսական առաջավոր արվեստի հետ, հետևի կյանքի հասարակական ու հոգեբանական տեղաշարժերին:

Մի հետաքրքիր հանգամանք ևս: Տեսական-ստեղծագործական հարցերին «Մշակը» հիմնականում անդրադարձել է դրամատուրգիային և թատրոնին վերաբերող հրապարակումներում: Դա կարելի է բացատրել այդ ժանրի, ինչպես նաև թատրոնի հայ իրականության վրա ունեցած ներգործուն դերով և արդիական բովանդակությամբ: Սա մենք խիստ կարևոր ենք համարում, քանի որ թերթը տասնամյակներ շարունակ իր գաղափարական ուղղվածությամբ սերտորեն կապված էր հայ իրականության հետ, ձգտում էր խթանել արդիական երևույթները և յուրովի պատասխան տալ կյանքում ծառայած հարցերին: Ահա թատրոնն արվեստի այն ոլորտն էր, որն ուղղակի հենց բեմից սերտ կապ էր ստեղծում հանդիսատեսի, լայն իմաստով հասարակության հետ, շարժում էր միտքը, ձգտում էր նրան հուզող հարցերին պատասխան գտնել:

Գրական որևէ երկրի արժևորման մեջ սթափ ու սկզբունքային մտքերի հետ միասին երբեմն դրսևորվում էին անձնական կրքեր, սեփական սկզբունքների բևեռացումներ, գաղափարական անհանդուրժողականություն, որոնք, ցավոք, հայտնի չափով խաթարում էին արվեստագետի և ընդհանուր գեղարվեստական մտքի ներդաշնակ առաջընթացը: Որոշ իմաստով նման

տպավորություն է թողնում Լեոյի և «Մշակի» բանավեճը: Լեոն, որ տասնյակ տարիներ «Մշակի» առաջատար գործիչներից էր, դարձել էր դաշնակցության օրգան «Յորիզոնի» աշխատակից և այս թերթում հանդես է գալիս, պաշտպանելով Ծիրվանզադեի¹⁰⁹, որի «Արմենուհի» պիեսը քննադատվել էր «Մշակի» էջերում: Թերթի աշխատակից բժշկապետ Բ. Աղասարյանն անդրադարձել էր պիեսին, և, ներեղություն խնդրելով հեղինակից, որպես ոչ մասնագետի, փոքրիկ դիտողություններ արել նոր ստեղծագործության վերաբերյալ: Անմիջապես հետևել էր Ծիրվանզադեի պատասխանը «Երբեք» հոդվածով¹¹⁰, ուր նա գրում էր, թե մի ինչ որ բժիշկ, իրավաբան, գյուղատնտես, ինժեներ, վեր են կենում իրենց տեղից և հրապարակորեն դատավճիռ ու դատողություն տալիս «մանավանդ թատրոնի և գեղեցիկ գրականության մասին» և պահանջում, որ հասարակությունն ու մամուլը դրա առաջն առնեն: «Մշակը», բնականաբար, պաշտպանում է իրենց հեղինակին և եզրակացնում, թե այդ դեպքում տարրական մի քանի դասարան ավարտած Ծիրվանզադեն էլ իրավունք չունի գրելու ճարտարապետության, նկարչության, արվեստի և այլ հարցերի մասին: Յ. Առաքելյանը հարձակվում է Լեոյի վրա՝ նշելով, թե ոչ վաղ անցյալում (1908 թ., N 52) «Երկու խոսք Լեոյի գրածի առթիվ» հոդվածում («Մշակ», 1908 թ., N 26) նա դատապարտել է Ծիրվանզադեին, իսկ իրեն Յ. Առաքելյանին անվանել Արծրունու համով-հոտով առաջնորդողների նոր հեղինակ: Մինչդեռ հիմա մշակականներին պահպանողական ու կղերական է համարում միայն նրա համար, որ դաշնակները տոնեն նրա հոբելյանը: Բանավեճն, իհարկե, սուբյեկտիվ տպավորություն է թողնում:

«Մշակը» յուրովի է անդրադարձել Ծանթի «Յին աստվածների» շուրջ ծավալված քննարկումներին¹¹¹: Ճիշտ է, թերթը ռեալիստական գրականության կողմնակից էր և դեմ էր սիմվոլիզմին, բայց այս դեպքում արդեն թերթի գործիչները և առաջին հերթին Յ. Առաքելյանը Ծանթի կողմնակիցն էին որպես հայ գրականության տաղանդավոր ներկայացուցիչ: Ծանթի ստեղծագործությունների վերաբերյալ ուրույն դիրքորոշումը ցույց է տալիս, որ «Մշակն» այս դեպքում հանդես է բերել լայնախոհեմություն, գրական նոր երևույթներին ուշադրությամբ և ոչ միանշանակ մոտեցման կարողություն:

Յ. Առաքելյանն, օրինակ, պոեզիան գնահատում է սոցիալական խնդիրների տեսանկյունից, քննադատաբար վերաբերվում այն պոետներին, որոնք կյանք են երգում, փառաբանում կյանքը, հաճախ մոռանալով

¹⁰⁹ «Յորիզոն», 1911 թ., N 24:

¹¹⁰ Նույն տեղում, 1911 թ., N 22:

¹¹¹ «Մշակ», 1912 թ., N 60:

այդ կյանքի իրական պատկերը: «Դեռ 10 տարի առաջ,- գրում է Առաքելյանը,- Հայաստանում հարյուր հազարավոր հայեր, մեր եղբայրներն ու քույրերը, թրի ու սրի, կրակի ձարակի զոհը դարձան: Այս րոպեիս Հայաստանում սով է, Բիսկյանի մեջ 40 հայ մանուկներ, 6-10 տարեկան, մեռել են անթոթությունից»¹¹²:

1912 թ-ի մարտին թերթը հայտնեց հայ մեծ դրամատուրգ, թերթի ավագագույն գործիչ Գաբրիել Սունդուկյանի մահվան լուրը: Թերթը զետեղել է Սունդուկյանի կտակը, որը մեծ դրամատուրգը նվիրել էր «Մշակի» խմբագրությանը, որը Հ. Առաքելյանը մի տաղանդավոր բանաստեղծություն է անվանել¹¹³:

Ակնհայտ դարձավ, որ 1910-ական թվականներին թերթը պարբերաբար անդրադառնում էր ընթացիկ գրականության հարցերին՝ ուժեղացնելով ու շեշտելով կյանքի ու մշակույթի անմիջական կապը: Չէին մոռացվում ոչ հեռավոր, ոչ էլ մերձավոր դասականները, բայց և ուշագրավ է, որ թերթը դրսևորում է առավել լայնախոհ հայացք, ձգտում է տարաբնույթ նյութերով ստեղծել հայ մշակույթի համայնապատկերը: Ահա ինչու մենք փորձում ենք երբեմն էլ նկարագրական ոճով իմի բերել արծածվող հարցերի ամբողջությունը:

Առաքելյանը այն լայնախոհ մտավորականն էր, որ խմբագիր դառնալուց անմիջապես հետո «Մշակում» զետեղեց իր հասցեին գրված Ց. Խանգաղյանի, Պ. Մակիցյանի, Վ. Տերյանի հենց իր դեմ գրված նյութերը, որոնցում հողվածագրերը պաշտպանում էին Հովհ. Թումանյանին: Սակայն ոչինչ դրական չտեսնելով, սրանք էլ մի այլ ծայրահեղության մեջ էին ընկնում Ալ. Ծատուրյանի պոեզիայի գնահատման գործում: Հ. Առաքելյանը պատասխան հողվածում բացատրում է, թե Հովհ. Թումանյանին նա ոչ թե որպես բանաստեղծ է քննադատում, այլ իբրև մարդու և «Հորիզոնի» աշխատակցի: Վ. Տերյանը հրաժարվում է աշխատակցել «Մշակին», բայց ամիսներ անց համաձայնվում է: Կրկին անդրադառնալով Պ. Մակիցյանի նամակի մի շարք կետերին՝ Առաքելյանը գրում է. «Ես, այնուամենայնիվ, Պ. Մակիցյանի, Վ. Տերյանի և Ց. Խանգաղյանի մեջ նկատում եմ անկեղծություն, համոզմունքների տոկունություն և իրենց համոզմունքները պաշտպանելու երիտասարդական եռանդ և որքան էլ նրանք, իմ կարծիքով, որոշ հարցերում սխալ են ըմբռնում, սխալ պրիզմայով են դիտում, բայց ես կարող եմ միայն հարգանքով վերաբերվել նրանց և սպասել նրանցից այն գործունեությունը, որ հայ ժողովուրդն իրավունք ունի սպասել երիտասարդ ուժերից, որոնք ունեն

¹¹² Նույն տեղում, 1909 թ., N 1:

¹¹³ Այս մասին մանրամասն տես ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հանդեսի 1912-ի 2-3 համարի մեր հողվածը:

որոշ և տոկուն համոզմունք և լայն աշխարհայացք»¹¹⁴: Ինչ վերաբերում էր թերթի էջերում ծայրահեղ «ձախ ուժերին» տեղ տալուն, ապա Առաքելյանի համոզմամբ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի իր կարծիքը հայտնելու և թերթն այս իմաստով իր էջերը տրամադրում է շատերին, չնայած հաճախ տարակարծություններ ունի նաև նրանց հարցադրումների նկատմամբ:

Յ. Առաքելյանի «Մշակը» գետեղել է Ծիրվանգաղեի «Յերոսի վերադարձը» պատմվածքը՝ նվիրված առաջին համաշխարհային պատերազմին: Նույն թեմային էր նվիրված նույն հեղինակի «Նամակը» պատմվածքը, Ստ. Զորյանի «Վիրավորների մոտ» ակնարկաշարը, Ալ. Ծատուրյանի «Գարուն է գալիս» պատկերը իբրև նվեր ռազմաշունչ հայ երիտասարդությանը, Լ. Մարկոսյանի «Դեմի ավետյաց երկիր» հոդվածը հայ կամավորական խմբերին նվիրված, Ատրպետի «Դեպի թուրքաց Յայաստան» հոդվածաշարը: Յետաքրքրական մի փաստ ևս: Մինչ այս բանաստեղծությանը սյուներ չտրամադրող «Մշակը» սկսում է տպագրել Վահան Տերյանի «Յոզևր Յայաստան» հոդվածաշարը, «Միթե վերջին պոետն եմ ես», «Երկիր Նաիրի» և հայրենասիրական գողտրիկ այլ բանաստեղծություններ, Ալ. Ծատուրյանի «Դարավոր երազ», Գուրգեն Յայկունու «Կռիվ անպարտ» բանաստեղծությունները, որոնցում կոչ է արվում հայ կորյուններին մտնել գոռ փոթորիկի հորձանուտը՝ ազատագրելու ավետյանց երկիրը: Յամաշխարհային պատերազմի այս ահեղ օրերին, երբ դրված էր Արևմտահայաստանի լինել-չլինելու հարցը, բնական էր նաև Արծրունու հետնորդ Յ. Առաքելյանի ոգևորությունը միայն լինել և այն էլ սեփական ուժերին ապավինելով: Ահա ինչու Գ. Յայկունու, Գ. Սկրտումյանի «Վառեք ջահերը», «Դեպի կռիվ» բանաստեղծությունները նվիրված հայ կամավորական ջոկատներին, որոնք ժամանում էին աշխարհի տարբեր ծայրերից, սեփական ուժերին ապավինելու ներշնչելով ժողովրդի լայն զանգվածներին: Այս օրերին էին տպագրվում Ծ. Կուրդինյանի «Ձեզ տամ...», «Ժիր հոգիս», «Կարոտ», Յայկ Տևկանցի «Վանա վերջալույսը», Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի «Դու հպարտ ես, իմ հայրենիք», «Մշուշի միջից», «Բարակիրան նաիրուիին ինձ ժպտաց» բանաստեղծությունները: Թերթը հայտնում է, թե համաշխարհային գրականության հսկայի՝ Լև Տոլստոյի դուստր Ալեքսանդրան ժամանել է Վան և որպես գթության քույր է աշխատում: Ձետեղել են նրա կոչը՝ ուղղված ողջ աշխարհի մարդկությանը և մասնավորապես ռուսներին՝ օգնել մահմեդականների սարսափներից ու քստմանելի արարքներից հյուծված ու թոշնած հազարավոր հիվանդներին, ծերերին, մանուկներին, կանանց¹¹⁵:

¹¹⁴ «Մշակ», 1914 թ., N 36:

¹¹⁵ «Մշակ», 1915 թ., N 131:

Ծիրվանգաղեն «Մի նոր գիրք» հոդվածում խոսում է Մ. Գորկու խմբագրությամբ ռուսերեն լույս տեսած մեծահատոր «Պոեզիա Արմենիի» գրքի մասին, որի կազմանը մասնակցել էին Վահան Տերյանը, Լևոն Քալանթարը (Ալեքսանդր Քալանթարյանի որդին) և Պողոս Մակինցյանը: Առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի գլխին կախված արհարվիքի օրերին թերթն առաջ է քաշում հոգևոր վերածնության, ազգային արժեքները պահպանելու սկզբունքը:

«Մշակն» առանձին հոգատարություն է ցուցաբերում արևմտահայ գրական գործիչների, մտավորականության գործունեությանը, մեծ տեղ հատկացնում նրանց գործերին ու գործունեությանը վերաբերվող նյութերին: Ընդ որում, թերթը արևմտահայ գրական իրողությունները հաճախ առնչում է Թուրքիայի քաղաքական կարգերի մերկացմանը և ժողովրդի կացությանը: Եստ հետաքրքրական է Արփիար Արփիարյանի «Լուսաբեր» (Կահիրե) թերթի համար գրված առաջնորդողը, ուր Առաքելյանը կանխագուշակում է, որ ռուս-թուրքական ընդհարումը տեղի է ունենալու եթե ոչ այս գարնանը, ապա շատ շուտով, իսկ մենք մեր անհոգ դանդաղկոտությամբ այդպես էլ ինքնապաշտպանության մասին միայն խոսում ենք: Թերթը մեծ տեղ է տվել Արփիարյանին (Չայկակ), իսկ նրա սպանության և գործի քննության օրերին անընդհատ ընթերցողներին տեղյակ էր պահում գործի մանրամասներին: Պատժառը միայն այն չէր, որ Արփիարյանը «Մշակի» վաղեմի առաջատար աշխատակիցն է եղել (1878-1908 թթ.), այլև այն, որ թերթը մի հայտնի չափով պաշտպանում էր նրա ազատական հայացքները, մասնավորապես արևմտահայության ազատության հարցում:

Անդրադառնալով Չերազի հայրենանվեր գործունեությանը, թերթը հայտնում է, թե Փարիզի հայտնի Էրնեստ Լըրուրի հրատարակչական ֆիրման լույս է ընծայել նրա «Յայ բանաստեղծները» նոր ժողովածուն, ուր տեղ են գտել Պ. Դուրյանի, Ռ. Պատկանյանի, Սայաթ-Նովայի, Գ. Դոդոխյանի, Մ. Նալբանդյանի և Խորեն Լուսինյանի երկերի թարգմանությունները ֆրանսերեն: Գարեգին Լևոնյանը Չերազի այս գործը համարում է հայրենասիրական մեծ աշխատանք, որովհետև հայ դասականներին եվրոպացիներին ներկայացնելն անհրաժեշտ է¹¹⁶:

Թերթի թղթակից Յովհ. Գազանձյանը սկսում է «Թուրքահայ գրակա-նությունը 1908 թվականին» լրջմիտ հոդվածաշարը, գնահատելով Յակոբ Սիրունիի «Մթնշաղ», Վահան Թոթովենցի «Ավերակ», Մկրտիչ Աճեմյանի «Թրթռուն հանգեր» գործերը, որոնք մնայուն արժեք էին:

¹¹⁶ «Մշակ», 1914 թ., N 96:

Արևմտահայ բանաստեղծ-ուսուցիչ Թովմաս Թերզյանի մահվան կապակցությամբ թերթը բարձր է գնահատում նրա դերը ֆրանսիական գրականության թարգմանության գործում՝ ընգրկելով նրա մասին, ուր կարդում ենք. «Անմոռանալի են իր քնարի մի քանի հրատուչոր տողերը: Արշալույսի ցողը արար կհամարի շուշանի պայծառություն: Գեղեցիկը խողխողելը ամենեն տգետ ոճիրն է: Ինքն է, որ մեզի ծանցուցած է Ծեքսպիրը, Յուլիոս, Լամարթինը, Սյուսեն, Բերանժեն և ուրիշ մեծ գրագետներ, որոնց գործերը մանրակրկիտ բացառությամբ մեզի կկարդար, ցուցանելով ուր կկայանա անոնց գեղեցկությունն ու արվեստը, զգացնելով մեզի անոնց հրապույրը¹¹⁷»:

Թերթը ողջունում է Վ. Թեքեյանի և Ս. Կարձիկյանի նախածնունդով Պոլսում «Շիրակ» գրական-քաղաքական շաբաթաթերթի հրատարակումը, որը ըստ հեղինակների, հետևելու էր Արփիարյանի ավանդույթներին: Առաջին համարներն արդեն լավ տպավորություն են թողել, ուր գետեղել են Արփիարյանի մինչև այդ անհայտ գործերը: «Թուրքահայ գրողներ» բաժնում տեղ է գտել մի հոդված Գր. Ջոհրայի «Խղձմտանքի ծայների» մասին. «Կորովամիտ, տաղանդավոր գրող է Ջոհրայը, որուն առջև ժամանակին գրիչները ակնածանք ու պատկառանք կունենան»¹¹⁸: Գրախոսն ափսոսում է, որ տաղանդավոր փաստաբանի, երեսփոխանի, գրողի գործունեությունը չի ժողովրդականացվել, ըստ ամենայնի, նրա գրվածքների մեծամասնությունը ողողված է թերթերում, հանդեսներում: Այս հատորը վերջապես հնարավորություն է տալիս աղքատ դասակարգին մոտիկից ծանոթանալու նրա գործերին:

«Մշակն» անդրադարձել է նաև Սիամանթոյի «Կարմիր լուրեր բարեկամես» գրքի լույսընծայմանը, ուր գրում են, թե Սիամանթոն արյան մղձավանջի և ըմբոստության երգիչ է: Այս շարքը իսկապես մի կալեյդոսկոպ է, որտեղ բանաստեղծը մեկ առ մեկ պատկերում է այն անտանելի, անպատմելի չարչարանքները, որոնց ենթարկվում է ողջակեզ հայ ժողովուրդը Թուրքիայի բարբարոս խուժանի ձեռքում: Այդ դժոխային իրականության մեջ էլ մահվան սասուռը փոխարինվել է կյանքի տենչով, անհետացման զգացումը՝ ապրելու բնագոյով: Թերթը հետևողականորեն ընթերցողներին ծանոթացնում էր նաև ռուս և համաշխարհային գրականության նշանավոր ներկայացուցիչների ստեղծագործություններին, առանձնացնում առնչությունները, որոնք կային հայ և մյուս ազգերի մշակույթների միջև, իսկ նպատակը մեկն էր՝ հայ ընթերցողին մասնակից դարձնել համաշխարհային գեղարվեստի զարգացմանը, ծանոթացնել հին և նոր գրական գոհարներին: Առավել մեծ

¹¹⁷ Նույն տեղում, 1908 թ., N 40:

¹¹⁸ Նույն տեղում, 1909 թ., N 142:

ուշադրություն էին դարձնում թերթի գործիչները մեր ժողովրդի ճակատագրին նման ժողովուրդների գրողների գործերին, քանի որ նրանց հուզող հարցերը հեգեհարազատ էին նաև հայ ժողովրդին:

«Մշակը» հատուկ ուշադրություն է դարձրել ռուս գրականության հռչակավոր դեմքերին՝ զարգացնելով այն տեսակետը, թե ռուս գրականությունն ու արվեստն իրենց առաջադիմական բովանդակությամբ ուսումնառության դպրոց են հայ գրականության և մշակույթի համար:

1906 թվականի օգոստոսի 23-ի «Մշակի» ողջ համարը նվիրված էր Լև Տոլստոյի ծննդյան 80-ամյակին: Առաքելյանը նրան համեմատում էր Յոն Բերտի, Լեոնարդո Դա Վինչիի, Լյութերի, Վոլտերի հետ: Շատ կարևոր է, որ չնայած թերթը շատ հարցերում համամիտ չէր մեծ գրողի վարդապետությանը, այնուհանդերձ արժանի էր հատուցում նրա ստեղծագործության համամարդկային բովանդակությանը: Եվ այս իմաստով հայկական այս թերթը իր զգալի ներդրումն ունի հայ իրականության մեջ Տոլստոյին ժողովրդականացնելու գործում:

Թերթը բարյացկամորեն է վերաբերվել նաև Մ. Գորկուն: Այստեղ են տպագրվել նրա «Բազեի երգը» ստեղծագործությունը, այնուհետև հետևել են նրա «Մայրը» վեպի առթիվ սկսված դատական պրոցեսին:

Ոչ պակաս սրությամբ էր դնում թերթը ժամանակի ռուս գեղագիտական-գրականագիտական մտքին հայ գրականության առնչվելու, այդ մարզում նոր արժեքները յուրացնելու խնդիրը: Այսպես, 1913 թ-ի դեկտեմբերին ռուս պրոֆեսոր Սյակոտին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում կարդացել է «Գերցենը հրապարակախոս» թեմայով դասախոսություն: Առաքելյանը բարձր է գնահատում պրոֆեսորի վարպետությունը, բայց և ակսոսում է, որ հայ մտավորականներից քչերն են մասնակցել: Նա զարմացած է, որ հայ գրողը, դերասանը ոչ մի կերպ չի ցանկանում դուրս գալ իր խխունջից, շփվել լայն հայացքների հետ, իսկ դահլիճը, ստիպված, լցնում են հայկական դպրոցների բարձր դասարանների աշակերտներով, որոնք միայն ծափահարում են:

Հայ-ռուսական գրական առնչությունների տեսակետից Առաքելյանի «Մշակը» կարևոր էր համարում Սանկտ-Պետերբուրգում լույս տեսած «Հայ գրականության ժողովածուն», որ տեղ էին գտել Պ. Մակինցյանի, Դ. Անանուցի հոդվածները, Տերյանի, Թումանյանի, Իսահակյանի բանաստեղծությունները, Բաֆֆու, Սունդուկյանի, Ծիրվանզադեի, Թումանյանի արձակ գործերից: Անդրադարձ են կատարել նաև «Վեստնիկ Եվրոպի» հանդեսի¹¹⁹ 1916 թվականի համարում տպագրված Յու. Վեսելովսկու ընդարձակ հոդվածին

¹¹⁹ «Վեստնիկ Եվրոպի», 1916 թ., N 3:

թուրքահայ գրականության վերաբերյալ:

Ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին եղեռնին հաջորդած ամիսներին աշխատում էր Վանի շրջանում գործող «Քաղաքների միությունում»: Նա «Ռուսակոյե սլովո» թերթում զետեղել էր մի հոդված Վանի մասին: «Ավիրված դրախտ» վերնագրով, որն ամբողջապես արտատպել է «Մշակը»¹²⁰: Բանաստեղծը ցավ է հայտնում թուրքերի կատարած անմարդկային արարքների համար:

Թերթն ընդարձակ լրատվություն է տպագրել «Պոեզիա Արմենիի» ժողովածուի (Մ. Սարյանի ձևավորմամբ) մասին, որն ընդգրկում էր 5-17-րդ դարերը: Սա մեծ իրադարձություն էր հայերի համար, քանի որ ոչ միայն ռուս ընթերցողները, այլև համաշխարհային ողջ հանրությունը կարող էր ծանոթանալ մեր պոեզիայի լավագույն նմուշներին:

Եվրոպական և ամերիկյան գրականությունների նկատմամբ ևս «Մշակը» հանդես էր բերում իր դեմոկրատական-առաջադիմական կողմնորոշումները և միշտ էլ բարձր է գնահատել արտասահմանի գրականության համամարդկային բովանդակություն ունեցող արժեքները:

Արտասահմանյան գրականությունից «Մշակը» տպագրել է Դիկտոնի «Եվա Մանկովիչը» պատմվածքը, Կ. Տետմայերի «Ստվեր» և «Երջանկություն» պատկերները, Օկտավ Միրբոյի «Գետի ափին» պատկերը, Դ. Ալզմանի «Արցունքի մեջ է հոգիս» և այլ գործեր: Տարբեր ժամանակներում թերթը ընթերցողներին է ներկայացրել Մոպսսանի, Ֆրանսի, Գարոբուրի, Ջուլայի, Կոկրի, Սենկևիչի և բազմաթիվ այլ գրողների գործեր:

Հրապարակախոսությունից գատ Առաքելյանը զբաղվում էր թարգմանություններով: Նրա թարգմանությամբ են լույս տեսել «Միլտոնի կյանքը և գրական գործունեությունը», «Գալիլեի կյանքը և գիտական գործունեությունը», Գի Դը Մոպսսանի 20 վիպակները, Հանրի Բորդոյի «Հայրենի հողը» վեպը: Նա է գրախոսել Լինչի «Հայաստան» երկհատոր աշխատությունը Եղիսաբեթ Ջունկովսկայայի թարգմանությամբ, որն Առաքելյանը անվանում է հսկայական գործ հայ պատմության համար:

Թերթը ներկայացրել է Ռաբինդրանաթ Թագորին, որ արժանացել էր նախորդ 1919 թվականի նոբելյան մրցանակին գրականության բնագավառում: Առաքելյանը եվրոպական գրաքննադատական միտքն ընթերցողներին է ներկայացնում ի դեմս Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Յ. Լևետրի, որն ուներ գեղարվեստական նուրբ ճաշակ, գրականությունը փիլիսոփայության և հոգեբանության տեսանկյունից վերլուծելու շնորք: Նրա գործերից են քննադատական տեսություններ Ռնանի, Հյուգոյի, ուրիշների մասին: Հե-

¹²⁰ «Մշակ», 1916 թ., N 173:

տաքրքրական է Առաքելյանի գրախոսականը ֆրանսիացի Ֆեդերիկ Մաքլերի «Չայկական մանրանկարները (կյանք Քրիստոսի, զարդանկարներ 16-17 դարերի)» նոր ժողովածուի մասին, ուր տեղ են գտել 68 գործ: Մաքլերի այս հրատարակությունը մի օժանդակություն էր հայկական գեղարվեստի, մանավանդ նկարչության պատմության ուսումնասիրության համար, փաստ էր. «... բայց նա մի դառն նոթ ևս մտցնում է մեզ՝ հայերի, և գլխավորապես էջմիածնի վանականների համար: Իր այս գեղեցիկ ու արժեքավոր հրատարակությունը ֆրանսիացի գիտնականը կազմել է էջմիածնի մատենադարանի ձեռագրերի միայն մի փոքր մասի ուսումնասիրության հիման վրա՝ ապրելով էջմիածնում ընդամենը մեկ ամիս: Այդ՝ մեր էջմիածնի վանականները, որոնք տարին տասերկու ամիս իրենց տրամադրության ներքո ունեն այդ ձեռագրերը, ի՞նչ են անում, երբ մենք մեր ազգային գանձերի մասին տեղեկություն ենք ստանում միայն օտարազգիներից»¹²¹:

Բազմաթիվ օտար լեզուների և մասնավորապես պարսկերենին հմտորեն տիրապետող Առաքելյանը հողվածներ է նվիրել նաև Արևելքի պոետներին, մասնավորապես ընթերցողներին ծանոթացրել Օմար Չայամու ստեղծագործության հետ, ում նա բնութագրել է որպես համաշխարհային մեծություն, այնպիսի գրող, որի բանաստեղծություններն ուսումնասիրում են նույնիսկ Լոնդոնում, ուր բացվել է «խայամիստների ակումբ»¹²²:

1906-ին նշվում էր Եքսպիրի մահվան 300-ամյակը: Խմբագիր Առաքելյանի խնդրանքով մեծ գրականագետ, թերթի աշխատակից Սուրխաթյանը հողվածների շարք նվիրեց աշխարհահռչակ գրողին: Նա գրում էր, թե Եքսպիրի գործերում առաջնակարգ տեղ է հատկացվել մարդկային հզորագույն հույզերի պայքարին՝ սեր և խանդ, ատելություն և նախանձ, բարու և չարի, ստի և ճշմարտության կայծակնահար բախումներ: Ըստ Սուրխաթյանի Եքսպիրը մտքի անձիր, անպարփակ օվկիանոս է: Նա աստվածների հուրն է երկնքից գողացել, որ այդ հրով դառնա երկիրը ջերմացնողը, աշխարհը լուսավորողը, մտքերն ու սրտերն աստվածային կայծով վառողը ու բորբոքողը¹²³:

Չափազանց լայն են «Մշակի» մշակութային ընդգրկումների շրջանակները: Նրա էջերը մշտապես տրամադրվել են տաղանդավոր նկարիչների, երաժիշտների, քանդակագործների, դերասանների մասին ուսումնասիրություններին, հողվածներին...:

1905 թ-ին Առաքելյանը մասնակցում էր Ալժիրում կայացած արևե-

¹²¹ «Մշակ», 1914 թ., N 19:

¹²² Նույն տեղում, 1899 թ., N 155:

¹²³ Նույն տեղում, 1916 թ., N 76-78, 84 և այլ համարներ:

լագետների համաշխարհային կոնգրեսին, որտեղից թերթին էր ուղարկում «Նամակներ Ալժիրից» հոդվածաշարը, ուր նկարագրելով Բեռլինում Յոզեֆ. Խան-Մասեհյանի հետ դիտած «Օթելլո» ներկայացումը, որի դերը կատարում էր Եվրոպայի մեծագույն դերասաններից մեկը՝ Մատուշևսկին, ցնցվել էր նրա վերտուղ խաղով և ափսոսանք է հայտնում, որ հայ դերասանները հնարավորություն չունեն մոտիկից շփվելու այդպիսի կոլեկտիվների հետ, սովորելու նրանցից: Կարծես Առաքելյանին է շարունակում տաղանդավոր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը՝ գրելով բարձրակարգ արտիստի, հանձարեղ մարդու մասին, այն միտքն է հայտնում, որ եթե նա նույնիսկ Շեքսպիրի հանձարն ունենա, դա քիչ է, նաև վիթխարի աշխատասիրություն է հարկավոր արվեստագետին և բարձր ձաշակ: Թերթը մասնագիտական հմտությամբ առանձնացվող թատերախոսություններ, հոդվածներ, կենսագրականներ, այլ բնույթի նյութեր է տպագրել առանձին դերասանների, թատերախմբերի մասին, վերլուծել նրանց արվեստը, փորձել ցույց տալ նրանց տեղը հայ մշակութային կյանքում:

Առաքելյանը հետևողական է եղել թերթի թղթակից, Մեծն Կոմիտասի նկատմամբ՝ անդրադառնալով նրա նամակին հայոց կաթողիկոսին, ուր նա հայտնում է Գևորգյան ձեմարանից հեռանալու լուրը պատճառաբանելով, թե իր մանկավարժական գործունեությունը նա անհիմաստ է համարում ձեմարանում ստեղծված անհանդուրժելի պայմանների պատճառով: Նա մեկնելու էր Թուրքիա, ապա Արևմտյան Եվրոպա հրատարակելու իր աշխատությունները, որովհետև էջմիածնում նրա գործերը կիսատ ու անտիպ էին թողել, այնինչ Եվրոպայում դրանց հրատարակման համար հսկայական դրամ էր տրամադրվում: Այնուհետև թերթը տպագրել է նամակ Բաթումից՝ հայտնելով, թե երկրպագուների խնդրանքով Կոմիտասն այստեղ հանդես է եկել մի շարք համերգներով, իսկ Փարիզի թղթակից Առ. Օհանյանը հաղորդում է Կոմիտասի համերգների հաջողության մասին, որոնց ընդմիջումներին Արշակ Չոպանյանը դասախոսությունների հատուկ շարքով ունկնդիրներին է ներկայացրել հայ երաժշտության ու պոեզիայի ակունքները: Համերգներին մեծ շուք է հաղորդել Փարիզի կոնսերվատորիայի սան Մուղունյանը, որն արդեն հասցրել էր մեծ ձանաչում ստանալ Եվրոպական բեմերում¹²⁴:

«Մշակը» մեծ հոգատարությամբ է շրջապատել նաև մեծատաղանդ Կահրամ Փափազյանին: Առաջինը նրա բեմական վարպետության մասին գրում է թերթը՝ անդրադառնալով Մոլիերի «Դոն Ժուանի» բեմադրությանը, որտեղ երիտասարդ դերասանը կատարում էր գլխավոր դերը և գրում. «Առաջին անգամ էինք տեսնում այդ երիտասարդ դերասանին: Նա օժտված

¹²⁴ «Մշակ», 1906 թ., N 265:

է որոշ ձիրքերով, շնորհալի է, ունի տեխնիկական որոշ պատրաստականութիւն, սակայն դեռ վաղ է խոսել ապագայի մասին, քանի որ նա դեռ շատ երիտասարդ է և մեծ անելիքներ ունի»¹²⁵: Մի փոքր անց թերթը հաղորդում է, թե Վահրամ Փափազյանը Միլանի գրականության ակադեմիայի դիրեկտոր Շամիլ Տրավերսիի պատվերով թարգմանում է Շիրվանգադէի «Նամուսը» և «Չար ոգի» պիեսները, ակադեմիայի թատրոնում դրանք բեմադրելու համար:

1915 թ-ի ապրիլի 2-ին Թիֆլիսի ժողովրդական տանը ներկայացվեց «Ոճրագործի ընտանիքը» պիեսը Փափազյանի մասնակցությամբ, ուր նա կատարում էր Կորրադոյի դերը: Թերթը խոսելով այս կատարման մասին, հիացմունքով գրում է, թե նա վարպետորեն փոխարինեց Պետրոս Ադամյանին: Թերթը սա բնական է համարում, քանի որ երիտասարդ արտիստը վայելչակազմ է, ունի հարուստ ձայն, տպավորիչ առողջանություն, եռանդ, ընտիր շարժում և տիրապետում է իր ձայնին ու արվեստին: Իսկ Առաքելյանը դրվատանքի խոսքեր չի խնայում Փափազյանի հասցեին մավրի դերակատարության կապակցությամբ: Նա տեղյակ է պահում ընթերցողներին, որ երիտասարդ տաղանդը հրավիրված է Բարատովի դերասանական խումբ, մասնակցելու «Արծվիկ» պիեսի բեմադրությանը, որտեղ կատարելու է գլխավոր դերը:

Խորհելով 1914 թ-ի թատերաշրջանի ավարտի մասին՝ Յ. Առաքելյանը հայտնում է, թե այն փակվեց ահագին վնասով, դժգոհություններով, որովհետև թատերախմբից դուրս էին մնացել ծանաչված դերասաններ Աբելյանը, տիկին Մայսուրյանը, Ալիխանյանը, համարյա բեմ չէլած Սիրանույշը, մյուսները: Ավելին անհրապոյր պիեսներ, այնինչ Յայոց դրամատիկական ընկերությունը պարտավոր էր համախմբել դերասանական կարող ուժերը և իր գործունեության ասպարեզ ընտրել ոչ միայն Թիֆլիսը, այլև Բաքուն, Երևանը, Բաթումը, Գանձակը, Ծուշին, Ալեքսանդրապոլը, Կարսը, Արմավիրը, որը դրամական մեծ եկամուտ էր բերել:

Թերթի հայագիտական հրապարակումների մեջ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նկարչությունը, շինարարական և կիրառական արվեստին նվիրված նյութերը: «Մշակն» արտացոլել է ազգային ճարտարապետության արժեքն անցյալի փոշիներից վերհանելուն և ժամանակակից աշխարհին ներկայացնելուն ուղղված այն շարժումը, որ ծավալվել էր դարասկզբից սկսած: Թերթի հրապարակումների մեջ լուսաբանվում են Մառի, Թորամանյանի, Վ. Սուրենյանցի և այլոց գործունեությունը, նրանց ջանքերը հայ մշակույթի անցյալի նմուշները բացահայտելու, պահպանելու, քաղաքակիրթ աշխարհին ներկայացնելու վերաբերյալ: Էջմիածնի

¹²⁵ «Մշակ», 1913 թ., N 276:

վանքի վերաշինությանն էր վերաբերվում Վարդգես Սուրենյանի հողվածը: Նա գտնում է, որ վերաշինությունը կատարվելու է պատմական արժեքների գնահատմամբ, որպեսզի ոչինչ չկորչի աշխարհի ամենահին կառույցներից մեկի մայր տաճարից, քանզի դրա արժեքն անգնահատելի է: Թերթը գետեղել է նաև Սարտիրոս Սարյանի նամակը Էջմիածնի մայր տաճարի վերանորոգման կապակցությամբ: Նույն թեմային է անդրադարձել Գևորգ Բաշինջաղյանը, որն առաջադրում էր տաճարի վերանորոգման ռացիոնալ և իրագործելի սկզբունքներ մշակելու խնդիրը միշտ նույն գեղեցիկը պահպանելու մտահոգությամբ:

1914 թ-ին Ալեքսանդրապոլում նշվել է կույր երաժիշտ Նիկողայոս Տիգրանյանի գործունեության 25-ամյա հրեյանը, այն անձի, որ եվրոպական երաժշտության չափ ու կանոնին ենթարկելով արևելյան անսանձ մեղեդիները՝ գեղարվեստասերների առջև բացեց մի բոլորովին նոր ու ուրույն աշխարհ, իսկական օրենսալիզմի աշխարհը: Թերթը հորդորում է բոլոր խավերի ներկայացուցիչներին ըստ պատշաճի գնահատել մեծ երաժշտի գործունեությունը: Յ. Առաքելյանը ջերմորեն շնորհավորում է հոբելյանին և Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Կամսարակյանին խնդրում հանդեսին ներկայանալ որպես «Մշակի» ներկայացուցիչ:

Թերթն ընդարձակ տեղ է հատկացրել պատմագրությանը: Տպագրել են Ստ. Մալխասյանցի գրախոսականը Ստ. Կանայանի «Քաջանց տուն» աշխատության մասին, Յ. Ղուկասյանն ընդարձակ հոդված է նվիրել Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինոսի դարաշրջանում» գործին, բարձր գնահատել Գր. Խալաթյանի «Հայաստանի պատմության» առաջին հատորը, Դ. Անանունի գրախոսականը երիտասարդ բանասեր Աշոտ Հովհաննիսյանի «Պետրոս դի Սարգիս Գիլանենց» պատմական ակնարկի վերաբերյալ:

Թերթի հրատարակության վերջին երկու տասնամյակներին աշխատակիցները լրատվական գրականագիտական-գեղարվեստական, արվեստին վերաբերող վիթխարի նյութ են տպագրել ինչպես Արևելահայաստանի, այնպես էլ Արևմտահայաստանի, ռուս և արտասահմանյան գրականությանը ժողովրդականացնելու ծանապարհին:

Գրականությանը, արվեստին, հայագիտությանն առնչվող հարցերում թերթը դուրս է եկել զուտ ազգային շրջանակներից և ընթերցողներին հաղորդակցել համաշխարհային մշակույթի դասական ու ժամանակակից իրողություններին և լրագրային ժանրի հնարավորությունների օգտագործումով փաստորեն ստեղծել հայ մշակույթի զարգացման պատմությունը:

«Մշակը» որպես հայ հասարակական կյանքի հանրագիտարան, որպես առավել երկար ժամանակաշրջանում գործող պարբերական, մեծ դեր է կատարել հայ մշակույթի և նրա անբաժան մասը կազմող դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացման գործում: Լուսավորությունն առաջ մղելու միջոցները ճիշտ ընտրելու նպատակով թերթը բացահայտում էր այդ ասպարեզում տեղ գտած թերությունները: Մասնավորապես «Նկատողություններ» բանասիրական հոդվածում խստորեն քննադատվում են արդեն ոսկրացած «յուլա գնալու» մտայնությունը, երբ դպրոցների խարխուլ դասասենյակներն ամեն վայրկյան կարող են փլվել, ընդհանրապես բացակայում են ամենատարրական պայմանները՝ «Ամեն գործի մեջ,- գրում է հեղինակը,- մենք մաքուր ենք... թղթի վրա միայն, իսկ մեր հոգի՞ն: Մենք չփորձեցինք նրան ծանաչել»¹²⁶: Անդրադառնալով Ներսիսյան դպրոցին «ժողովուրդը սպասում է» հոդվածում այն միտքն են զարգացնում, թե այդպիսի մի հաստատության համար, որը տարեկան 60 հազար ռուբլու եկամուտ ունի, շատ նեղ են հարմարությունները, չեն օգտագործվում դպրոցի կալվածքները, կաղում է ուսումնական մասը, շատ ցածր գիտելիքներ են ստանում աշակերտները¹²⁷:

Թերթը քննադատության կրակի տակ է առնում նաև Ախալքալակի դպրոցները, որտեղ դպրոցական մարմնամարզության փոխարեն մանկավարժներն աշակերտներին ստիպում էին դասասենյակների հատակը լվանալ: Նրանք օրինակ են բերում Ծվեցարիայի դպրոցները, որոնցից հայերը շատ ու շատ բաներ ունեն սովորելու: Թերթն իր քննադատության սլաքն ուղղում է ժողովրդի կրթության, դաստիարակության մենաշնորհին իրենց ձեռքը վերցրած եկեղեցու և եկեղեցականության դեմ, գտնելով, որ մինչ այդ հայ դպրոցները մուրացկանությամբ են ապրել. «Ինչու՞ այդ օգուտը, որ մշտական է, հաստատ, ապահով, նույնիսկ խոշոր, միանգամայն մոռացված է, իսկ մեր դպրոցները դառն անձարակությունից ստիպված, իրենց բոբիկ, գզգզված մանուկներին ուղարկում են որևէ տղրուկ տղայի, արյուն ծծող վաշխառուի և այլ հասարակակն ցեցերի թաղման հանդեսին շուք տալու, որպեսզի դիակներիտերերը ձախ ձեռքով մի քանի կոպեկ ողորմություն տան դպրոցին»¹²⁸: «Մշակը» նկատում էր, որ եկեղեցական կալվածները դպրոցական պետքերի համար օգտագործելու փոխարեն կորչում են ինչ-որ տեղ, մի քանի անհատների տնօրինությանը մնում, իսկ ազգը դրանից որևէ օգուտ չի ստանում: Հետաքրքրական է այս իմաստով Առաքելյանի «Ո՞ր կորան»

¹²⁶ «Մշակ», 1897 թ., N 10:

¹²⁷ Նույն տեղում, 1893 թ., N 17:

¹²⁸ «Մշակ», 1894 թ., N 17:

վերնագրով առաջնորդողը: Նա գրում է, թե դարեր շարունակ բոլոր կտակներն արվել են եկեղեցուն ու դրանցից միլիոնների կալվածքներ ու գույք է գոյացել, սակայն որոնք չկան, փշրանքներ են միայն մնացել: «Բայց ո՞ր մնացին, ի՞նչ եղան, ո՞ր ջուրն ընկան, որտե՞ղ կորան այդ միլիոնները, միլիոններ արժեցող այդ կալվածքները և թանկագին ընծաները, որ ընծայում էր եկեղեցուն հայ ժողովուրդը,- հարցնում է հեղինակը և պատասխանում,- կույ գնացին: Կույ գնացին այն անհատակ փորերի մեջ, որոնք երկար դարեր, սերունդ, սերունդից հետո իրենց ձեռքն առած այդ հարստությունները, առանց խղճահարվելու, առանց ամաչելու, ուտում, վատնում, գողանում էին այն բոլորը, ինչ որ կազմում էր ժողովրդի կրոնական բարձր զգացմունքների արդյունքը»¹²⁹:

Եվ չնայած եկեղեցու ու հոգևորականության քննադատությանը, 1890-ականներին, երբ դպրոցի փաստական տերը եկեղեցին էր համարվում, երբ ցարիզմն արգելում էր ազգային դպրոցների գոյությունը, անհնարին էր դպրոցական հարցերում հաշտեցման եզր չգտնելը հոգևորականների հետ, ցավով արձանագրելով նաև, որ պարտաճանաչ հոգևորականություն չի մնացել, որովհետև տարիներ շարունակ հոգևոր պաշտոն են տվել յուրաքանչյուր տգետի, որոնք չեն ծանաչում այն արդար սկզբունքը, որ հոգևորականությունն է ժողովրդի համար և ոչ թե ժողովուրդը՝ հոգևորականության: Ըստ թերթի աշխատակից Խ. Մալումյանի ահա ինչ վիճակ է էջմիածնում. «Առավոտը ասել մի բան, երեկոյան պնդել լրիվ հակառակը, կեսօրին մի վճիռ կայացնել, գիշերը բոլորովին հակառակը պահանջել, բերանացի արգելել տգետներին ձեռնադրել, գրավոր հակառակ հրամաններ տալ, մի տեղ տեսուչի հարց կանգնացնել, մի ուրիշ տեղ նույն հարցն առաջ մղել, մի տեղ կանոնի անունից խոսել, մի քանի րուպեից հետո նույն կանոնը ոտի տակ տալ, մի խոսքով ինչպես ասում են, մի ձեռքով գրել, մյուս ձեռքով ջնջել»¹³⁰:

«Մշակի» գործիչներն առաջիններից մեկն էին հայ իրականության մեջ, որ հասկացան ցարական կառավարության 1889 թ-ի հրահանգի միտումնավորությունը (հայկական դպրոցներում ուսուցչություն անելու իրավունք պիտի ստանային միայն այն անձինք, ովքեր ուսուցչական ցենզ կամ արտոնություն էին ստացել կառավարական հատուկ հանձնաժողովի կողմից): Իրավացի էր թերթը, քանի որ ժամկետներն անցնում էր, իսկ ցենզավոր ուսուցիչների պակասի պատճառով շատ հայկական դպրոցներ փակվում էին: Կաթողիկոսը կառավարությունից մեկ տարի պահանջեց, որը

¹²⁹ Նույն տեղում, 1894 թ., N 98:

¹³⁰ «Մշակ», 1896 թ., N 97:

չմերժեցին, քանի որ այդ մեկ տարին էլ ոչինչ չէր ավելացնելու հայ անդիպում վարժապետների մի ստվար բանակի գիտելիքների վրա: Եվ մինչև Խրիմյանը երկարաձգման հարցեր էր առաջ քաշում, Կովկասի կառավարչապետ Շերեմետևը ստուգելով հայ եկեղեցական-ծխական դպրոցների գոյության արդյունքները՝ հայտարարում էր, թե դրանք չեն համապատասխանում 1884 թվականի փետրվարի 16-ի կանոններին, որովհետև դրանց մեծ մասը պահվում է ոչ եկեղեցիների եկամուտների հաշվին, այլ գյուղական հասարակության: Նրա պահանջն էր կամ դրանք հանձնել ուսումնական վարչությանը, կամ էլ փակել¹³¹: Եվ 1896 թ-ին կառավարությունը կատարեց իր որոշումը՝ փակելով ծխական դպրոցները, 203-ից թողնելով միայն 28-ը: Պետական վերահսկողություն սահմանվեց դասավանդվող առարկաների ու ծրագրերի վրա, խիստ կրճատվեցին հայոց պատմության, աշխարհագրության և նույնիսկ կրոնի ժամերը: Թերթը չկարողացավ հրամանից բացի որևէ նյութ տպագրել, քանի որ ցարական ռեակցիայի տարիներին ամենափոքրիկ առիթով փակվում էին լիբերալ օրգանները, հարյուրավոր հոդվածներ գրչի մեկ հարվածով հանվում էին պարբերականների էջերից: Սակայն չլռեց թերթը 1903 թ-ի հունիսի 12-ի օրենքից հետո, երբ բռնագաղթվում էին եկեղցապատկան հողերը: «Մշակը» պայքարի ձեռնոց նետեց ցարական ռեակցիային՝ պաշտպանելով համաժողովրդական պայքարի գաղափարը: Թերթը սկսեց հաղորդագրություններ տպագրել ժողովրդական ցույցերի ու բռնկումների մասին, իր բարյացկամ վերաբերմունքն արտահայտելով հուզումների ու ապստամբների վերաբերյալ:

Թերթը բացահայտում է հայկական դպրոցի ներքին կյանքում, ուսման բովանդակության, ուսուցման կազմակերպման ձևերի ու մեթոդների հարցում, ուսումնանյութական հնարավորություններում տեղ գտած թերությունները: Առանձնապես գնահատելի է թերթի դերը ռուսական առաջավոր դպրոցի ու մանկավարժության փորձը հայ իրականության մեջ փոխադրելու հարցում:

Թերթի ուշադրությունից չի վրիպել դպրոցի ղեկավարման հարցը, երբ տգետ, ուսումնական գործերից չհասկացող հոգեբարձուները միջամտում էին դպրոցի ներքին կյանքին, իրենց տգետությանը չնայելով գրագետ մարդկանց բախտն էին որոշում:

Արժրունու հետնորդներին նաև հետաքրքրում էին ուսանողության սննդի, թռչակի, հանրակացարանների, նրանց գաղափարական դաստիարակության և բազում այլ հարցեր: Եվ ամեն ղեպքում նրանց ցանկությունն էր՝ տաղանդավոր երիտասարդների համար հնարավորություն ստեղծել ու-

¹³¹ ՀՊԱ ֆոնդ 102, ց. 1, Գ. 776, էջ 2:

սանելու, հետագայում ազգին ծառայելու ցանկությամբ:

Հայ դպրոցի առօրեական կարիքների բացահայտումից մինչև դպրոցական գործը տնօրինող հոգեբարձությունների և անհատների խիստ քննադատությունը, ազգային առաջընթացի մեջ դպրոցի նշանակության բնութագրումներից մինչև նրա ազգապահպան դերի ընդգրկում և առաջավոր մանկավարժության պրոպագանդն այսպիսի բովանդակությամբ են հագեցված թերթի խնդրո առարկա բազմաթիվ հրատարակումները: Իր այս թեմայով տպագրված նյութերով, դրանցում արծածված մտքերի հետևողականությամբ, «Մշակն» անկասկած, նպաստել է հայ դպրոցական գործի առաջընթացին: Թերթի առաջավոր գործիչները փորձում էին ամեն կերպ հայ երիտասարդության կրթության և դաստիարակության գործը մղել ժամանակի ոգուն համապատասխան հուն: Եվ սա բնական էր, քանի որ մշակականները ժողովրդի լուսավոր ապագան կապում էին աճող սերնդի առաջադիմության հետ:

Հակակառավարական ելույթները Ռուսաստանից բացի ներթափանցել էր նաև Անդրկովկաս: Այս շարժումներում մեծ էր ուսանողության դերը: Թերթը հայտնում է, թե նույնիսկ պրոֆեսորադասախոսական կազմն է անցել ուսանողների կողմը՝ պահանջելով 1905 թվականի օգոստոսի 27-ի բարձրագույն դպրոցներին տրված իրավունքների պահպանում: Կառավարությունը, սակայն, պահանջները կատարելու փոխարեն սպառնում էր ոստիկանության ուժի գործադրմամբ, եթե դասերը համալսարանում չչարունակվեն: «Սթափվել է պետք» առաջնորդողի հեղինակ Առաքելյանն, անդրադառնալով դասադուլների հարցին, դրանք համարում է հարցի լուծման վնասակար ձև, քանի որ դասերին չհաճախելը միայն վնաս է բերում ուսանող երիտասարդությանը, չէ՛¹³² որ մեր հասարակությունը կրթված անհատներ են պետք, իսկ դասադուլները միայն վնաս կարող են բերել կրթության գործին: Իհարկե, առաջնորդողի հեղինակն էլ է կողմ, որ դրականորեն լուծվեն ուսանողների արդարացի պահանջները, բայց ոչ դասադուլների միջոցով:

Ուսանողական հուզումների հզոր ալիք բարձրացավ 1912 թ-ին: Թերթի Մոսկվայի թղթակիցը հաղորդում էր, որ այդ խառնակություններին մասնակցելու համար միայն այս քաղաքի ուսանողներից արդեն 1200 մարդ է արտաքսվել բարձրագույն դպրոցներից: Հ. Առաքելյանը հուզումների առաջն առնելու միակ միջոցն է համարում այդ հաստատություններին ինքնուրույնություն տալը: Այս առիթով «Մշակը» ռուսական «Ռուսակոյե սլովո» թերթից արտատպեց Մաքսիմ Գորկու «Ուսանողության մասին» հոդվածը,

¹³² «Մշակ», 1912 թ., N 140:

ուր մեծ գրողը խժոժությունների հիմք էր համարում ուսանողության խրոնիկական քաղցածությունը, մութ ու խոնավ անկյուններում 4-5 տարի բնակվելը, որոնք ուսանողներին հասցնում էին բարոյագրկման, հիվանդության: Կար նաև խմելու արատը, որը նրանց հետապնդում էր թե՛ ուրախության և թե՛ տխրության պահերին: Նրանց մարմիններում բույն էր դրել ամենահաս թոքախտը: Գորկին պահանջում էր համառուսական մի ընկերության հիմնում, որը կնպաստի ուսանողների առողջ կենցաղավորմանը:

Առաքելյանն անդրադառնալով «Աղբյուր» մանկական հանդեսի 25-ամյա հոբելյանին նկատում է, որ այն հսկայական ծառայություն է մատուցել հայ երեխաների ազգային կրթության գործին, ոչ միայն հայ մանկան մտավոր ու բարոյական դաստիարակությանը, այլև ազգային դպրոցի զարգացմանը, հայ ուսուցչի կայացմանը: Ուրեմն թող մեր հասարակությունն ըստ արժանավույն գնահատի և խրախուսի գրական իսկական մշակին՝ Տիգրան Նազարյանին, որով 25 երկար ու ձիգ տարիներ անխոնջ աշխատել է հայկական խոպան դարձած անդաստանի մեջ:

Թերթի թղթակից Ա. Նազարեթյանը վերլուծելով Զ. Առաքելյանի «Ձեռնարկ տարրական տրամաբանության, հոգեբանության և բանասիրության» աշխատությունը՝ եզրակացնում է, թե այն ոչ միայն դպրոցների աշակերտներին է անհրաժեշտ, այլև մասսայական ընթերցողին և ուսանողությանը:

Առաքելյանի «Ղարաբաղի թեմի կարծիքները» ընդարձակ հողվածում շեշտը դրվում է թեմի ազգային և եկեղեցական գործերի, ժողովրդի կարիքների ու պահանջների վրա: Ըստ հեղինակի, կարգավորելու առաջնահերթ խնդիրները երկուսն էին՝ դպրոցական և կալվածական: Մոտ 300 հազար ժողովուրդ ունեցող հայ թեմի միակ ազգային միջնակարգ կրթարանը Ըուշիի սեմինարիան էր, որը մատնված էր նյութական անապահովության և միջոցների սղության պատճառով չէր բարգավաճում ու գոհացում չէր տալիս մատաղ սերնդի մտավոր ու բարոյական պահանջներին: Տխուր վիճակում էին նաև թեմի ծխական դպրոցները, ուր դասավանդող քահանաների մեծ մասը, սակավ բացառություններով, տգետ ու անկիրթ մարդիկ էին: «Տգիտությունը,- գրում է Առաքելյանը,- նրա հետ միացած և բարբերի անբարոյականացումը- արդյունք զանազան ինքնակոչ և համբակ գործիչների վնասակար գործունեության, ընդհանուր քայքայումն են առաջ բերել հայ ժողովրդի մեջ: Վանքական ահագին և բազմարժեք կալվածքների տնտեսությունը և կառավարությունը այնպիսի քայքայված վիճակի մեջ են, որ միլիոններ արժեցող կալվածքները այսօր ենթարկված են աժուրդով և չնչին գնով վաճառելու վտանգին, պետական տուրքերը ամբողջ մի քանի տարիների ըն-

թացքում չվճառելու պատճառով»¹³³:

Չնայած դաշնակցության հետ ունեցած տարածայնություններին, թերթն իր էջերը տրամադրում է այդ կուսակցության նշանավոր գործիչ Սեմյոն Զավարյանի մի շրջաբերականին: Նա նոր էր ստանձնել Տարոնի ուսումնական խորհրդի տեսչի պաշտոնը և դիմում էր համայն աշխատիչ սփռված տարոնցիներին, մշեցիներին վերադառնալ երկիր, հնարավորություններ ստեղծել կրթական գործի զարգացմանը, քանի որ հողը լքելը ազգի կործանում կնշանակեր: Եվ բնորոշ էր եզրակացությունը՝ «Եթե չեք կամենում մուրացիկներ լինել, դպրոցներ կառուցեք, չեք կամենում դպրոցներ կառուցել բանտեր կառուցեք...»:

Նկատի ունենալով դպրոցների բարձր դասարանցիների շրջանում տարածված զանազան ախտերը՝ Յ. Առաքելյանը գրում է դպրոցականների առողջապահության հարցերի մասին: Նա անհրաժեշտ է համարում հրավիրել ծնողների, մանկավարժների և դպրոցական վարչությունների լուրջ ուշադրությունը այդ խնդրի վրա: «Թե՛ ծնողները տան մեջ և թե՛ դաստիարակները դպրոցներում չպեք է թաքցնեն 16-17 տարեկան պատանիներից սեռական կյանքի գաղտնիքը, նրանք պետք է բանան պատանու աչքերը բարոյական անկման ամբողջ սարսափի և զուտ ֆիզիկական հետևանքների անտեղության վրա»¹³⁴:

Առաքելյանը խոսում է նաև Թավրիզի Արամյան վարժարանի 60-ամյա հորբեյանի մասին, հասարակություն, որ երկար ու ձիգ տարիներ լույս է սփռել խավար Պարսկստանի հայության մեջ, սերունդներ կրթել ու դաստիարակել ազգի և մարդկության համար: Իսկ Ղարաբաղի ազգային հոգևոր դպրոցի 75-ամյա հորբեյանի ու նրա հիմնադրի մասին է. «Իշխան Բաղդասար Մետրոպոլիտ Մեծն Հասան-Ջալալ-Տոլա» հոդվածը¹³⁵: Առաքելյանը նաև հաջորդ համարներում է անդրադառնում այս հաստատության պատմությանը «Իմ հիշողությունները» հոդվածաշարում:

1914 թ-ին նշվեց Լազարյան ճեմարանի 100-ամյակը: Առաքելյանը հանդես եկավ հոդվածով: Բարձր գնահատելով այս ուսումնական հաստատության սկզբնական շրջանի ծառայությունները, հատկապես հանրաճանաչ գիտնականների սերունդներ դաստիարակելու գործում, նաև ափսոսանք է հայտնում, որ հայ-ռուսական գիմնազիա է դարձել, ռուսական ծրագրով, նրանց հրահանգներով է առաջնորդվում, հայոց լեզուն մղվել է երկրորդական պլան, ընկել է հայագիտության վարկը: Իսկ «Հայոց թեմա-

¹³³ «Մշակ», 1910 թ., N 18:

¹³⁴ «Մշակ», 1910 թ., N 230:

¹³⁵ Նույն տեղում, 1912 թ., N 171:

կան դպրոցների ապագան» հողվածում Առաքելյանը շոշափում է թեմական դպրոցների շրջանավարտների համալսարանում ուսումը շարունակելու հարցը: Նրանք մատնացույց են անում միայն Էջմիածնի Գևորգյան ձեմարանի ձանապարհը: Սա սխալ տեսակետ է համարում Առաքելյանը, քանի որ նախ ձեմարանն այդքան շրջանավարտների չի կարող ընդունել հնարավորությունների պակասի պատճառով, իսկ թերուս մարդկանցով շրջապատը համալրելն էլ է սխալ համարում: Եվ երկրորդ, չէ՞ որ թեմական դպրոցների շրջանավարտներից շատերը չեն ցանկանում հոգևորական դառնալ, ուստի, շատ ավելի նպատակահարմար է, որ թեմական դպրոցներն էլ ստանան ռուսական սեմինարների ու գիմնազիանների կարգավիճակ, որից հետո հայ շրջանավարտներն էլ իրավունք կստանան իրենց ուսումը ցանկացած համալսարանում շարունակելու: Այլապես մեր այդ դպրոցներին վաղը ոչընչացման վտանգն է սպասում, որը հենց ցարիզմի նպատակն էր: Ահա ինչու սրությամբ էր դրվում նաև հայոց լեզվի անաղարտության հարցը: Թերթը գրում է. «Սթափվեցե՛ք, լսելու ականջ ունեցողներ, զգուշացե՛ք այս նոր տեսակի ջարդից, ով հայերեն չի խոսում, նա հայ չի¹³⁶»: Այս առիթով ահա ինչ է գրում թերթի Մոսկվայի թղթակից Մ. Ազյանը. «Յրահանգ է ստացվել ռուսական վերին ատյաններում՝ դատարկվող հայկական գյուղերն ու քաղաքները կազակներով բնակեցնելու մասին: Այս կարծիքը բացահայտորեն պաշտպանում էր նաև Կովկասի փոխարքայի օգնական գեներալ Յանուշկևիչը: Չէ՞ որ այս տաժանալի օրերին, երբ հայության բնաջնջման խնդիր է դրված երկու կողմից էլ (խոսքը Թուրքիայի և Ռուսաստանի մասին էր), մենք պարտավոր ենք պահպանել, զուրգուրել և նայել յուրաքանչյուր հայի, հայերեն սովորել ցանկացող յուրաքանչյուր անհատի»:

«Մշակը» պայքարելով հայ ժողովրդի լուսավորության՝ նոր դպրոցի, կրթության ու դաստիարակության համար, դնում էր այդ հիմնարկությունների ժողովրդականացման հարցը: ԱՄՆ-ի և եվրոպական առաջադեմ երկրների կրթական փորձին ապավինելով՝ մշակականները նյութական միջոցների սղության հարցեր էին քննարկում և լուսավոր ապագա տեսնում այն պետության համար, որը կունենար կրթված և դաստիարակված զավակներ:

¹³⁶ «Քաղաքական զրուցարան» հանդես, 1991 թ., N 8, մեր հողվածը:

«Մշակը» հայ-վրացական հարաբերությունների մասին

Անդրկովկասի հարևան հանրապետությունների հետ հարատև բարիդրացիական հարաբերությունների կողմնակից «Մշակ» լրագիրը, սակայն, հիասթափված էր մասնավորապես իրենց սոցիալ-դեմոկրատ հորջորջած մենշևիկ գործիչների վարած քաղաքականությունից: Նույնիսկ մեծ եղեռնի և դրան հաջորդած տարիներին քրիստոնյա մեր հարևանները մամուլի իրենց օրգաններում սփոփանքի ցավակցության մի խոսք անգամ չէին ասում հարևան ազգի ոչնչացման, կործանման կապակցությամբ: Ավելին, նորանոր տարածքային պահնջներ էին դնում հայերի առջև: Ահա ինչու հայ գործիչները ստիպված էին հրապարակ հանել պատմական փաստաթղթեր, վավերագրեր՝ հերքելու համար հերյուրանքները: Նրանք զարմացած էին, որ վրացիներն այդպես էլ չնբռնեցին միասնաբար, ձեռք-ձեռքի տված գործունության անհրաժեշտությունը, քանի որ անջատ-անջատ գործելակերպն ավելի էր արագացնում հարևան երկու քրիստոնյա ժողովուրդների ողբերգությունը: Եվ վրաց ազգամուլ գործիչների մի թեզը, թե հայերը աշխատում են ավելի շատ վրացական հողերի տիրել, միայն «Մշակի» գործիչների ծիծաղն էր շարժում, քանի որ նրանք չէին զանազանում բուրժուական դասակարգ հասկացողությունը հասարակ ժողովրդից: Չէ՞ որ ինչպես վրացի, այնպես էլ հայ գյուղացին կամ բանվորն էր տառապում բուրժուա-վաշխառու կոչվող տգրուկի ձիրաններում, լիներ դա վրացի, թե՛ հայ տգրուկ: 1882 թ-ի կաթողիկոսական ընտրությունների ժամանակ հաղթանակ տարած մշակականները ծաղրում էին Աբգար Յովհաննիսյանին, բոլոր պահպանողականներին, նույնիսկ Գաբրիել Սունդուկյանին, և այս առթիվ վրացական «Կվայի» շաբաթաթերթը գետեղել էր Գ. Ծերեթելու մի հոդվածը, ուր վրացի հեղինակը ողջունում է հայ առաջադեմ գործիչներին հաղթանակի առթիվ և հույս հայտնում, որ հայ-վրացական հարաբերություններն ավելի ջերմ ու բարեկամական կդառնան:

Եվ որովհետև ռուսական լրագրերը հայերի դեմ բանսարկություններ էին տպագրում, թե նրանք անկախություն են ուզում, արևելահայ և արևմտահայ հատվածների միացում, իսկ սրան հաճույքով արձագանքում էին վրացական լրագրերը, և՛ Մալումյանը ստիպված «Օրվա հարցը», ապա նաև «Օրեցօր» բաժնում պաշտպանելով հայկական արդար դատը՝ հորդորում է, որ վրացիները չիրժվեն ռուս խավարամիտների խաղերով, որովհետև վաղն էլ նրանք վրացիների մասին այդպիսի անհեթեթություններ կտպագրեն: Եվ ընդամենը օրեր անց, երբ Թիֆլիսում և Քութայիսի նահանգներում առատ

ձյուն էր տեղացել, և փլատակների տակ էին մնացել հազարավոր վրացիներ, թերթը գրում է. «Թողնենք պոլիտիկան, թողնենք զանազան «տեսակետները» և օգնության ձեռք մեկնենք Քուֆայիսի նահանգի վնասված վրաց ազգաբնակչությանը: Մենք համոզված ենք, որ հայ հասարակությունն էլ կշտապի իր լուսնան գցել այն մարդասիրական գործի մեջ, օգնության հասնելու իր հարևան ժողովրդին, որի հետ, չնայած պատահական անախորժ ընդհարումներին, դարերից ի վեր կապված է շատ սերտ կապերով»:

«Մշակը»՝ հայտնելով վրաց մեծ գրող Իլյա Ճավճավաձեի սպանության լուրը, օբյեկտիվորեն գտնում է, որ նա մի քանի նեղ ազգայնական հողվածներով դեմ է դուս եկել հայերին, բայց դա նի շրջան էր, և ցավ է հայտնում վրաց ժողովրդի մեծ պոետի մահվան առթիվ:

Թերթի 1908 թվականի թիվ 271-ը համարյա ամբողջությամբ նվիրված է Ակակի Ծերեթելու գործունեության 50-ամյակին: Յ. Առաքելյանի, Ալ. Քալանթարի, Խ. Բ. ստորագրող հեղինակի հողվածները եղբայրական բարեկամության նմուշներ են: Յետաքրքրական է, սակայն Առաքելյանի մի դիտողությունը: Նա գրում է. «Մենք՝ հայերս, որ եղբայրակից ենք վրացիներին, դարերով ապրած լինելով իրար կողքի, դարերով կրած լինելով միասին պարսկական, թուրքական բռնապետական լուծը, որ զավակներն ենք միևնույն մեծ հայրենիքի, այսօր մեր բարեկամական և եղբայրական պարտքն ենք համարում մեր շնորհավորանքները և հարգանքը ևս միացնել վրացի ազգի շնորհավորանքներին՝ ողջունելով Ծերեթելուն՝ որպես տաղանդավոր բանաստեղծի և ստեղծագործողի: Եվ մենք այդ անում ենք հանուն ազգերի համերաշխության, հանուն եղբայրասիրության, մոռացության տալով այն վերքերը, որ բանաստեղծ Ծերեթելին երբեմն հասցրեց մեզ հայերիս, միանալով հայատյացների խմբին: Նրա այդ վարմունքը մենք համարում ենք մի ժամանակավոր մոլորություն, որի մեջ նա ընկել էր հանուն իր ժողովրդի և ազգի սխալ հասկացված շահերի: Վրացի քանքանավոր բանաստեղծի գործունեության մեջ երևացած այդ պատահական ստվերը չի կարող և չպետք է մի րոպե անգամ կասեցնի մեզ տալու այն հարգանքը, որին արժանի է ամեն մի քնար, որ երգում է իր տանջված, թշվառ ժողովրդի ցավերը, տառապանքները, որ զարթեցնում է հույսի, ուրախության, մխիթարության զգացումներ այդ տառապյալ ժողովրդի հոգու մեջ»: Եվ չնայած «Մշակի» բարեկամական այս ելույթին՝ շուտով թերթը ցավով հայտնում է, թե չնայած ծերունագարդ տարիքին, Ակակի Ծերեթելին վրացական «Թեմի» շաբաթաթերթի 1911 թ-ի 8 համարում զետեղել է իր «հին նեյնիմները» հայ-վրացական հարաբերությունների մասին: Ըստ «Մշակի», նրա վրա ոչ ժամանակն ազդեց, ոչ էլ տարիքը: Նա ձգնում էր ապացուցել, որ ինքը ոչ թե

հայի թշնամի է, այլ բարեկամ, բայց իբր հայերը վրացիներին շատ բանով են պարտական, ու ապերախտ ժողովուրդ ենք 1860-ականներից սկսած: Չնայած անվանի բանաստեղծը «հին դարմանն է քամուն տալիս», որը վնասում է մեր եղբայրության ընդհանուր գծին, բայց ինչ արած, բնությունը նրան էլ այդպես է ստեղծել...

Յ. Առաքելյանը գրում է վրացական բանաստեղծությունների նոր ժողովածուի մասին, որ ռուսերեն է հրատարակել իշխանուհի Ամիրաջիբի-երկայնաբազուկ Արղությանը: Ժողովածուն ընդգրկել է Վրաստանի ժամանակի ամենանշանավոր 18 բանաստեղծների գործերը: Առաքելյանն անդրադարձել է նաև Թիֆլիսի քաղաքագլխի ընտրության հարցին: Բանն այն է, որ մահացել էր քաղաքագլուխ Չերքեզովը, և չնայած Յ. Առաքելյանը շատ հարցերում հակառակորդ էր դաշնակցական լիդերներից մեկի՝ Ալ. Խատիսյանի հետ, բայց նրան է համարում նոր քաղաքագլխի ամենաարժանավոր թեկնածու՝ համարելով, որակելով նրան հասարակական-քաղաքական և գրական մեծ գործիչ: Այս կապակցությամբ սկսվել էր ազգայնական բանավեճը վրացիների ու հայերի միջև այն պատճառաբանությամբ, թե ինչու հայերը Թիֆլիսում պիտի լինեն լիդերներ, իսկ վրացին նույնիսկ լապտերավաճառ չի կարող կարգվել: Այս թեմային է անդրադառնում նաև Հարություն Գասպարյանը՝ գրելով, թե չարիքը, ինչի մասին գրում են և չեն հասկանում, որ անհավասարության, շորթելու, կեղծելու արմատն այլ տեղ է թաքնված, որ դա այլ կերպ պետք է վերացնել, բայց լսող չկա: Գասպարյանը շրջահայացության և համերաշխության է կոչում երկու եղբայր ժողովուրդներին՝ գրելով. «Յեռու ազգայնական նեղ պարիսպներից, հեռու թթու նացիոնալիզմից, զգույշ շովեն մտքերից, ինչպես զգուշնում ենք խոլերայից, ժանտախտից...»: Ընտրություններում հաղթեց Խատիսյանը, իսկ «Մշակի» աշխատակից Հակոբ Գենջյանը համոզված է, որ նոր քաղաքագլխի ոսկե բերանից կհնչեն հավասար սիրո, եղբայրության զգացմունքներ բոլոր ազգերի համար անխտիր:

«Հայ բանվոր» ստորագրող թղթակիցը «Բանվորության բարեկամը» հողվածում անդրադառնում է «Թեմի» շաբաթաթերթի թիվ 59 համարում տպագրված Գ. Գրծելիշվիլիի «Օգնեցեք գյուղացիներին»: Վրաց մտավորականը համոզված է, որ վրացի բանվորը հենց Թիֆլիսի մեջ ծանր վիճակում է գտնվում՝ ոչ օգնող ունի, ոչ կազմակերպություն: Չունի պատասպարան, խնամատար, ծանապարհ ցույց տվող, այնինչ հայերը գյուղերից քաղաք են գալիս և լավ պայմանների մեջ հայտնվում, նույնիսկ փող են հետ գցում նեղ օրվա համար, որովհետև հայերի բանվորական խնամատար ընկերությունները օգնում են նրանց: «Հայ բանվորը» շնորհակալություն հայտնելով վրացի հեղինակին, գրում է. «մենք՝ բոլորս, գիտենք միայն, որ կա թշվառութ-

յան մի ընդհանուր կաթսա, որի մեջ հավասար չափով տառապում է մեր երկրի աշխատավորությունը: Բայց մի բան չգիտեմ ոչ միայն բուլոբու, այլև Թիֆլիսում տասնյակ տարիներով քարշ եկող հայ բանվորներս անգամ: Այս չգիտեցածներս այն է, թե ո՞ր պլանետի վրա արդյոք գոյություն ունի այն կատարելագործված գործատու բյուրոն, որ Գրծելիաշվիլիի ասելով գործի է դնում բոլոր հայ բանվորներին և գյուղացիներին: Յուս ունենք, որ պարոն Գրծելաշվիլին բարի կլինի մեզ ցույց տալու այդ բյուրոյի տեղը, եթե դա իհարկե մի՛ֆ չի»: «Կոչ հայոց և վրաց ինտելիգենցիային» առաջնորդողում Յ. Առաքելյանը սրտի կսկիծով է գրում, թե թյուրիմացությունների, տարածայնությունների նոր ալիք է բարձրանում հայերի և վրացիների միջև, որի «հովանավորն» է «Ջակավկազին» թերթը, որ սակայն օգտակար չի ոչ հայերի, ոչ էլ վրացիների համար: Նա երկու կողմերին էլ համերաշխության կոչ է անում և պնդում, թե միայն ձեռք-ձեռքի տված կարելի է հարթել թյուրիմացությունները:

«ժամանակն է, որ վրացի շովինիստները հասկանան...» հողվածում նշվում է, որ վրացիներն անընդհատ հրահրում են նոր ինտրիգներ հայերի դեմ՝ շարունակելով նորանոր առիթներ ու պատրվակներ փնտրել, հրահրելով մարդատագության կայծեր: «Մենք միշտ քարոզել ենք սեր, համերաշխություն միևնույն հողի վրա ապրող ազգությունների միջև,- գրում է թերթը,- մենք աշխատել ենք, որ հայերի ու վրացիների միջև տիրեն բարեկամություն, բարի հարաբերություններ: Սակայն երբ վրացի շովինիստները, չգնահատելով մեր բարի զգացմունքները, սկսում են իրենց մի տեսակ ասպետական ազգ ցույց տալ, իսկ հայերին մի տեսակ մակաբույծ, շահագործող ժողովուրդ, վրացիներին բարերար, իսկ հայերին երախտամոռ, այստեղ մենք ստիպված ենք ասել՝ բավական է, ժամաչեք ձեր չափը և դադարեցրեք ձեր Դոնքիշուտյան հոխորտանքներն ու սպառնալիքները: Վերջ տվեք ձեր լեզենդներին, թե հայերը վրացիների հաշվին են դիզել իրենց հարստությունը, վերջ տվեք ձեր ակնարկներին, թե իշխանությունն իբր այժմ բարյացկամ է վերաբերվում հայերին... Եթե հայերն իրենց աշխատասիրությամբ, չարքաշությամբ հարստություն են դիզել, մի՞թե նրանք մեղավոր են, ինչու՞ ավելի շուտ չեք դատապարտում ձեր ազնվականներին, որոնք պարապ ու անգործունյա կյանք վարելով՝ միայն խժռել են իրենց ունեցվածքը, առանց մի բան արտադրելու: Մենք՝ հայերս, բնավ չենք աշխատում քանդել այն կամուրջը, որ կա հայերի և վրացիների միջև, բայց եթե քանդվի այդ կամուրջը, դրանից վնասողները կլինեն վրացիները, այլ ոչ հայերը: Չափավորեք ձեր լեզուն...»:

Ռուսաստանի Պետական դումայում արևմտահայության դատի պաշտպանությամբ հանդես եկած պատգամավոր Պապաջանյանի ելույթն ափե-

րից հանել էր ոչ միայն թուրք Ջաֆարովին ու մուլական Սկրբլին, այլ նաև իրեն դեմոկրատ հորջոջած Չխենկելիին, որի ճառին էլ անդրադառնում է Բ. Իշխանյանը: Նա վրացի պատգամավորին որակում է որպես քաղաքական հարցերին անծանոթ մեկը, ով եվրոպական սոցիալ-դեմոկրատներից սովորելու դեռ շատ բան ունի: Իշխանյանը տարօրինակ է համարում Չխենկելիի մի պնդումը, թե իբր եվրոպայի միջամտությունը թուրքահայ գործերին հուզում և թշնամացնում է հարևան թուրք ու քուրդ ազգաբնակչությանը հայերի դեմ: «Ինչու՞ է Չխենկելին մոռանում,- գրում է Իշխանյանը, որ թուրք ազգաբնակչության միայն վերին, տիրող ու արտոնյալ խավը, բեկական ու ավատական դասն է բացառապես շահագրգռված, որ տիրող կամայական ու անարխիական ռեժիմը չխախտվի երբեք եվրոպական ռեֆորմների մուտքով, որպեսզի վանդալական գործողությունների՝ ալան-թալանի, բռնաբարությունների, անխնա կեղծումների և ապանությունների հարազատ համիդյան սիստեմը միշտ մնա կանգուն որպես սուլթանական «սրբագործված կարգեր»: Նա զարմացած է Չխենկելիի տեսությունից, որը չի ցանկանում հասկանալ, որ քուրդ ու թուրք աշխատավորական տարրերի թշնամանքը ռեֆորմների դեմ գիտակցական չի, այլ բեկերի ու մուլաների սադրիչ քաղաքականության արդյունք: Եվ զավեշտական է Իշխանյանի եզրակցությունը, թե Չխենկելին գոնե եվրոպական շկոլա պիտի անցներ այս հարցին անդրադառնալուց առաջ: «Յայ-վրացական հարաբերությունների պրոբլեմը» շարունակական հոդվածում Բ. Իշխանյանը համոզված պնդում է, թե վրաց ազնվականության դասի ստորին շերտը կազմալուծված է՝ վերածվելով պրոլետարիատի, մյուս կողմից սնանկանում է և իր տիրական դիրքերից ընկնում է նաև իշխանական-տիտղոսավոր հատվածը: Բայց և այնպես, սոցիալական դրությամբ նրանք դեռ տարբերվում են ահավոր չափերով, չնայած մի տեղ, այնուամենայնիվ, նրանք միասնական են, քանի որ կորցնում են իրենց սոցիալական տիրապետության ամուր հիմքերը՝ ֆունդամենտը, իսկ պատճառը կապիտալիստական հարաբերություններն են, երբ միջնադարյան ավատականության վերջին շավիղներն են ոչնչանում: Վրացական, ինչպես և թուրք-թաթարական, հայկական ազնվականությունը, իբրև կալվածատիրական կատեգորիայի զատ-զատ խմբեր տեղի են տալիս խոշոր կապիտալի սրարշավ նվաճումների առաջ դեպի զավառներ: Ռուսաստանը գաղութացրել էր Կովկասը, բայց այն ուժը չուներ, որպեսզի բավարարություն տար արդյունաբերական ուժերի զարգացման պահանջներին առանց արտասահմանյան տարրերի մասնակցության. «Այդ պատճառով,- գրում է Իշխանյանը,- եվրոպական խոշոր կապիտալի ներմուծումը դարձել է մեր երկրի տնտեսական վերածնության համար մի բնական անհրաժեշտություն:

Շվեդական և անգլիական կապիտալը նավթային հռչակավոր արդյունաբերության մեջ, ֆրանսիական կապիտալը լեռնագործական ձեռնարկությունների և բելգիականը հաղորդակցության մեջ հասել են արդեն այնպիսի պատկառելի ծավալման ու բարձրության, որ որոշ տեղերում տեղական տարրը հետ է մղվում զգալի կերպով: Արտասահմանյան այդ խմբերի, վերջերս նաև ամերիկացիների և մանավանդ գերմանացիների կողմից եղած բազմաթիվ ուսումնասիրական և հետազոտական էքսպեդիցիաները դեպի Կովկաս բաց են անում մեր առաջ միջազգային կապիտալի ներհոսման փայլուն շրջանի պերսպեկտիվներ»: Սրան ավելանում է նաև ռուսական կապիտալի մուտքը, բայց ավելի համեստ քանակությամբ: Եվ որովհետև քաղաքային մասսան ավելի մոտ էր կանգնելու այս գործերին, առաջինը հայն էր, որ մասնակցում էր երկրի ինդուստրալիզացիայի պրոցեսին, և այստեղից էլ վեր էր բարձրանում կապիտալիստական դասակարգը՝ հայկական բուրժուազիան, որն առաջնային դեր էր խաղում ամբողջ Կովկասում: Այսպիսով, չնայած թե՛ ռուսական և թե՛ արտասահմանյան կապիտալի կողմից հայ բուրժուազիայի դեմ ձնշումների՝ հայ տարրը ինչ-որ կերպ դեռ զիջողություններ անելով դիմանում էր մրցակցությանը, իսկ վրացիների մեջ ավելի էր խորանում վիրավորվածությունը: Ավելին՝ վրաց ազնվականությունն ստիպված օր-օրի վաճառում է նորանոր հողատարածքներ, ձեղքվածքն ավելի էր լայնանում: Իշխանյանը սա բնական պրոցես էր համարում՝ այնինչ վրացական «էրի» լրագիրը դիմում էր վրացիներին, թե եկեք հետ տանք բոլոր հիմնարկությունները, կուլտուրական օջախները, կրթական մարզը, թատրոնը, գրականությունը, միայն թե վրաց կալվածատերերը դրան ունենան և իրենց հողը չվաճառեն այլազգիներին: Իշխանյանը շարունակում է. «Մեզ վրա պարտք է ծանրանում ապացուցելու և հույս ունենք, համոզելու ֆեոդալական նացիոնալիստներին, որ ազնվականության անկումով ոչ միայն վնաս ու կորուստ չունի վրաց ազգը, այլև նա ունի ամենամեծ բարիքը՝ վաղ թե ուշ ազատագրելու՝ տնտեսապես և հասարակականորեն իր օրգանիզմի փտած, հետևապես անպետք մասնիկներից»:

Գաղթը նոր ծավալներ էր ստանում Արևմտահայաստանում: Թերթի այդ օրերի խմբագիր Առաքելյանը «Կենտրոնացրե՛ք օգնությունը մի ձեռքում» առաջնորդողում քննադատում է մեր գործիչներին անմիաբանության համար: Նրա համար վիրավորական էր, որ հայ գաղթականների հարցով վրացի Չխենկելին հետաքրքրվի: Այս գործը համարելով ամենաառաջնայինը՝ նա պնդում է, թե մի կազմակերպություն պիտի ստեղծել, ինչ անուն էլ որ նրան տրվի, որն էլ պետք է սրտացավորեն զբաղվի այս գործով: Այս օրերին դրված էր Արևմտահայաստանի ավտոնոմիայի հարցը: Եվ եթե վրացական

«Սախալո փուրցելի» թերթը երկու ազգաբնակությունների միջև համերաշխություն էր քարոզում, նույնը չէր կարելի ասել «Կավկասկոյե սլովոյի» մասին, ըստ որի վրացիները դեմ էին Հայաստանի ավտոնոմիային, իսկ եթե դա, այնուամենայնիվ կատարվեր, նրանք առաջարկում էին վրաստանաբնակ բոլոր հայերին փոխադրել Արևմտահայաստան, քանի որ, ըստ վրացական թերթի, նրանք Վրաստանից շատ հողեր են գրավել: Եվ օրինակ էին բերում Ախալքալաքը, Ախալցխան...

1915 թ-ին Թիֆլիսում անց էին կացվում քաղաքային դումայի ընտրություններ: Նորից մեծ աղմուկ էին բարձրացրել վրացիներն այն պատճառաբանությամբ թե վրացիների ներկայացուցիչները շատ քիչ են քաղաքային դումայում, և թե այս խորամանկության պատճառը նորից հայերն են: Հ. Առաքելյանն այս առիթով գրում էր. «Եթե քաղաքային ինքնավարության ընտրությունների ժամանակ ձայնատու և իրավասու հանդիսանում են գլխավորապես բուրժուական խավերը, իսկ դեմոկրատական տարրերը մնում են անմասն, դրա պատճառը ոչ թե հայն է, հայ բուրժուազիան է, այլ քաղաքային կանոնադրությունը, որ սահմանել է որոշ ցենզ ձայնատուների համար: Ուրեմն բողոքելու փոխարեն պետք է աշխատել, որ օրենսդրական ճանապարհով այդ կանոնադրությունը բարեփոխվի այն ձևով, որ չունևոր, միջակ դասակարգերը ևս կարողանան ձայնատու լինել: Եվ այն ժամանակ դեմոկրատական տարրերը կարող են ստվար ներկայացուցչություն ունենալ»: Փոխանակ Մեծ եղեռնի օրերին ընդառաջելու հայերին՝ վրացիները Սղնախում հրատարակվող «Խնա Կախեթիա» լրագրի 1915 թ-ի թիվ 249 համարում Վան քաղաքի գրավման առիթով գրում են, թե Վանը ոչ մի անգամ էլ հայկական քաղաք չի եղել, որ այն վրացիների օրրանն է: «Մշակը» վրացական թերթի խմբագիր Մշավաձեին պատասխանում է այս խոսքերով. «Խոսեցեք փաստերի մասին, որքան կամենաք, բայց խոսեցեք կոնկրետ կերպով և առանց ձեր սրտի անձնական մաղձերը փաստերի հետ խառնելու»: Եվ ի հակադրություն վերը նշվածի. «Մշակն» արտատպել է նաև «Թանամեդրովե Արգի» լրագրի մի հոդվածը, ուր նշվում է, որ իսկապես, Եղեռնի այս սոսկալի օրերին վրացիները մարդասիրական գրեթե ոչինչ չարեցին տառապող հայերի համար, սակայն մեր եղբայր հայ ժողովուրդն էլ պետք է հասկանա, որ դա մի խումբ նեղ ազգայնական շովինիստական տրամադրություններով օժտված մարդկանց գործն է, իսկ վրաց դեմոկրատական խավերը այլ վերաբերմունք ունեն հայերի նկատմամբ: Վրացիների նեղ ազգայնականները օրգան «Սաքարթվելոն» սակայն, այլ կարծիք է հայերի մասին: Թերթը իբր մի խումբ վրացի բանվորների անունից հոդված է տպագրել, ուր հայտարարում են. «Աստված վկա, չենք հասկանում, մի՞թե այնքան ընկավ

մեր անձնավորությունը և այնքան վախկոտ դարձավ մեր նոր սոցիալիստացող երիտասարդությունը, որ իրենց չեն կարողանում հաշիվ տալ, թե ինչու հայերն իրավունք ունեն թուրքերին ու պարսիկներին հետապնդելու և պատերազմ հայտարարելու, ոտնակոխ տալու մեզ և գլուխներինս նստելու, իսկ մենք իրավունք պետք է չունենանք պաշտպանվելու և ծայր հանելու: Մի՞թե ինքնապաշտպանությունը մեղք է և շովինիստություն: Այսպիսով ստացվում է, ըստ վրացական թերթի, որ հայերը հետապնդել, ապա պատերազմ են հայտարարել թուրքերին ու պարսիկներին և հիմա էլ վրացիների վրա են հարձակվում, ահա ինչու վրացիների համար «ինքնապաշտպանության» պահն է եկել: Ճիշտ է ասված, թե ընկած ծառի կացնավորները շատանում են... «Չպետք է գրգռել կրքերը» առաջնորդողում Առաքելյանը տեղական հայ և վրացի մամուլի մի քանի օրգանների շովինիստական նկրտումներով լեցուն հողվածների մասին է խոսում, որոնք շատ հեռու են նպաստելու երկու ժողովուրդների համերաշխության և բարեկամության հարաբերությունների շաղկապմանը:

Հողվածագիրը ցավում է, որ տասնյակ դարեր միասին ձեռք-ձեռք տված ապրելուց հետո ո՞նց մի տգետ Տ. Փիրումյանի «Համբավաբեր» պարբերականում տպագրված խոսքերին պետք է հետևեք, թե իբր վրացիները հայերի նման մեծ գրողներ, մանկավարժներ, դրամատուրգներ չունեն: Առաքելյանը սա արդյունք է համարում խորին տգիտության և հիվանդոտ երևակայության:

«Աննպատակ ծրագիր» առաջնորդողում Առաքելյանը պատասխանում է վրացական թերթերի այն հողվածներին, որոնք պնդում էին, թե սովթանկություն է Անդրկովկասում, որովհետև 200 հազար հայ գաղթականներ են լցվել այստեղ և բնականաբար պակասել է ամեն ինչ: Առաքելյանը հերքում է այդ պնդումները, ապացուցելով, որ պատերազմական դրություն է, պակասել են փոխադրամիջոցները, գլուխ է բարձրացրել սպեկուլացիան: Առաքելյանը հաշվարկել է, որ 200 հազար գաղթականներին Ռուսաստանի խորքերը փոխադրելու համար հինգ հազար վագոն է հարկավոր, այնինչ այդ քանակի վագոններով կարելի է այնքան մթերք բերել Ռուսաստանից, որտեղ ի դեպ, այլուրի ու կարտոֆիլի հսկա պաշարներ են գոյացել, որը կբավարարի ողջ Անդրկովկասին 2 տարի, բայց դատարկ վագոններ չկան, դրանք բեռնվել և բեռնվում են միայն ռազմական տեխնիկայով:

Քութայիսի «Չվենի Մեգոբարի» թերթն իր 1916 թ-ի թիվ 53-54 համարում հայերի դեմ նոր հողվածով է հանդես գալիս, թե նրանք հիմա էլ զենեստվոների միջոցով կշահագործեն վրացիներին: Այս կապակցությամբ հանդես է եկել Բ. Իշխանյանը՝ անդրադառնալով Կովկասում

զեմստվոյական կարգեր մտցնելու հարցին: Մեծ տնտեսագետը գալիս է մի եզրակացության, թե վրաց-մուսուլմանական ազնվականական կաստան է ցանկանում դրոյթան տերը դառնալ, իսկ դեմոկրատական տարրերի շահերը նրանց չի հետաքրքրում: Յայերի մասին խոսք չկա, որովհետև մենք մեծ հողատարածքներ համարյա չունենք: Եվ թվեր է բերվում, թե վրացին Անդրկովկասի հողատարածքի վրա 70972 ընտանիք ունի, թուրքը՝ 46966, հայերը միայն՝ 9318: Այսպես, որ փոքրաթիվ հայերը վրացիներին, թուրքերին ճնշելու որևէ հեռանկար չունեն:

Վրացական «Սախալո փուրցելի» լրագրի թիվ 583-ի համարը «Յայ մամուլի» տեսությանն է անդրադառնում, որտեղ տպագրված երեք ընդարձակ հոդվածների բովանդակությունից թողած է միայն 15 տող մեջբերում: Վրացական թերթը «Մշակին» որակում է որպես դեմոկրատների օրգան: «Մշակը» մեջ է բերում հենց վրացական առածը. «Կթան կովն է ասում գոնե թող ինձ քացի տա այն կովը, որն ինձանից շատ է կթվում»:

«Չարամիտ բանասարկություններ» առաջնորդողում Առաքելյանն անդրադառնում է վրացական մամուլի օրգաններում շոշափվող մի նոր թեմայի, որն արշավանք էր Մեսրոպ եպիսկոպոսի և Յ. Առաքելյանի դեմ: Վրացական շովինիստների օրգան «Չակավկազակայա ռեչ», ռուս սոյուզնիկների օրգան «Գոլոս կավկազա» և «Պետերբուրգսկիե վեդոմոստի» թերթերը լուրեր են տարածել, թե վերոհիշյալ երկու հայ գործիչները կոնտրոբանդ զենք են ներմուծում Ամերիկայից Կովկաս: Այս ծախսու օրգանները քննադատում են իշխանություններին, թե անմիջապես պետք է ձերբակալել Առաքելյանին և Մեսրոպ եպիսկոպոսին: Այնինչ, այլ էր իրողությունը: Բանն այն է, որ 1915 թ-ի սկզբներից նաև Ամերիկայի Միացիալ Նահանգներից շատ հայ կամավորներ եկան Կովկաս՝ կռվելու թուրքերի դեմ, և բնականաբար, նրանք զենք-զինամթերքով են ժամանել Կովկաս, բժշկական անհրաժեշտ գույքով: Դա կատարվել է բացառապես Վաշինգտոնի ռուսաց դեսպանի գիտությամբ, իսկ զենքով արկղերի մեծ մասն ստացվել է «Մշակի» հասցեով: Սրան տեղյակ է նաև Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սազոնովը: Եվ ընդամենը սա պատրվակ էր, որ Քութայիսում հրատարակվող «Սամշոբլո» լրագիրը հայտարարի, որ Ամերիկայից ստացված այդ զենքերը գործելու են վրացիների դեմ: Լավ է, գոնե, որ «Յորիզոնը» Ա. Ծախիսաթունյանի հոդվածով պաշտպանեց Յ. Առաքելյանին:

«Վրաց մամուլը» բաժնում նորից անդրադարձ է Քութայիսի շովինիստական «Սամշոբլո» թերթի և նրա խմբագիր Ի. Ցեցնաձեի նոր հարձակումներին հայերի դեմ: «Մշակը» գրում է. «Ժողովրդական առածն ասում է, երբ հոտում է միսը, աղ են անում, բայց ինչ անել այն դեպքում, երբ աղն

ինքն է հոտած»։ Այսպիսին է և այս թերթը, որն իր 146-147 համարներում հայերի հասցեին հողվածների շարք է տպագրվել։ Իսկ խոսքը վերաբերում էր գերմանացիներին պատկանող ճիաթուրայի հողատարածքներին, որը վրացական կառավարությունը լիկվիդացիայի էր ենթարկում։

Երկրորդ «Բաց նամակը» վրացական թերթը հասցեագրել էր վրացի բանաստեղծներ և հասարակական գործիչներ Գր. Գվելեսիանիին, Անաստասիա Թումանյան-Ծերեթելիին, բանաստեղծներ Իոսիֆ Գրիշաշվիլուն ու Բեգլար Ախոսպիրելիին, ուր խոսում էր լուսավորչական վրացիների մասին։ «Դուք,- գրում է վրացական թերթը,- որպես վրացի լուսավորիչներ, պարտավոր եք հայտնել աշխարհին, նաև հայերին, որ նրանք իզուր են տիրություն անում վրացի լուսավորչականներին և վիրավորում ձեր ազգային զգացմունքը։ Մենք կարծում ենք, որ ձեր և ձեզ նման վրացիների բողոքը կարող է սահման դնել հայ շովինիստների աղմուկներին»։ «Մշակը» նպատակահարմար է գտնում լռել, մինչև իրենց կարծիքը կհայտնեն վերոհիշյալ գործիչները...

«Մշակը» «Վրաց մամուլ» բաժնում այս անգամ տպագրել է «Սախալո փուրցելի» լրագրի թղթակցի մի հողվածը (թիվ 751-ում), ուր նա ծույլ ու անբան է անվանում վրացիներին, ովքեր միաձայն կրկնում են, թե Թիֆլիսը հայ կապիտալիստների քաղաք է դառնում օրեցօր։ «Մշակը» ուղղորդում է վրացի թղթակցին, թե այդ ծույլերը, սակայն ալարում են իրենց շուրջը նայել և տեսնել, որ վտանգն այլ կողմից է գալիս, որ Թիֆլիսը ոչ թե հայկականանում, այլ... ռուսականանում է։ Վրացիները իրենց տեղը ռուսներին են զիջում թե՛ գիմնագիաներում, թե՛ կուրսերում, ամենուր։ «Ռուսական բնավորություն, ռուսերեն լուսավորություն, լեզու, գիրք, լրագիր, բոլորը զարմանալի արագությամբ առաջ է խաղում Թիֆլիսում և ամեն ինչ ռուսականանում։ Թիֆլիսն իսկական ռուսական քաղաք է, պակասում է մեր բնակչությունը, այլև չափից ավելի արագությամբ կորչում է մեր ստեղծագործական ուժը, ազդեցությունը»։

Անդրկովկասյան սեյմը 1918 թ-ի ապրիլի 9-ին Անդրկովկասը հայտարարեց անկախ։ Եվ պառակտվեցին ուժերը։ Գեգեչկորին, Ծերեթելին և Ժորդանիան դեմ էին թուրքերի հետ հաշտությանը։ Նոր կաբինետ կազմեց Չխենկելին, որն առանց հայերի կարծիքը իմանալու Կարսը հանձնել էր թուրքերին։ Այս կապակցությամբ էր, որ դաշնակցականներ Ալ. Խատիսյանը, Քաջազունին, Ավ. Սահակյանը դիմեցին Չխենկելիին սեյմի մինիստրական կազմից դուրս գալու համար։

1918 թ-ի թիվ 99-ում հռչակագրով Վրաստանը հայտարարվում է անկախ։ Առաքելյանը սա ոգևորությամբ է ընդունում մի պայմանով, որ գոնե

այն 500 հազար հայրերը, որ ապրում են Վրաստանի տարածքում, կապահովեն ջարդից: Եվ զավեշտը: Նորանկախ Վրաստանը պահանջում է Լոռին, Ախալքալաքի նահանգի մեծ մասը, որոնք բոլորը բնակեցված էին բացարձակապես հայերով:

«Պետական տեսակետը» և «Գաղթականները» հողվածի հեղինակ Գ. Կեր-Ռուբինյանը գրում է Վրաստանի մի շարք շրջաններում՝ Սուրամ, Մանգլիս, Բորժոմ, Թիֆլիս, Սղնախ և այլ վայրեր տեղափոխված հայ գաղթականների մասին, որոնց նկատմամբ իրենց դեմոկրատ հորջորջած վրաց պարագլուխներ Ծերեթելին, Չխեիձեն, Ռամիշվիլին և այլոք, որոնք միայն 10 տարի առաջ պայքարում էին Ստոլիպինի ռեժիմի դեմ, այժմ իրենք են անցել նույնիսկ Գոլիցինին հայատացության առումով: Նրանք հրամայել են անտուն, անօթևան հայ որբին, զրկվածին վերադարձնել Հայաստան և նույնիսկ թույլ չտալ Աստծո ջրից օգտվելու: Եվ երբ ռուս կանայք Սևչինո գյուղի մոտ ցանկացել են գոնե 50 դույլ ջուր տալ նրանց, հասել են «պետական տեսակետի» ներկայացուցիչները և թափել ջուրը, որ ծարաված հայերը չխմեն: Սա, իհարկե, շատ հեռուն էր տանում, բայց սոցիալիստ մինիստրների հրահանգը կատարվել է անվերապահորեն:

Թերթն ահազանգում է, որ Ալավերդու շրջանում վրացիները զորահավաք են կատարում հայ երիտասարդներից իրենց բանակի համար: Բայց սա արսուրդ է, որովհետև, եթե 1918 թ-ի հուլիսին Ռամիշվիլին, Ժորդանիան Լոռվա չեզոք գոտին վրացական զորքի կողմից գրավելը պատճառաբանում էին թուրքական զորքի առաջն առնելու պայմանով, այժմ սեփականացրել են հայկական տարածքը: Ա. Նազարեթյանը դեմ է այսպիսի քաղաքականությանը դարավոր հարևանի կողմից և առաջարկում է վրացիների և հայերի համատեղ ջանքերի միացումը, ապա թե ոչ 2 անկախ հանրապետությանն էլ սպառնում է ոչնչացման վտանգը:

«Մշակը» մեջ է բերում «Հորիզոն» և «Աշխատասեր» թերթերի հողվածները՝ կապված հայ-վրացական միջադեպին Լոռու և Բորչալուի շրջանում: Լոռին հայկական տարածք է՝ աներկբայելի է, և վիճել այս առիթով անհնար է, իսկ Ախալքալաքը, Ախալցխան և այլ հայաշատ կենտրոնների մասին շտապ բանակցություններ վարել է անհրաժեշտ, այլապես գոլիցինյան հողաբաժանումը դեռ վիճելի շատ հարցեր է թողնում, իսկ հայն ու վրացին պիտի միասին ապրեն դեռ շատ դարեր: Ուրեմն, ավելի նպատակահարմար է համարում «Մշակը» ոչ թե Դաշնակցությանը որակել որպես նացիոնալիստների, ազրեսորների, ավանտյուրիստների, այլ ընթացք տալ վիճելի հարցերին և լուծել արդարացիորեն: Հաջորդ համարում արդեն հաղորդվում է, որ Քարինջ գյուղի մոտ ընդհարումներ են տեղի ունեցել, հայերի

և վրացիների միջև, հայերը վիրավորել են գրահապատ մեքենայի մեքենավարին, իսկ առավոտյան մարտերը դադարել են բանակցությունների համար: Ղարաքիլիսայում գտնվող զորքերի հրամանատար Դրոյին հաղորդում են բոլոր նորությունները: Իսկ վրաց շովինիստներն ու նացիոնալիստները «Սաքարթվելո» և այլ թերթերում պնդում են, թե ժամանակն է, որ վրաց կառավարությունն ավելի շրջահայց լինի և հայկական բոլոր կազմակերպություններին վտարի Վրաստանի մայրաքաղաքից: «Մաքրենք հայերից,- ահա նրանց կոչը»: Իսկ հայկական Այգեհատ և Արդվի գյուղերում գտնվող վրացի զինվորները նույն օրերին թալանել են ամեն ինչ: Այսինքն, վրացիները նույն կերպ են վարվում հայերի հետ, ինչպես թուրք ասկյարները:

Թերթը Սանահինից ստացված լուրերից եզրակացնում է, թե սկսվում է հայ-վրացական պատերազմ, Դրոն Ղարաքիլիսայում գորահավաք է կատարում, նույնը կատարում են վրացիները, Բորչալուում արդեն անմեղ մարդկանց արյուն է թափվում: «Մշակն» արտատպել է վրաց սոցիալ-հեղափոխականների օրգան «Շրոմա» թերթի 1918 թ-ի դեկտեմբերի 22-ի հոդվածը, ուր վրացական թերթն էլ է համոզված, որ նացիոնալիստական ավանտյուրայի մեջ ընկնել չի կարելի, որ պետք է հաշտության եզրեր գտնել հայերի հետ: Եվ զարմանք է հայտնում վրացական թերթը, երբ նրանց մամուլի օրգաններում տիրող վակիսանալիսիան մասնակցում են նաև իրենց սոցիալիստ հորջորջած գործիչները: Բնականաբար, ահաբեկված է Թիֆլիսի հայ ազգաբնակչությունը, որովհետև արդեն վրացիները ձերբակալում են «ժողովրդի ձայն» թերթի աշխատակից Տիգրան Չախումյանին, նույնիսկ հայկական դիվանագիտական ներկայացուցիչ Ջամալյանին, կնքել են հայկական բոլոր ակումբները:

1919 թ-ի թիվ 5 համարում «Մշակը» տպագրել է վրացական «սախալի Մաքմե»-ի թիվ 423 համարի և նացիոնալ դեմոկրատական կուսակցության օրգան «Սաքարթվելոյի» (թիվ 2-ի) հոդվածները հայ-վրացական զինադադարի մասին, ուր վրացական երկու թերթերն էլ զիջումների չեն գնում, հայտարարելով, պատերազմը պիտի շարունակվի, ոչնչացնել կամ հետ մղել Բորչալուի գավառից հայկական զորքերը: «Էրթոբա» լրագիրն էլ (թիվ 2) է պնդում, թե չնայած դաշնակից ուժերի միջնորդությամբ է պատերազմն ավարտվել, բայց մենք ամեն ինչ կանենք մեր պահանջների կատարման համար:

Եվ այս օրերին էր, որ «Մշակը» տպագրում էր Ասլան թղթակցի փոքրիկ ֆելիտոնները: Ահա դրանցից հատվածներ՝

ա. Ովքե՞ր են սոցիալ-դեմոկրատները:

Մարդիկ, որոնց խնչելն իսկ սկզբունքով է լինում:

բ. Ի՞նչ բան է «Գրուզիա» թերթը:

Մի աղբատար, ուր ամեն տեսակ որդ կա:

գ. Ի՞նչ բան է «Բորբա» թերթը (վրացերեն):

Մի կիսակենդան մարդ, որ աստիճանաբար փտում է:

դ. Ի՞նչ բան է «Էրթորբա» թերթը:

Ինտերնացիոնալի «անառակ որդի», որ վատնել է իր հոր ամբողջ կարողությունը և այժմ ուրիշների խոզերն է արածեցնում:

ե. Ի՞նչ բան է «Թիֆլիսսկի լիստոկ» թերթը:

Մի պառավ կնիկ, որի բռնության հատել է:

զ. Ի՞նչ բան է «Սաքարթվելո» թերթը:

Դեզինտերիա:

1919 թ-ի փետրվարի համարներում «Սաքարթվելո» թերթը բանավեժ է սկսել Թիֆլիսի մասին: Վրաց լրագրող Գվազավայի հողվածաշարին շատ հակիրճ պատասխան է տվել «Կավկազսկոյե սլովո» թերթի խմբագիր Քր. Վերմիշյանը: Նա Գվազավային ծաղրում է հայերի երկվոր լինելու հարցի վերաբերյալ բարբաջանքներ թափելու համար և բերում միայն պատմական երկու փաստաթուղթ: Մեկը մեծ ճանապարհորդ Տուրնեֆորի փաստաթուղթն է, որը Թիֆլիս այցելել է 1710 թվականին, երբ ոչ մի ռուս դեռ ուղք չէր դրել Վրաստան, ուր նա գրում է, թե Թիֆլիսում բնակվում է 20 հազար մարդ, որոնցից 14 հազարը հայեր են, 3000-ը մահմեդական և միայն 2000-ը վրացիներ:

Երկրորդ փաստաթուղթը, որը թողել է պարսից շահի դեսպանատան խորհրդատու Ալեքսանդր Նեգրը: Սա մի ճանապարհորդության նկարագրություն է 1877 թ-ին, ուր Նեգրը նշում է, թե Թիֆլիսում 20 հազար երկսեռ անձ կա: Նրա մեջ գտնվող 2 հազար տներից միայն 150-200-ն են վրացական, իսկ մնացածները պատկանում են հայերին: Նա բերում է նաև «Օբոզրենիե»-ի փաստերը 1834 թ-ին, ուր ևս գրված է, որ 11581 տղամարդուց վրացի են 1947-ը, հայերը՝ 9447, թաթարները՝ 187: Ապա Վերմիշյանը զարմացած հարցնում է, թե եթե հայերը երկվորներ են, ըստ Գվազավայի, այդ ինչպես պատահեց, որ 40-50 տարիների ընթացքում նրանք կրկնակի անգամ ավելի եկեղեցիներ և այլ շինություններ կառուցեցին, քան վրացիները 15 դարերի ընթացքում:

«Մշակը» տպագրել է «Սաքարթվելո» թերթի 1919 թ-ի թիվ 24-ի հողվածը և պատասխանը՝ «Դարձյալ գաճաճ իմպերիալիստների մասին», ուր գրում են, թե վրացիների անամոթությունն այն աստիճանի է հասել, որ Ջաջուռից գատ նրանք իրենց են համարում նաև Կարսն ու Արդահանը, Օլթին... Քիչ էլ անցնի, նրանք երևի էրզրումն են պահանջելու որպես վրացական

հող»։ Եվ ամենագավեշտականը, որ նրանք դաշնակից պետություններից խնդրում են նկատի առնել այս հանգամանքը։

Թերթը հայտնում է, թե «Աշխատավոր» պարբերականը փակվել է 1921 թ-ի թիվ 12 համարում ոմն Ոսկանյանի նամակը տպագրելու պատճառով։ Միաժամանակ Վրաստանի ներքին գործերի նախարարը զգուշացրել է «Մշակ» և «Սլովո» թերթերին, թե նրանք սիստեմատիկաբար սադրիչ տեղեկություններ են տպագրում, որոնք երկպառակտություններ են սերմանում հարևան ժողովուրդների միջև. «Կրկնվելու դեպքում այդ երկու լրագրերը կփակվեն, իսկ նրանց խմբագիրները կարտաքսվեն Վրաստանի սահմաններից»։

«Չայրենիքի դավաճաններ» թղթակցության մեջ հաղորդվում է, որ 1921 թ-ի փետրվարի 16-ին Շուլավերում կազմվել է վրացական բոլշևիկյան կոմիտե, որն իրեն համարում է Վրաստանի նոր կառավարություն։ Այդ կոմիտեն է, որ Լենինի բանակին առաջնորդում է Վրաստանի բանվորության դեմ։ Կոմիտեի մեջ են մտնում Վրաստանի հայտնի դավաճան Ֆիլիպ Մախարաձեն, Մ. Օրախելաշվիլին, Բուդի Մդիվանին, Ծալվա Էլիավան, Միխայիլ Կոկուջավան, Լադո Կեբաձեն, Յմայակ Նազարեթյանը... Ընդամենը 9 օր անց՝ փետրվարի 25-ին, նրանք մտան Թիֆլիս՝ Վրաստանը հայտարարելով խորհրդային, որն էլ վերջ դրեց «Մշակի» հրատարակությանը։

**«Արոր» ամսագիր, 1910-1913թթ.,
խմբագիր՝ Յամբարձում Առաքելյան**
*Ամենամսյա հանդես, գիտության, գրականության,
քաղաքատնտեսության, գեղարվեստի և խաղաղասիրության,
արևելագիտության, հայագիտության և կովկասագիտության*

1892-93 թվականներին ցարական իշխանությունները չվստահեցին Յ. Առաքելյանին «Մշակի» խմբագրի պաշտոնում հաստատելու՝ պատժառաքանելով, թե նա երիտասարդ Յայաստանի ջատագով է, սոցիալիստական հայացքների տեր, հայ նարոդնիկական խմբի անդամ: Եվ միայն 1910 թ-ին նույն իշխանությունները նրան նշանակեցին «Մշակի» համախըմբագիր-հրատարակիչ և թույլատրեցին Թիֆլիսում հրատարակելու «Արոր» ամսագիրը:

1910 թվականին N 1-ի առաջնորդում Առաքելյանը գրում է. «Յանդես գալով հայ մտավոր և գրական անդաստանի վրա մի նոր ամսագրով, «Արորի» խմբագրական կազմը պարտք է համարում պարզել այն շարժառիթները, որոնք դրդեցին ձեռնամուխ լինելու այդ պարբերականի հրատարակությանը:

Վերջին տարիներին մեր հուզված, այեկոծված և հեղափոխական կյանքը շատ սակավ պատեհություն, տրամադրություն և հնարավորություն էր տալիս հայ մտավորականությանը առանձին ուշադրություն դարձնելու զուտ գրական, գիտության և գեղարվեստական հարցերի վրա, զբաղվել գրականության և գիտության այն ճյուղերով, որոնք անհրաժեշտ են ամեն մի քաղաքակրթվող ժողովրդի, հետևաբար և հայ ժողովրդի կուլտուրական, էվոլուցիոն, խաղաղ, մտավոր զարգացման համար: Չկա մի օրգան, որ հայ ինտելիգենտը, մանավանդ չեզոք և անկուսակցականը, կարողանար իր լուսման ձգել հայ մտքի մշակման գանձանակի մեջ: Այդ պակասը զգալի եղավ մանավանդ, «Մուրժ» ամսագրի դադարումից հետո: Օրաթերթերը, որոնք ըստ իրենց կոչման և ժամանակի պայմանների, ստիպված են զբաղվել միայն օրվա հրատապ հարցերով, հետևապես և ժամանակ չունեն միանգամայն օբյեկտիվ և բազմակողմանի քննելու հարցերը, անկարող են մշակված, ամփոփ և հարցերը բազմակողմանի լուսաբանող հոդվածներ տպագրել: Բացի դրանից, կան հարցեր, որոնք չեն կարող օրագրական մամուլի անընդհատ քննության առարկա լինել, ինչպես են զուտ բանասիրական, լեզվագիտական, գիտական, փիլիսոփայական և գեղարվեստական հարցերը:

«Արորն» աշխատելու է տալ նաև ռուսական և եվրոպական մտքի և գրչի լավագույն ներկայացուցիչների արտադրությունների թարգմանությունները:

Ամսագիրը շեշտելու համար համամարդկային համերաշխության և եղբայրության անհրաժեշտությունը՝ զբաղվելու է և այն շարժման արտահայտությունների նկարագրությամբ, որի նպատակն է համամարդկային եղբայրությունը, ժողովուրդների մեջ և փոքր ազգությունների խաղաղ, կուլտուրական, ինքնուրույն զարգացման ապահովումը»:

Հիանալի գիտակցելով դժվարությունները, որ կանգնելու էին ամսագրի առջև, Առաքելյանը մեծ զոհաբերությունների էր գնում թե՛ ֆինանսապես և թե՛ բարոյապես, իր շուրջը համախմբելով ժամանակի ամենանշանավոր գործիչների, ինչպիսիք էին՝ Ա. Ալպոյաձյանը, Ա. Աթանասյանը, բժշկապետ Բ. Աղասարյանը, բժիշկ Արծրունին, Բաբգեն եպիսկոպոս Կյուլսերյանը, Լևոն Բաղայանը, Գ. Բաշինջաղյանը, Հարություն Գասպարյանը, Վ. Թեքեյանը, Կ. Կրասիլիկյանը, Գ. Թալխոշյանը, Սուրխաթյանը, Կ. դերվիշը և այլոք:

Առաջին համարում տեղ են գտել Արփիարյանի «Ննդամոլիկ աղջիկը» պատմվածքը, Առաքելյանի «Բոգդան բեկը» պատմվածքը, «Հանդիպումներ Գ. Սունդուկյանի հետ» հոդվածը, «Գիտական, գրական խրոնիկա», իսկ 1910 թ-ի 3-4 համարներում Մ. Նաթանյանի ընդարձակ հոդվածն է Արփիարյանի մասին: Ամսագրի բոլոր համարներում մշտական տեղ են տրվում հայկական, ռուսական, արտասահմանյան բաժիններին:

Շարունակական տպագրվել է Առաքելյանի «Տանջվածը» (հեղափոխական կյանքից) վեպը, Խուրշիդի «Քերի Խանըմը» եղերական վեպը, Ատրուշանի «Ծովը» պատկերը: Մեծ հետաքրքրությամբ է կարդացվում Շահիրարի (Հ. Առաքելյան) «Խիղճը վերածնվեց» նորավեպը (1911 թ., N 1), Ալ. Աբեյյանի «Երկու թռչուն» պատկերը Շամախու կյանքից:

1911 թ-ի N 2-3-ում տեղ է գտել Հ. Առաքելյանի և Պետրոս Զաքարյանի «Ճորտերի ազատագրության 50-ամյակը» տեսությունը, ուր խոսք է գնում նաև ազատագրության նշանավոր հայ գործիչ Հայրապետյանի մասին, որը Տուրգենևի մտերիմ բարեկամն էր, ազատագրության գործի նշանավոր ներկայացուցիչ: «Հայկական կյանք» բաժնում խոսվում է Եգիպտոսում 1906-ին հիմնած Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մասին, որը հետզհետե բարգավաճելով իր գործունեությունն էր տարածում Թուրքիայի հայաբնակ վայրերի վրա, հետամուտ լինելով կուլտուրական, ազգային ու բարեգործական նպատակների:

Ամսագրի աշխատակից Ե-ն (Սարգիս Եսայան) քննադատական հոդված է նվիրել Մամիկոն Գևորգյանի «Փառանձեմ» դրամային, որն այդ օրերին բեմադրվում էր Թիֆլիսում: Ըստ հոդվածագրի, այն հյուսված է անբնական տեսիլներով, թքով կպցրած նախադասություններով, եղած անցածի մասին նաղլ անելու հինգ երկար ու բարակ արարվածների մեջ, որոնք շաղկապված, թյուրիմացաբար դրամա անուն են կրում:

Ամսագիրը տեղ է հատկացրել նաև ժամանակակից գրողների գործերին: Դրանցից են Ա. Զանյանի «Ծաղիկներ», «Մենություն», «Գեղեցկություն», «Ձնծաղիկ» պատկերները, Կարինեի «Մի ժամը», Ստ. Վահանյանի «Հրաժեշտը», Ստ. Օհանյանի «Բացիկը» և այլ գործեր: Համարներ շարունակ տպագրվել է Գաբրիել քահանա Պատկանյանի «Ինքնակենսագրությունը»:

«Մեր գրողները» շարքում ներկայացվել են Խրիմյան հայրիկը, Ղևոնդ Ալիշանը, Սկրտիչ Պեշկյթաշյանը, Եղիա Տեմիրձիպաշյանը (հեղինակ Ե.):

Պետրոս Թումանյանը «Ղրիմի հայերը» պատմական տեսության հեղինակն է, որը տպագրվել է մի քանի համարներում:

1911-ի 10-11 համարում անդրադարձ է Գևորգ քահանա Սկրտումյանի «Ստիպեցին», Լևոն Գրիգորյանի «Մի քիչ լույս» պատմվածքներին, Ա. Եզեկյանի «Առակներին», «Արաբիայի շէյխը» լեգենդին: Տպագրել են նաև Ալ. Աբեյանի «Նշանվածները» պիեսը:

Եվ 1911 թվականի վերջին 12-րդ համարում Հ. Առաքելյանի տրտունջն է կարծես շրջապատի նկատմամբ: Նա գրում է. «Նկատի ունենալով մեր սուղ միջոցները և աննպաստ պայմանները, որոնց մեջ մենք գործում ենք, մենք ասում ենք՝ «Ինչ կարող եմ, կատարում եմ, թող կատարե ավելի լավ, ով կարող է: Մենք կատարում ենք, ինչ որ կարող ենք, ինչ որ ներում ու թույլատրում են մեր ուժերը: Մենք գիտենք, որ առհասարակ, ամսագիրը մեր մեջ հաջողություն չի ունենում, մեր առջև էր «Փորձ», «Մուրճ» ամսագրերի օրինակը: Բայց մենք որոշեցինք, այնուամենայնիվ, մի նոր փորձ կատարել, որը ողջունվեց միայն օտար (ռուս, ֆրանսիական, գերմանական, վրացական) մամուլի կողմից: Իսկ հայկական մամուլի օրգանները կամ չարակամությամբ ընդունեցին, կամ լռությամբ և կամեցան մեր փորձը հենց սաղմի մեջ խեղդել: Բայց այդ չարակամությունը, դրված է հայկական նախանձից, մեզ ավելի դրդեց հարատևել մեր ջանքերի մեջ»:

Տպագրվել են Վահանու «Պատրանք» վեպը, «Մատենագրություն» բաժնում, հոդվածների շարք նվիրել Հովի. Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյակին, հայկական տպագրության 400-ամյակին, Հարություն Սողվյանի «Սավառնող ոգին» վեպը, Գ. Բաշինջաղյանի «Ուսանողներ» պիեսը, Գևորգ Դողոխյանի կյանքին ու գործունեությանը նվիրված Հ. Սպանդարյանի հոդվածը, Լևոն Մանվելյանի «Մագդա» դրաման, Դավիթ Անանունի «Հայ բառի բացատրության մի փորձ» հոդվածը, Լևոն Քալանթարի «Ծանր երազ» պիեսը Բ. Աղասարյանի վերլուծությամբ, Հ. Առաքելյանի «Պատմություն հայոց կամ Հայաստան» աշխատությունը:

Ամսագիրը մեծ ուշադրություն է դարձրել ռուս գրականության հսկաներին, մասնավորապես տպագրել է Լ. Անդրեևի «Իմ հուշատետրը» գործը:

1910 թվականի N 11-ը համարյա ամբողջությամբ նվիրված է Լև Տոլստոյին, ուր տեղ են գտել կարծիքներ Տոլստոյի մասին ինչպես եվրոպական, այնպես էլ ռուսական լրագրերից, ինչպես նաև «Կոնֆիցիուս. նրա կյանքը և ուսմունքը» Տոլստոյի թարգմանությամբ: Լև Տոլստոյի «Խոստովանություն» վեպը Հարություն Սուրխաթյանի թարգմանությամբ:

Մեծ տեղ է հատկացվել Մաքսիմ Գորկու գործունեությանը, տպագրվել են «Բազեի երգը», «Օտար երգիչներ» վալախական լեզենդը, «Բազեն» ստեղծագործությունը Ա. Տեր-Հովհաննիսյանի թարգմանությամբ, «Ծերունի պատմվածքը»...

Եվգենի Զիրիկովի «Շեփորուկը» պատմվածքը թարգմանել է Վիկտոր Մանուելյանը, անդրադարձել են Գոգոլի «Վերաքննիչը» ստեղծագործությանը, Իվաչևայի «Իմ օրը» պատմվածքին, Օսիպ Դիմովեցի «Տարեդարձը», Յու. Վեսելովսկու «Գերմանական Բելետրիստը և հայերը» հռչակավոր հոդվածին, Դմովի «Չար մարդու պատմությունը» գործին, որն արժանացել էր 2-րդ համառուսական կոնգրեսի գլխավոր մրցանակին, Նեմերովիչ-Դանչենկոյի «Մեծ սիրտը» ստեղծագործությանը, Պոտոպենկոյի «Բախտ» պատմվածքին Պոդոս Զաքարյանի թարգմանությամբ, Արցիբաշևի «Սարսափ» վեպը Արամ Բաղդասարյանի թարգմանությամբ, Լերմոնտովի «Փախստական» լեզենդը Գ. Հայկունու թարգմանությամբ, Դոբրոլյուբովի «Բարոյախոսություն և գիտություն» հոդվածը...:

«Արորի» ուշադրության կենտրոնում էր եվրոպական գրականությունը: Հենց առաջին համարում տպագրվել են Էմիլ Զոլայի «Արյուն» պատկերը, Վիկտոր Հյուգոյի «Իննսուներեքը» վեպը Ա. Սաֆարյանի թարգմանությամբ, Հ. Հելմհոլցի «Հանրամատչելի գրույցները» Հ. Չախմախսազյանի թարգմանությամբ, անդրադարձել են Սարկ Տվենի մահվանը՝ որակելով նրան որպես ժամանակի ամենամեծ երգիծաբանի, որի պատմվածքը նույնպես տպագրվել է 1910 թ-ի N 4-ում:

Կոնստանտին Ղազարբեկյանը 1911 թ-ի N 9-ում անդրադարձել է լեհ գրողների ստեղծագործություններին, տպագրել «Գյուղացու մրմունջներից» բանաստեղծությունը գյուղացու խեղճ ու կրակ կյանքի մասին: Եվ որ մի հույս, թե եկող գարունը որևէ փրկություն է բերելու: Լեհերենից է թարգմանվել «Վարդը» բանաստեղծությունը: Տպագրել են Ֆրանսուա Կոպպեի «Հարսը» նովելը, Իսահակ Թեյլորի «Արիացիների ծագումը» հոդվածը, Հայնեի «Հրաժեշտի ժամանակ» բանաստեղծությունը, Նադսոնի «Ընկեր վշտատանջ» բանաստեղծությունը Կրասիլիկյանի թարգմանությամբ:

Տպագրվել են Գ. Խալաթյանցի «Ներածություն հայոց պատմության» աշխատությունը, Ն. Մառի գրությունը «Անիի հնագիտական ինստիտուտի մասին» հոդվածը, Կազեմիր Տետմայերի «Նկարչի հիշողություն-

ներից» հողվածը:

«Ռուս պարբերական մամուլը» բաժնում անդրադարձ է կատարվել «Միր», «Իսկրի ժիզնի», «Նովայա ժիզն» հանդեսներին (հեղինակ՝ Սուրխաթյան):

Տարաս Եւչենկոյի մահվան 50-ամյակի կապակցությամբ ամսագիրը ծանոթացել է ուկրաինացի մեծ գրողի գործունեությանը: Ըստ «Արորի», նշանավոր այդ գրողը նույն դերն է խաղացել ուկրաինացիների համար, ինչ Եւքսպիրը՝ անգլիացիների, Վիկտոր Զյուգոն՝ ֆրանսիացիների, Ծիլլերը՝ գերմանացիների մոտ: Նա ներկայացվում է որպես ազատագրական պայքարի մեծ գործիչ:

Դրամատիկական գործեր տպագրելուց բացի ամսագիրը «Թատերական տեսություն» բաժնում քննարկվել է Զուդերմանի «Յայրենական տուն», Գոգոլի «Վերաքննիչ», Գորգենի «Միտրա Էշֆորս», Եւքսպիրի «Յամլետ» գործերը, որոնք բեմադրվում էին Թիֆլիսի թատրոններում: Ձեռնդել են անգլիացի հռչակավոր արևելագետ, պրոֆեսոր Գեյսի «Ակնարկներ հնագույն հայության վրա» հողվածաշարը Ե. Վռամի թարգմանությամբ, ռուսաստանցի հայտնի հոգեբույժ, պրոֆեսոր Բեխտերևի «Ինքնասպանության պատճառները և նրանց դեմ հնարավոր մաքառման մասին» հողվածը (բժշկապետ Բ. Աղասարյանի թարգմանությամբ):

Առաքելյանն անդրադարձել է Ծուշու թեմական դպրոցի 75-ամյա պատմությանը, ներկայցրել իրերի իրական դրությունը, որպեսզի օգնության ձեռք մեկնվեր թերությունները վերացնելու համար:

1910 թվականի դեկտեմբերի 11-ին մահացավ հայոց երկաթյա անվանումը ստացած կաթողիկոս Մատթևոս Իզմիրլյանը: Զ. Առաքելյանն այս կապակցությամբ գրում է. «Անկեղծ և խորը վիշտ առաջ բերեց հայության բոլոր խավերի մեջ մահը այն եկեղեցականի, որը 1908 թ-ի նոյեմբերի 1-ին համազգային ընտրությամբ կոչվեց բազմել Լուսավորիչի գահին և կառավարել Յայոց եկեղեցին ու նրա հետ շաղկապված հայ ժողովրդի հոգևոր-մտավոր և բարոյական կրթության գործը: Զովվապետը վախճանվեց 66 տարեկան հասակում, երբ լի էր դեռ եռանդով գործելու բուռն ցանկությամբ: Իբրև եկեղեցական գործիչ առհասարակ, իբրև պատրիարք Թուրքիայի հայության, իբրև ազգային երեսփոխան, իբրև մաքուր, շիտակ ու ազնիվ հովիվ, նա ունի մեծ արժանիքներ, ունի իրավունք երախտագիտության հայ ժողովրդի կողմից և արժանի է, որ այսօր հայ ժողովուրդը համազգային սուգով հարգե նրա հիշատակը: Խոնարհենք մեր գլուխը նրա թարմ գերեզմանի առաջ և մաղթենք, որ նա ունենա մի հաջորդ՝ կարող և ձեռնահաս, շարունակելու նրա ազգանվեր մեծ գործը»:

Կալխասի (Արամ Նազարեթյան) «Ծորիխներ» հողվածը նվիրված է

նոր կաթողիկոսի ընտրություններին: Նա հայտարարում է, թե ամեն տեսակի «գործիչ-փրկիչները» ասպարեզ են նետվել ընտրություններին մասնակցելու համար, որպեսզի հետագայում նորընտիր կաթողիկոսին իրենց պահանջները ներկայացնեն: 1912 թ-ի N 5-6-ը հայտնում է, թե կաթողիկոս է դարձել Գևորգ 5-րդը:

1911 թ-ի N 4-ում Առաքելյանը հայտնում է կապիտալիստական աշխարհի խոշոր ներկայացուցիչներից մեկի, մեծ բարերար Ալեքսանդր Յովհաննիսյան-Մանթաշյանի մահվան լուրը: Նա էր հիմնել հայական եկեղեցին Փարիզում, Կատարել Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու վերանորոգումը, Ներսիսյան դպրոցի նոր շենքի կառուցումը, բազում այլ նվիրատվություններ հայկական որբանոցներին, ծերանոցներին...: Չտեսել էլ են նաև Բենիկ վարդապետի Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցում ապրիլի 30-ին պատարագից հետո արտասանած դամբանականը Մանթաշյանի դագաղի վրա:

1912 թ-ին մահացավ մեծանուն գրող Գաբրիել Սունդուկյանը, ով 40 տարի, այսինքն ստեղծման օրվանից, եղել էր «Մշակ» լրագրի գլխավոր աշխատակիցներից մեկը, մեծ խորհրդատուն: Մահից ընդամենը օրեր առաջ նա «Մշակում» տպագրեց իր «Կտակը»: Ծանր ու անփոխարինելի էր կորուստը մեծ հրապարակախոսի ու դրամատուրգի, որի հեղինակությունը դասական արժեք էր ստացել: Այս առումով Յ. Առաքելյանը գրում էր. «Մի ամբողջ բանաստեղծական երկ է ավանդել Սունդուկյանը իր «Կտակի» մեջ, որը թողել է «Մշակի» խմբագրության անունով: Մի ամբողջ բանաստեղծություն, կարելի է ասել նույնիսկ պոեմ կա այս կտակի մեջ, ու նա ներկայացնելով իր վերջին կամքն իր թաղման մասին, ընդգծում է հայ հասարակության համար կենցաղի նոր ուղի, նոր ճանապարհ, կամ ավելի ճիշտ է ասել վերադարձ դեպի նախկին հին, պարզ ու նահապետական ձևերը կենցաղի մեջ, դեպի պարզ, քրիստոնեական ապրելակերպ»: Իսկ ճշգրիտ ուղին, ըստ մեծ մտավորականի, այն է, որ մարդկությունը դեն նետի փարթամությունը, շքեղությունը, ավելորդ զարդերը, անմիտ ծախսերը: Պատիվը, հարգանքը, ըստ Սունդուկյանի, ճոխության մեջ չեն, հարգանքը պետք է մարդկանց սրտերի մեջ լինի: Այնուհետև Առաքելյանը գրում է, թե Սունդուկյանին հայ հասարակությունը ոչ թե թաղում է, այլ հանձնում է հավիտենականության, անմահության: Գերեզմանը, որի մեջ ամփոփվում է նրա աճյունը, այն դուռն է, որով նա համարձակ անցնելու է դեպի անմահություն:

Նյութական սղության, ինչպես նաև «Մշակի» գլխավոր խմբագրի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ Առաքելյանը դադարեցրեց «Արորի» հրատարակությունը:

ՀԱՎԵԼ ՎԱԾ

Հայ պատգամավորութեան հաղորդագրութիւնը

Վեհափառ կաթողիկոսի հրամանով, ինչպես յայտնի է, յունվարի սկզբին Պետերբուրգ ուղևորվեց մի յատուկ պատգամավորութիւն՝ ներկայանալու կառավարչական անձանց հայկական եկեղեցու գործերի վերաբերութեամբ: Պատգամավորութեան անդամներն են Ներսէս արքեպիսկոպոս հուղավերդեան և Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեան:

Պատգամավորութիւնը զանազան ժամանակներում ներկայավել է Մեծ Իշխան Վաղիմիր Ալէքսանդրովիչին, ներքին գործերի մինիստր Բուլիգինին, Կովկասեան Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովին, մինստրների կոմիտէի նախագահ Վիտտին, Բարոն Բուդբերգին և ուրիշ պետական ազդեցիկ անձանց: Մենք համառօտ տեղեկութիւններ տուել էինք այդ այցելութիւնների մասին մեր լրագրում իր ժամանակին:

Այժմ անհրաժեշտ ենք համարում հաղորդել մեր ընթերցողին վերջին ստորգ տեղեկութիւնը, որ մենք ստացանք երէկ, մարտի 23-ին, Պետերբուրգից, պատգամավորութեան անդամ Մեսրոպ վարդապետից: Նա հեռագրում է հետևեալը.

«Այսօր (մարտի 22-ին) մենք ներկայացանք կովկասեան փոխարքային: Ընդունելութիւնը շատ սիրալիր էր: Յունիսի 12-ի պօլթեմիան կը վերաքննվի, աքսորված հոգևորականների հարցը կը վերաքննվի և ըստ կարուտյն նրանք կը վերադարձվեն և դպրոցական հարցը կը կարգաւորվի»¹³⁷:

Մի նոր աղէտ

Մեզ վրա մի տխուր պարտականութիւն է ծանրանում գուժելու մի նոր աղէտի մասին: Երևանից թէ մեր ստացած և թէ հեռագրական գործակալութեան ու տեղական թերթերից հաղորդած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ կիրակի, փետրվարի 21-ին Երևանում տեղի են ունեցել արինահեղ ընդհարումներ թուրքերի և հայերի մէջ:

¹³⁷ «Մշակ», 1905 թ., մարտի 23:

Այն, ինչից որ երկիւղ էինք կրում, տեղի ունեցաւ և այն էլ Երևանի նման մի քաղաքում, ուր վերջին տարիներում շարունակ հայերի և թուրքերի լավագոյն տարրերը քարոզում էին փոխադարձ յարգանք և համերաշխութիւն դէպի միմեանց: Բայց կեանքի վրա ազդող բոլոր պայմանների հետ մենք ծանօթ չենք և մեզնից խուսափել են այնպիսի ազդեցութիւններ, որոնք գործել են բոլորովին հակառակ ուղղութեամբ:

Երևանում հոգևորականութեան առաջնորդները և քաղաքագլուխը իրանց վրա նախաձեռնութիւն են վերցրել հանգստացնելու յուզմունքները և վերականգնելու խաղաղ կեանքը քաղաքի մէջ: Բոլորովին գովելի է Երևանի քաղաքագլխի դիմումը Նախիջևան, Օրդուբաթ, Բաշ-Նորաշէն և Իգդիր, որպէս զի այնտեղ նախօրոք ձեռնարկվեն միջոցներ առաջն առնելու խառնակութիւնների և սուր ընդհարումների:

Որքան ծանր է զգալ, որ այս բոլորը կատարվում է քսաներորդ դարում: Եւ ի՞նչ է կատարվում: Մի խելագար, անմիտ, աննպատակ գործ, որ նոյն իսկ շահ չէ կարող խոստանալ ոչ ոքի, ոչ որ է ազգութեան, ոչ վարչութեան և ոչ նոյն իսկ մասնատր համայքների:

Հասարակական այս կուրութիւնն է ճնշող և խեղդող:

Մենք չենք վիատվում և հաւատում ենք լուսատր գաղափարների վերջնական յաղթանակին: Բայց պէտք է խոստովանենք, որ փորձութիւնները ահագին են:¹³⁸

Բագուի կոտորածը

Այսօր փետրվարի 13-ին, գերեզմանատանն էի...

Հարիրավոր անմեղ զոհերի վեկջին հանգստատեղում...

Այստեղ, այնտեղ թափթփված են անթիւ դիակոյտեր, մերկ, գնդակահար, բաց աչքերը դէպի անողորմ երկինքը յառած, անշունչ դիակները կարծես գանգատվում էին անսահման բարձրութեան վրա գտնվող այն էակին, որը տեսել է այդ բոլորը և լուռ, անտարբեր դիտել իր բարձրութիւնից...

Ահա այստեղ, դիակոյտերից մէկի վրա ընկած է մի յդի կին, բարբարոսները դաշունի մի քանի հարուածով պատռել են թշուառ կնոջ արգանդը և երեխան դուրս հանելով զցել դիակի մոտ: Ծանոթ պատկեր, որ մենք հարիւրաւոր անգամ կարդացել ենք պատմութեան արիւնոտ էջերում...

Ահա մի երիտասարդ, դեռ ևս անբեղ, անմորուք, երեսն ի վայր ընկած, թշուառի մարմինը ամբողջապէս ծածկված է գնդակներից առաջացած վերքերով:

Ահա այն կողմը ընկած է մի սևացած. ածուխ դարձած դիակ, որը

¹³⁸ 1905 թ., 22-23 փետրվարի:

հրդեհված տներից մեկի միջից են հանել:

Եվ շարունակ այս կողմը, այն կողմը փռված են անթիւ, անհամար դիակներ, մերկ հաշմանդամ: Գերեզմանատան ծառաները շտապ-շտապ, տենդային արագութեամբ հորեր են փորում և դիակները մեջը թափում...

Առանց արտասունքի, առանց սարսուռի չէ կարելի նայել դիակների այդ ահագին կոյտերին, այդ անմեղ զոհերին...¹³⁹

Նախազգուշական միջոցներ

Որքան էլ անսպասելի էին Բագուի սարսափելի դէպքերը, բայց և այնպէս նրանք տեղի ունեցան:

Մենք չենք հավատում, որ Բագուի դէպքերը կրկնվեն ուրիշ տեղերում: Բայց միթէ մենք գիտենք թէ ինչ որոգայթներ և խարդաւանքներ են լարվում իրականութեան մէջ:

Անսպասելին և անհատաւային դարձաւ տխուր իրականութեան փաստ:

Ուստի պէտք է նախազգուշական միջոցներ ձեռք առնել, որ սարսափելի դէպքերը չը կրկնվեն և ուրիշ տեղերում:

Մեր գավառական քաղաքներում թէ հայ և թէ մահմեդական հոգևորականութիւնը և ազդեցիկ անձինք պէտք է իսկոյն ձեռնարկեն մի շարք միջոցներ առաջն առնելու ամեն տեսակ սուր և պատասխանատու թիրիմացութեան:

Բագուի մեր հայ և մահմեդական հոգևորականութիւնը միացած ժողովրդական ներկայացուցիչների հետ հանգստացրին յուզված մտքերը: Նոյն ձևով պէտք է գործել և ամեն տեղ:

Չը պէտք է ուշանալ և չը պէտք է յետաձգել, որովհետև հրդեհը կարող է վարակել անելի արագ կերպով, քան մենք ենթադրում ենք:

Պատասխանատու է յօպէն և մենք չը պէտք է դանդաղենք գործելու¹⁴⁰:

Համերաշխութեան ձայնը

Ամենուրեք հնչում է համերաշխութեան կոչը, փոխադարձ յարգանքի և աջակցութեան անհրաժեշտութեան ձայնը:

Մամուլի ղեկավարող յովածները այդ են քարոզում: Հայ և թուրք հոգևորականութիւնը այդ է խօսում թէ տաճարներում և թէ թափորների ժամանակ, փողոցում:

¹³⁹ 1905 թ., 14 փետրվարի:

¹⁴⁰ 1905, N 20:

Մենք առաջ բերինք պարսից հիւպատոսի հրաւերը դեպի խաղաղ ու հաշտ միասնակեցութիւնը: Մենք հաղորդեցինք այն խոշոր քայլերը, որ արաւ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը: Մենք արծանագրում ենք այն քայլերը, որ անվանում են նոյն ոգով մեր երկրի միւս մասերում:

Որքան սփոփիչ և մխիթարական է համերաշխութեան այդ ընդհանուր կարօտի կոչը: Եւ մենք միայն մի ցաւ և վիշտ ենք զգում, որ ծանր փորձութիւնը և սարսափելի աղէտը դրդեցին մարդկանց ասել և քարոզել այն, ինչ որ պէտք է ասւեր և քարոզվէր առանց դառն և արիւնտ դասերի: Միայն թէ դա վերջին դասը լինէր աշխարհում¹⁴¹:

Խաղաղութիւնը նորից վտանգված

Եւրօպական և ռուսական մամուլը նորից հնչեցնում է մի նոր պատերազմի բալկանեան չորրորդ պատերազմի ահագանգը: Մի կողմից սպասվում է սերբ-ալբանական պատերազմ, միւս կողմից թիւրք-յունական պատերազմ: Դեռ չը խօսենք, որ սպասվում է ապստամբութիւն նաև Մակեդօնիայում:

Ոչ միայն Լօնդօնի դեսպանախորհրդի, այլև Բուխարեստի դաշնագրորի որոշումները չը յարգվեցին և ոտնակոխ եղան: Թիւրքիան արհամարեց այդ որոշումները և իր ընկճված, պարտված դրութիւնից ոտքի կանգնելով, իր պայմանները թելադրեց երէկվայ յաղթական Բօլզարիային, որ լքած եւրօպական պետութիւններից, ստիպվեց ամենածանր զոհողութիւններով հաշտութեան դաշնագիր կնքել Թիւրքիայի հետ: Բալկանեան դաշնակից պետութիւնները, տկարացնելով Բօլզարիային, դրանոց ոչ թէ տկարացրին, այլ ուղղակի քայքայեցին բալկանեան դաշնակցութիւնը: Իսկ մի անգամ, որ բալկանեան դաշնակցութիւնը քայքայվեց, մի անգամ որ ամեն մէկը առանձին մնաց, այն այլևս վտանգավոր չէ Թիւրքիայի համար, նա շատ հեշտութեամբ կարող է կոյ գնալ Թիւրքիային, իբրև համեղ պատառ¹⁴²:

Լուրեր Զայկական հարցի մասին

Մենք հաղորդել էինք «Մշակում», որ ինչպէս հեռագրում են Կ. Պոլսից, Բ. Դումը ինքն է կամենում ինքնագլուխ զբաղվել հայկական բարենորոգումների խնդրով, զանց առնելով եւրօպական, որոնց թվում բաւ ռուսական նախագծերը:

Այդ առթիվ «Մ. Բ.» թղթակիցը հետևեալ լրացուցիչ տեղեկութիւններն է տալիս.

¹⁴¹ 1905 թ., N 23:

¹⁴² 1913 թ., N 211:

«Dailly Telegraph»-ի թղթակիցը հեռագրում է, որ թիրքաց կառավարութիւնը սկսում է նորից լրջօրեն զբաղվել հայկական բարենորոգումներով: Ռուսական նախագիծը, որ նախատեսվում է միացնել բոլոր վեց հայկական վիլայէթները մի նահանգապետի իշխանութեան ներքոյ, հաւանութիւն գտաւ մեծ պետութիւնների կողմից և վաղուց ընդունված կը կինէր Բ. Դռնից, եթէ միայն Գերմանիան այնքան խիստ կերպով չընդիմանար դրան: Սկզբում Գերմանիան պնդում էր Յայաստանը երկու նահանգների բաժանելու վրա, որոնցից իորաքանչիւրի կառավարիչ լինելու էր Բ. Դռնից նշանակված անձը, բայց օրիէնտալիստ պրօդեսօր Լէպսիուսի զեկուցումից յետոյ Բերլինը շի կառավարութիւնը համաձայնեց, որպէսզի այդ երկու նահանգապետերին նշանակելը կախված լինի վեց մեծ պետութիւնների համաձայնութիւնից:

Գոյութիւն ունէր այն նախագիծը, որ առաջարկում էր Յայաստանի վարչական մասը յանձնել վեց անգլիացի տեսուչների, բայց դրան ընդիմացան Ռուսաստանը և Գերմանիան, որի պատճառով էլ Անգլիան հրաժարվեց իր նախագծից¹⁴³:

Սիմեօն Զաւարեան

Յեռագիրը գումեց, որ ռուսահայ ինտելիգենցիայի աչքի ընկնող անդամներից մէկը Սիմեօն Զաւարեանը, վաղաժամ կնքել է իր մահկանացուն, կաթուածից:

Յանգուցեալը, որքան և կուսակցական մարդ, բայց լինելով մէկը այն սակաւաթիւ անձերից, որոնք այդ կուսակցութեան մեջ պահպանել են գաղափարական մաքրութիւն սկզբից մինչև վերջը, եղել են իրանց հակառակորդների վերաբերմամբ շիտակ, կօրեկտ, ազնիւ, արժանի է յարգանքի ոչ միայն իր կուսակցութեան անդամների, այլև իր հակառակորդների կողմից:

Սկզբում, երբ մենք, իբրև գաղափարակիցներ և համախոհներ, գործում էինք նրա հետ միսին, ես շատ առիթներ, ունէի ճանաչել և զնահատել նրան: Իսկ երբ մեր ուղիները բաժանվեցին, մենք դարձանք հակառակորդներ, նա մէկն եղաւ այն սակաւաթիւ հակառակորդներից, որոնք կարողացան մնալ միշտ գաղափարական, իդէալական հողի վրա, որոնք կարողացան յարգել իրենց հակառակորդների համոզմունքները, կարծիքները:

Եւ Ս. Զաւարեանն մէկն եղաւ այն, կրկնում եմ, սակաւաթիւ այլախոհներից, որոնք կռելով հանդերձ ինձ դէմ, պահպանեցին միևնոյն ժամանակ իրենց անձնական, նախկին ընկերական և բարեկամական յարաբերութիւնները, որոնք անկեղծօրէն վշտանում էին, երբ կուսակցութեան միոս անդամները դուրս էին գալիս պատշաճութեան սահմաններից և գաղափարական

¹⁴³ 1913 թ., N 220:

կռի ցանկապատից:

Ես գործել եմ Ս. Հաւարեանի հետ միասին Թիֆլիսում, ժընէվում, Պատակում: Ես նախավերջին անգամ նրա հետ տեսնվեցի Գանձակում 3-րդ Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ, 1908 թ., իսկ վերջին անգամ 1911 թ., Կ. Պոլսում¹⁴⁴:

Ողջոյն համազգային մեծ տօնին

Այսօր, Փրկչական 1913 թականի հոկտեմբերի 12-ին, մեր երանելի թարգմանիչների յիշատակութեան օրը, ի սխիւռս աշխարհի ցրված հայ ազգը տօնում է իր պատմական և քաղաքակրթական օրը, ի սխիւռս աշխարհի ցրված հայ ազգը տօնում է իր պատմական և քաղաքակրթական կեանքի երկու նշանաւոր կոթողների՝ Գրերի գիտի և Տպագրութեան սկզբնաւորութեան միացեալ փառաւոր յօբելոանը:

1500 տարիներ են անցել այն օրից, երբ ասորական, յունական, պարսկական գրեր գործ ածող և իր եկեղեցիներում օտար և իրան անհասկանալի լեզուներով ժամասացութիւն լսող հայ ժողովուրդը հնարաւորութիւն ստացաւ, շնորհիւ ս. Մեսրոպի գիտի, ունենալ ազգայինիքնուրոյն և անկախ քաղաքակրթութեան, գրականութեան գործօնը՝ սեփական մայրենի այբուբենը: Եւ այդ սքանչելի գիտը, կատարված հայոց եկեղեցու մի վարդապետի ձեռքով, գործակցութեամբ նոյն եկեղեցու պետի ս. Սահակի, առաջ բերեց յետագայում նաև մի զարգացեալ, մշակեալ, կլասիկ լեզու և մի չքնաղ կլասիկ գրականութիւն, որի ծաղկեալ դարաշրջանը կոչվեց ոսկեայ դար:

Եւ հայ ժողովրդի ստեղծագործական միտքը ստեղծեց, շնորհիւ ս. Մեսրոպի գիտի, ոչ միայն եկեղեցական ճոխ մատենագրութիւն, այլև աշխարհիկ, փիլիսօփայական, գիտական, բանաստեղծական, հռետորական գրականութիւն, այլ և վերածեց հայ բարբառի հռօմէական և յունական կլասիկ գրականութեան գանձերը:

400 տարիներ են անցել այն օրից, երբ մի անյայտ տպագրիչ, որին մարմնացնում ոնք «Մեղապարտ Յակոբի» մէջ, հիմնվեց առաջին տպարանը¹⁴⁵:

¹⁴⁴ 1913 թ., N 228:

¹⁴⁵ 1913 թ., N 230:

Անհաջող ընտրութիւն

Կ.Յ.Բ. խորհուրդը որոշել է, վարձել Արսէն Ղլտձեանին (ci devent վարդապետ) իբրև հսկիչ Ընկերության նպաստով պահվող դպրոցների վրա:

Նախ հարց է՝ անհրաժեշտ է արդեօք ունենալ մի յատուկ հսկիչ, և զուր տեղ ծախսել կօպեկներով հավաքված գումարները, քանի որ Ընկերութիւնը նպաստում է միայն հայոց եկեղեցական-ծխական դպրոցներին և, հետևաբար, Բ. ընկ. շատ լավ կարող է հսկողութիւնը յանձնել թեմական տեսուչներին: Երկրորդ, եթէ խորհուրդը, որոշ փաստերի հիման վրա, եկել էր եզրակացութեան, թէ հարկավոր է ունենալ յատուկ հսկիչ, պետք էր այդ հսկիչի ընտրութիւնը կատարել ոչ թէ տնային կերպով, այլ հրապարակօրէն, այն է՝ կանդիդատներ հրաւիրելու սիստեմով: Երրորդ, դպրոցական գործի ղեկը պէտք է յանձնել մի անձնատրութեան, որ հեռու լինի նեղ կուսակցական ոգուց, ունենայ բարի համբաւ, անարատ անցեալ և գործունէութիւն: Արդ, կարող է խորհուրդը ասել ձեռքը դրած սրտի վրա, թէ Արսէն Ղլտձեանը համապատասխանում է այդ պայմաններին: Մենք հակամէտ ենք կարծելու, թէ խորհուրդը ծանօթ չէ եղել այն փաստերին, որոնք վարկաբեկիչ են այդ պարոնի համար, այլապէս եթէ նա ծանոթ է և այնուամենայնիւ նրան է ընտրել, ուրեմն այդտեղ դեր են խաղացել անձնական կապերը: Խորհուրդը կարող էր դիմել Թիֆլիսի կօնսիստօրիայի և Թիֆլիսի նահանգի դատարանի գործերին, իմանալու համար այդ վարկաբեկիչ փաստերը: Անցեալ տարի Ա. Ղլձեանը նշանակվել էր Ալէքսանդրօպօլի հայոց դպրոցներից մէկի աւագ ուսուցիչ, բայց միայն մի քանի ամիս տևեց նրա պաշտօնավարութիւնը¹⁴⁶:

Կոնստանտին Խատիսեան

Մի եռանդուն աշխատատու ևս ընկաւ և չքացաւ հայոց աշխարհից, ար այնքան աղքատ, վտիտ է բեղմնատուր, անձնուէր, պատրաստված և ձեռնահաս գործիչներով:

Իր կրթութեամբ, իր անսպասելի եռանդով, իր մեծ պատրաստակամութեամբ գործելու հայ ժողովրդի և նրա բարոյական, տնտեսական, մտաւոր-հոգևոր բարգաւաճման համար, Կ. Խատիսեանը ձեռնհաս և կարող ոյժ էր:

Ճիշդ է, այդ ոյժի բնաւորութիւնը, եռանդի թափը հավասարակշռված չէր, ճիշդ է, նա խիզախ և յանդուգն էր, բայց այդ անհաւասարակշռութիւնը, խիզախութիւնը, և յանդգնութիւնը ցույց էին տալիս նրա հոգու ընդարձակութիւնը, նրա անհամբերութիւնը՝ մի րոպէ առաջ երջանկացած, բաղդաւոր տեսնել սիրած ժողովուրդը:

¹⁴⁶ 1913 թ., N 233:

Բագուն, ուր գործում էր հանգուցեալը, հարուստ է ինտելեգենտ, կրթեալ, գիտութեամբ և տեխնիկական հմտութեամբ օժտված ոյժերով, բայց այդ ոյժերի մի ամենամանջան տոկոսն է նուիրվում հասարակական և ազգային գործունէութեան: Եւ ահա այդ դուզնագիտ ոյժերի մէջ առաջնակարգ դեր էր խաղում Կ. Խատիսեանը:

Նրա վաղաժամ մահը մեծ բաց է թողնելու Բագուի հասարակական և ազգային կեանքի մէջ, նրա կորուստը զգալի է լինելու մանաւանդ Կուլտուրական Միութեան համար, որի հոգին էր: Եթէ Կ. Խատիսեանը ունենար իր նման 5-10 եռանդուն աջակիցներ, Կուլտուրական Միութիւնը հրաշքներ կը գործէր, և նրա լայն, բազմակողմանի ծրագրերը հայկական կեանքի մէջ կը մարմնանար:

Եւ մենք կարծում ենք, որ ամենալաւ միջոցը յաւերժացնելու հանդուցեալի յիշատակը՝ կը լինէր, որ Բագուի ինտելիգենտ ոյժերով աշխատէին առաջ տանել Կ. Խատիսեանի ստեղծած կուլտուրական մեծ գործը: Դա կը լինի ամենամեծ յարգանքը յիշատակին այն գործչի, որին վաղը մենք ձանապարհ ենք դնելու դէպի յաւիտենականութիւն:

Գնա, խիզախ և ազնիւ հոգի, գնա հանգչելու մայր հողի ծոցում: Քո անունը չի մոռացվի հայկական կուլտուրայի պատմութեան մէջ¹⁴⁷:

Յայոց հարցը եւ Անգլիան

Նորերս անգլիական մինիստր-նախագահ Ասկվիտը, ինչպէս հաղորդեցին հեռագրերը, Գիլդիօլում քաղաքական մի մեծ ծառ արտասանեց, որի մէջ, ի թիւս այլ միջազգային հարցերի, շոշափեց և հայկական հարցը: Թէև դեռ հրատարակված չը կայ ծառը ամբողջովին և հեռագիրներն ևս շատ համառօտ կերպով տուին նրա բովանդակութիւնը, բայց «H. B.» թերթը իր մի առաջնորդողը յօդվածում, «Յայկական ռէֆօրմները և Անգլիան» վերնագրով,- որի թարգմանութիւնը կը տանք «Մշակի» մէջ, տալիս է մեզ Ասկվիտի՝ հայկական հարցի մասին խօսածի էութիւնը:

Ինչպէս գիտենք, վերջերս զանազան հակասական տեղեկութիւններ տպվեցին հայկական հարցի այժեան վիճակի մասին:

Գիտէինք, որ Ռուսաստանը մշակել է ռէֆօրմների մի ծրագիր, յայտնի է «Մանդէլշտանի ծրագիր» անունով, բայց Գերմանիան հակառակ է այդ ծրագրին: Ապա հաղորդվեց, Որ Գերմանիայի և Ռուսաստանի միջև համաձայնութիւն է կայացել և ընդունվել է ռուսական ծրագիրը, բայց ենթադրված մի ընդհանուր նահանգի կամ կուսակալութեան փոխարէն պէտք է լինեն եր-

¹⁴⁷ 1913 թ., N 239:

կու հայկական նահանգներ և ամեն մի նահանգը պէտք է ունենայ մի առանձին կուսակալը: Գերմանիայի և Ռուսաստանի համաձայնությունը գրաւական էր, որ երեքպետեան դաշնակցութիւնը (Գերմանիա, Աստրիա և Իտալիա) և երեքպետեան համաձայնութիւնը (Ռուսաստան, Անգլիա և Ֆրանսիա) համերախօրէն կը գործեն հայկական հարցի մէջ¹⁴⁸:

Ազգային համերաշխութեան գաղափարը

Հայ ժողովրդի պատմական կեաքի հիստուածքի վրա կարմիր թելի նման անցնում է այն երևոյթը, ու ներքին երկպառակտութիւնները, գժտութիւնները միշտ խոչընդոտ են հանդիսացել ընդհանուր ազգային շինարարական և վերանորոգչական գործունէութեան ու զարգացման: Եւ հայ ազգի քաղաքական անկախութեան անհետացումը որքան և պարտական ենք արտաքին զօրեղ պատճառների ու գործոնների, բայց աննշան դեր չեն խաղացել և այդ ներքին երկպառակտութիւնները ու գժտութիւնները, որոնք ջլատել են հայ գործիչների ոյժերը ու թիյլչեն տուել ունենալ ազգային մի ընդհանուր քաղաքականութիւն և ուղղութիւն:

Այսպէս էր ամբողջ ժամանակ, երբ հայերը անջատված չէրն իրարից կրօնական խտրականութիւններով, երբ նրանք պատկանում էին մի եկեղեցու՝ լուսաւորչական եկեղեցուն: Յետագայում քաղաքական երկպառակտութիւնների, գժտումների վրա աւելացաւ նաև կրօնականը, երբ հայերի մի մասը յարեց կաթօլիկ և բողոքական եկեղեցիներին:

Եւ ահագին ջանքեր էին պէտք, ահագին քաղաքական գործունէութիւն էր պէտք լուսաւոր, առաջադէմ և ազատամիտ հայերի կողմից, ինչպէս Ս. Նազարեան, Գ. Արծրունի և այլք, տարածելու հայերի մէջ այն միտքը, թե դաւանական խորութիւնը բնաւ չը պէտք է արգելք լինի ազգային համերաշխութեան գաղափարին, թէ լուսաւորչական, կաթօլիկ, բողոքական, նույնիսկ մահմեդական հայը ամենքն էլ եղբայրներ են, միևնոյն ազգութեան անդամները¹⁴⁹:

Ժողովրդական առողջապահութիւնը

Քաղաքային ներկայացուցիչների նեկայ համագումարի մէջ կարողացված մի քանի զեկուցումներ ամենամռայլ գոյներով են նկարագրում Անդրկովկասի քաղաքների առողջապահական և ժողովրդական առողջութեա

¹⁴⁸ 1913թ., N 247:

¹⁴⁹ 1913 թ., N 254:

դրութիւնը: Նույնիսկ նահանգային քաղաքներ՝ Գանձակ, Քութայիս, գտնվում են այնպիսի սոսկալի հակաառողջապահական պայմանների մէջ, որ յիշեցնում են մեզ պարսկական և թիրքական տիրապետութեան ժամանակները: Այդ քաղաքներում չը կայ առողջարար խմելու ջուր, բնակիչները գործ են ածում գետերի ջուրը, որ սաստիկ ապականացված է, որովհետև քաղաքի բոլոր արտաքնոցները և կոյուղիները թափվում են այդ գետերի մէջ:

Սոսկալի հակասանիտարական պայմանների մէջ են գտնվում և այն շինութիւնները, քարվանսարանները և հանրակացարանները, ուր ապրում է հասարակ ժողովուրդը և մանաւանդ Պարսկաստանից եկած բանուր դասակազմը: Այդ կացարանները, քարվանսարանները, իբրև բոյներ զանազան միկրօբների, վարակիչ հիւանդութիւնների օջախներ են հանդիսանում:

Բացի դրանից, գեկուցումներից երևաց, որ մի քանի քաղաքների, ինչպէս և գիւղերի մէջ, գլխատրապէս թուրքաբնակ, Պարսկաստանի հարևանութեան մէջ, արմատացել է մի չարիք, որ ժողովրդական աղէտի կերպարանք է ստանում. դա- ափիօնի ծխելը կամ գործածութիւնն է¹⁵⁰:

Մեր ծխական դպրոցները

Մեր ծխական դպրոցները չեն կանգնած այն բարձրութեան վրա, որ անհրաժեշտ է ժողովրդական դպրոցների բարգաւաճման համար:

Այդ բաւական չէ. մեր ծխական դպրոցները հետօգետ է փակվում են և նրանց տեղը բացվում են մինիստրական դպրոցներ:

Մենք միշտ կողմնակից ենք եղել այն հայեացքին, ժողովրդական տարրական դպրոցները, որոնց թին են վերաբերում և մեր եկեղեցական-ծխականները, պէտք է լինեն մայրենի լեզվով և միայն այդ պարագայում աջող կը լինի նաև պետական լեզուի ուսուցումը:

Մեր երկիրը, Անդրկովկասը, այնքան կարօտ է տարրական կրթութեան, այնքան առքատ է դպրոցներով, որ մեզ միանգամայն զարմանալի և տարօրինակ է թում, որ մինիստրական տարրական դպրոցները չեն բացվում այն վայրերում, ուր կան հայոց եկեղեցական-ծխական դպրոցներ: Ուսման և կրթութեան մէջ մրցութիւնը նախանձելի է, բայց այդ մրցութիւնը չը պետք է արտահայտվի նրանով, որ եղած դպրոցները փակվեն և նորերը բացվեն փակվածների տեղը¹⁵¹:

¹⁵⁰ 1913 թ., N 259:

¹⁵¹ 1913 թ., N 260:

Թուրքաց Հայաստանը

Կարևոր և պատմական ակտ է ժամանակաւոր կառավարութեան հրատարակած որոշումը ապրիլի 26-ին, N 63, Թիւրքաց Հայաստանի կառավարութեան մասին: Ակտը կայացել է արտաքին գործերի մինիստր Միլիւկովի օրով, հետևաբար նրա գործակցութեամբ:

Պէտք է ասել, որ առաջին անգամն է պատերազմից յետոյ, երբ ռուսական կառավարութիւնը պաշտօնապէս «Թիւրքաց Հայաստանի» անունով է կնքում զէնքով նուաճված վայրերը

Այժմ ժամ. Կառավարութիւնը, հիմնվելով Հաագայի միջազգային կօնֆերենցիայի կայացրած որոշման վրա, 1907թ. հոկտեմբերի 18-ին, որով սահմանվել են որոշ օրէնքներ թէ ինչպէս պէտք է կառավարել պատերազմի ժամանակ նուաճված մի երկիր, հրատարակել է ապրիլի 26-ին վերոհիշեալ կարգադրութիւնը: Այդ կարգադրութեան հիման վրա, նոր նուաճված Թիւրքաց Հայաստանի քաղաքացիան կառավարութիւնը, մինչև հաշտութեան դաշնագիրը, յանձնվում է մի գեներալ կոմիսարի, որն անմիջապէս պէտք է ենթարկվի Պետրոգրադին¹⁵²:

Մի խօսակցութիւն Խարլամովի հետ

Անդրկովկասի Յատուկ Յանձնաժողովի նախագահ Վ. Ե. Խարլամովը, ինչպէս գիտենք վերջերս այցելեց Թիւրքաց Հայաստան՝ ուսումնասիրելու և դիտելու թիւրքական ձակատում գործող զօրքի դրութիւնը: Սարըկամշից նա գնաց Էրզրում, Մամախաթուն, ապա Երզնկա և այնտեղից վերադարձաւ Տրապիզօն ու Բայթուն:

Շաբաթ, յունիսի 25-ին, մի խորհրդակցութիւնից յետոյ, որ կայացաւ պալատում, Մ. Պապաջանեանի հրաւերով մի քանի անձինք գնացին պալատի այգին ընթրելու: Եկաւ և Խարլամովը իր ամուսնու հետ: Մենք անմիջապէս հետաքրքրվեցինք նրա ուղևորութեամբ, և նա շատ սիրալիկ կերպով պատմեց մեզ՝ ինչ որ տեսել էր և դիտել: Ես թոյլտուրիին խնդրեցի հրատարակութեան տալ նրա զեկուցման այն մասը, որը չը պէտք է գաղտնիք մնայ: Նա իր հաւանութիւնը տուվեց:

Վ. Ե. Խարլամովը յայտնեց հետեալը.

- Էրզրումը սաստիկ աւիրվել է. հազիւ նրա մի երրորդ մասը մնացել է¹⁵³:

¹⁵² 1917 թ., N 122:

¹⁵³ 1910թ., N 131:

Ինչ ապագայ է սպասում մեզ

Այժմ թէև ոչ պաշտօնապէս, բայց բաւական մանրամասն յայտնի են այն պայմանները, որ Գերմանիան, Աւստրիան և Թիրքիան գնում են Ռուսաստանին սեպարատ հաշտութիւն կնքելու համար: Նոյն իսկ տեղեկութիւն կայ, որ Թիրքիան առաջարկել է Անդրկովկասեան Կօմիսարիատին անջատ հաշտութիւն կնքել:

Սակայն առաջարկված պայմանները այնքան ծանր են և ամոթալի Ռուսաստանի համար, որ նոյնիսկ Լէնին-Տրօցկին զայրացել են և յայտնել են, թէ «այն պահանջները, որ դնում է Գերմանիան, անհնարին են կացուցանում կնքել հաշտութիւն»:

Լէնին-Տրօցկին-Կրիլէնկօ կոչ արին գերմանական սօցիալիստներին, բանորներին և պրօլետարիատին հաշտութիւն կնքելու, բայց դրանց փոխարէն նրանց առաջ ծառայան Վիլիելմ կայսրը, Յինդերբուրգը և Գերմանիայի ինկերները:

Այժմ Լէնին և ընկերները ստիպված են յայտնելու, թէ «որովհետև Եւրոպայի լեղափոխական մասսաները մեզ օգնութեան չենկան, պատերազմի շարունակութիւնը անխուսափելի է»¹⁵⁴:

Պետք է աշաւուրջ լինել

Բօլշեւիզմի կուսակիցները աշխատում են, որ կազմվող հայկական զօրագնդերի մէջ ևս տարածվի դասայլութեան թոյնը: Չենք կարծում, որ այդ աջողվի նրանց: Որովհետև մենք համոզված ենք, որ հայ զինուոր կըմբռնէ, որ այսօր հայութիւնը ամբողջովին վտանգված է, եթէ նա չը կատարէ իր պարտականութիւնը, իբրև պաշտպան հայրենիքի:

Նորերս մի լրագրի մէջ գրված էր, թէ անգլիացի կանայք ասել են. «Մեր ամեն մի ընտանիքից 2-3-4 անդամներ (մեր ամուսինները, եղբայրները և հայրերը) պատերազմի դաշտի վրա հերոսաբար մեռել են. թող մեր 5-րդ և վերջին տղամարդն ևս գնայ, թող մենք՝ կանայք և աղջկերք միայն մնանք, միայն անգլիական ազգը հասնի իր նպատակին և որոշ հետևանքի»:

Ահա հայրենասիրութեան մեծ օրինակ: Նոյն հայրենասիրութեամբ պէտք է տոգորվեն հայ կանայք, հայ մայրերը և քույրերը: Մենք հայերս արդէն այնքան առաջ ենք գնացել սոսկալի զոհողութիւնների մէջ, որ յետ ընկրկել չենք կարող. այլապէս կը կորցնենք ամեն բան և մեր ազգն ամբողջովին

¹⁵⁴ «Մշակ», 1918թ., N 2:

կը կորչէ ու կանհետանայ:

Ոչ թե ստիպողական զօրակոչը կամ զինուորահավաքը պէտք է հայ երիտասարդներին գնալ և պաշտպանել Հայաստանը, այլ հայրենասիրութիւնը և գիտակցութիւնը¹⁵⁵:

Դէպի կործանումն

Ոչ մի տարակույս չը կայ, որ դէպի կործանումն են գնում: Ոչ մի տարակույս չը կայ. որ ռուսական յեղափոխութեան կատարած մեծ նաճումները ոչ միայն անհետանալու վտանգին են ենթարկված, այն և այն յարաբերական ազատութիւնը, որ վայելում էինք ցարական ռէժիմի օրով, նրան ևս այսուհետև երանի պէտք է տանք:

Չը կայ ազատութիւն այնտեղ, ուր չը կայ կեանքի, գոյքի, պատուի, անձի անձեռնմխելիութեան ազատութիւն: Չը կայ ազատութիւն, հաւասարութիւն, արդարադատութիւն այն երկրում, ուր տիրում է ամազակութիւն, ավարառութիւնը, ուր ական-թալանը կեանքի սկզբունք է դարձել:

Ռուսական պետութեան կենտրոնում իշխողները ցրում են ժողովրդի ներկայացուցիչների ժողովը, առանց որևէ դատի, դատաստանի, սպանում են բանտերում իրանց հակառակորդ կուսակցութեան պարագլուխներին, մարդկանց, որոնք իրանց գիտութեամբ, հայրենասիրութեամբ, քաղաքական, ազգային, հասարակական գործունէութեամբ հազար Լէնիններ, Տրօցկիներ և նման «սոցիալիստներ» արժեն: Գաւառներում և ծայրերկիրներում ազգ ազգի վրա է բարձրացել, ուժեղը, բռնակալը երկրի և դրութեան տէր է դարձել, ճնշում հարստահարում է թուլերին, խեղճերին¹⁵⁶:

Կամ գործեցէք եւ կամ հեռացէք

Մինչ Ծամխօրի սոսկալի դէպքերից յետոյ, երբ թուրքը ամազակային հրոսակախմբերը յանիրաւի սպանեցին հազարաւոր ռուս զինուորներ, որոնք վերադառնում էին իրանց տեղերը, փռեցին ամբողջ գիծը նրանց դիակներով, թալանեցին նրանց գոյքը, յափշտակեցին պետական թնդանօթներ և գնդակացիորներ, մենք սպասում և ակնկալում էինք, որ կը կատարվի խիստ և անաչառ քննութիւն, երևան կը հանվեն իսկական մեղաւորները և արժանաւոր պատժի կենթարկվեն ոճրագործները, որպէսզի այդպիսի դէպքեր չը կրկնվեն: Բայց այդ ամենի փոխարեն մենք տեսնում ենք, որ թուրք ամազա-

¹⁵⁵ 1918թ., N 6:

¹⁵⁶ 1918թ., N 10:

կախմբերը յունվարի 29-ին վերսկսել են իրանց ոճրագործ վարմունքը:

Բնական է, որ եթե արտակարգ և խիստ միջոցներ ձեռք առնված լինէին, եթե միչև այժմ քննված և ճշդված լինէին՝ թէ ովքեր են կանգնած գլուխ այդ ոճրագործ շարժման, այսօր թուրք աազակախմբերը չէին վերսկսի իրանց աազակային գործողութիւնները, որոնք բացի ընդհանուր քայքայումից, բացի մեր ազգաբնակչութիւնը ահաբեկելուց, շատ պարարտ հող են պատրաստում և այն դէպքի համար, երբ արտաքին թշնամին, հաշտութիւնը չը կայանալու դէպում, հնարավորութիւն կունենայ ներս խուժել:

Ուստի և մեր երկրի ժողովուրդը, մանաւանդ Գանձակ նահանգի յուզված, ալեկոծված, հարց է տալիս, ե՞րբ պետք է վերջ տրվեն այն ամենին:

Կօմիսարիատը անգոր է երկիրը կառավարել, փոքր ի շատէ կարգ ու կանօն, անդորրութիւն սահմանել, թող ուրեմն նրանք հեռանան և թողնեն ասպարեզը աւելի կարող և հեղինակաւոր մարմինների կամ կազմակերպութիւնների:

Թոյլ տալ, որ երկիրը մնայ նեկայ սոսկալի դրութեան մէջ, թոյլ տալ, որ թուրք կազմակերպված աազակախմբերը ահաբեկեն խաղաղ ազգամակութեանը, կողոպտեն, թալանեն գնացքները, սպանեն ռուս զինուորներին, դա նշանակում է անգիտակից մեղսակից լինել նրանց ոճրագործութիւններին, դա նշանակում է յաւիտենական նախատինք բերել մեր երկրի պատմութեան վրա:

Կամ գործեցէք, կատարեցէք ձեր պարտաւանութիւնը, կամ հեռացէք ասպարէզից և թողէք որ աւելի հեղինակաւոր, կարող և ժողովրդասէր ոյժեր անցնեն իշխանութեան գլուխ¹⁵⁷:

Ազգային զօրահաւաքը

Անդրկովկասի Կօմիսարիատը հրատարակել է զօրահաւաք բոլոր այն երիտասարդների համար, որոնք ծնվել են 1899թ. և որոնք այս տարվայ յունվարի 1-ին դարձել են 25 տարեկան:

Այս կարգադրութիւնը պարտադիր է Անդրկովկասի բոլոր քաղաքացիների, հետևաբար և հայերի համար:

Իսկ Յայոց Ազգային Խորհուրդը, բացի դրանից հրահանգ է հրատարակել, որով գէնքի է կանչում և այն հայերին, որոնք այս յունվարի 1-ին 32 տարեկան են դարձած:

Այդ լրացուցիչ ազգային զօրակոչը բացատրվում է և անհրաժեշտ է

¹⁵⁷ 1918թ., N 23:

հանդիսանում նրանով, որ Կովկասեան ամբողջ ճակատի մերկացումով հայ ժողովրդի ֆիզիքական և քաղաքական գոյութիւնը մեծ վտանգի է ենթարկված, հետևաբար հայութիւնը Ռուսաստանում պարտաւոր է լարել իր բոլոր ոյժերը՝ վերահաս վտանգի առաջն առնելու համար:

Ոչ որևէ նուաժողական դիտումներով, ոչ որևէ ագրեսիվ նպատակներով զինվաւում է հայ ազգը Ռուսաստանում, այլ բացառապէս ինքնապաշտպանութեան նպատակով¹⁵⁸:

Ո՞րն է ելքը

Պետք է կնքվի պատուաւոր հաշտութիւնը, որպէսզի զսպվի թիրքական ազահ ախորժակը, պէտք է որ Անդրկովկասի երեք գլխաւոր ազգութիւնները գործեն համերաշխ իրար հետ և մի ընդհանուր գործելակերպ մշակեն: Ոչ հայ, ոչ վրացի, ոչ մուսուլման ժողովուրդների, դեմօկրատիանների և նոյն իսկ բուրժուազիաների օգուտն է, որ Անդրկովկասում հաստատվեն օսմանեան կարգերը, որոնք, անկասկած, կը վերականգնեն ֆէօդալական դրութիւնը, որոնք կը սպանեն արդիւնաբերիութիւնը, ուսումը, գիտութիւնը, առևտուրը, և որոնք կը ճնշեն միանգամայն աշխատաւոր մասսաների գոյութիւնը: Եթե մուսուլման գիւղացիութիւնը մեր երկրում այնքան առաջ է գնացել, որ սկսել է ագրարային շարժումն, չէ՞, որ նա պէտք է հասկանա, որ օսմանեան լուծը տեղնուտեղը կը մեռցնէ այդ շարժումը:

Եթե մեր երկրի երեք գլխաւոր ազգութիւնները – հայ, վրացի, թաթար – միանան և համերաշխ գործեն, թիրքական կամ օսմանեան վտանգը կարող է չքանալ:

Սա է միակ ելքը և փրկութիւնը, և ոչ Անդրկովկասի անկախութեան հրատարակումը¹⁵⁹:

Յայութիւնը լուռ է

Դարբնվում, տնօրինվում է ամբողջ հայ ազգի բաղըր, ապագան: Փոխվում է ամբողջ հայ ազգի պատմութեան ընթացքը, դրված է հրապարակի վրա նրա լինել և չը լինելու, ապրելու և մեռնելու հարցը և, սակայն, ինքը, այդ հայ ազգը, իր ամբողջութեամբ լուռ է:

Նա լուռ է, նա իր ձայնը չէ բարձրացնում, որովհետև նա չունի այսօր հրապարակի վրա օրնաւոր, լեզալ ներկայացուցիչ: Եւ նա ևս, որ կարող էր

¹⁵⁸ 1918թ., N 30:

¹⁵⁹ 1918թ., N 49:

ներկայ պատմական ծանր րօպէներին հանդէս գալ իբրև ազգի ամբողջութեան ներկայացուցիչ, նա ևս մեկուսացված է, կամ ինքն իրան մեկուսացրել է և պահպանում է լռութիւն:

Կ. Պօլսում գումարվում է միջպետական կօնֆերենցիա, որ պէտք է որոշէ Կովկասի ժողովուրդների բաղդը: Ոչ մի կասկած չը կայ, սակայն, որ Կ. Պօլսի Կօնֆերենցիայի որոշումներն ազդելու են ոչ միայն փոքրիկ Արարատեան երկրի վիճակի վրա, այլ ամբողջ հայութեան վիճակի վրա:

Բայց ունի ամբողջ հայութիւնը ներկայացուցիչ այսօր:

Ոչ, նա չունի, որովհետև Թիֆլիսի Յայոց Ազգային Խորհուրդը, որ այժմ նկատվում է իբրև հայութեան ներկայացուցիչ, ըստ իր կազմի, հայութեան ներկայացուցիչ չի¹⁶⁰:

3. Առաքելեանը մահացած

Չը կայ 3. Առաքելեանը:

Գրական-հրապարակախոսական և քաղաքական-հասարակական բոլոր ասպարէզներից նրան ցած իջեցրին մի ակնթարթում:

Բայց իջեցրին արդէն անշնչացած, պայքարելու անընդունակ:

Իջեցրին ոչ գաղափարախոսական պայքարում, ոչ ազնիւ, կուլտուրական գէնքով, որով նա ինքն էր շարունակ կռիւ մղում, այլ նենգորէն, բիրտ ոյժի օգնութեամբ:

Պրոֆեսսիոնալ ոճրագործին վայել ամենասառը բռնութեամբ:

Մաուզէրի երեք հարուածներով ...

Անհանդուրժելի և անսպասելի՝ մի գործչի համար, որը պատանեական հասակից 48 տարի շարունակ, ամենայն անձնութիւրութեամբ սպասաւորում էր իր ժողովրդին:

Յամարձակ կարող ենք ասել, որ վերջին տասնամեակների ընթացքում կովկասահայ իրականութիւնը չէ տեսել ատելի եռանդուն, ատելի սրտացաւ ու անկեղծ, բայց և աննկուն կամքով ու տոկուն բնավորութեամբ մի գործիչ, քան հանգուցեալն էր:

Եզակի մի դէմք էր նա, որ համարեա, ամենուրեք մեր հասարակական բոլոր ասպարէզներում – թէ դպրոցական, թէ կուլտուրական և թէ ժողովրդական խնամատարութեան – հանդես էր բերում իր փորձառութիւնն ու հոգատարութիւնը:

Իբրև գրչի անվեհեր զինոր նա հաւատարիմ մնաց խօսքի ազատութեան և ընկալ գրիչը ձեռքում:

¹⁶⁰ 1918., N 130:

Իբրև հասարակական գործիչ չը թողեց իր գիրքերը և մինչև իր կեանքի վերջին րոպէն պաշտպանեց հայ ժողովրդի շահերն ու իրաւունքների անբռնաբարելիութիւնը:

Եվ չը նայելով բարեկամական նախագգուշացումներին մի կողմից, և յիուս կողմից՝ զանազան մութ անձերից ստացվող բոլոր սպառնալիքներին, նա մնաց անդրդելի, չուզեց ընկձվել, չուզեց ուրանալ ժշմարտութիւնը և լռել հայ աշխարհի այսօրվա «հգորների» առաջ:

Այդպիսի խայտառակ անկումից նա գերադասում էր մահը:

- Եթե այդպէս է, մեռիր, - ասացին նրան ոճրագործները:

Նրանք, այդ ոճրագործները, օրը ցերեկով կողոպտելու չէին մտել օտարի տունը, ոչ էլ անձնական վրեառութեան համար:

Ուրեմն ինչո՞ էին եկել այդտեղ:

Եվ ո՞վ էր մղում նրանց դէպի այդ ոճիրը: Ասացէք:

Մենք ուղղում ենք այդ հարցը բոլոր ազնիւ մարդկանց և բոլոր շիտակ գործիչներին:

Միթե լոկ սպանութեան ծարաւը:

Մենք ինքներս այդ հարցին չենք ուզում պատասխանել:

Զենք ուզում կօնկրետ մեղադրանքներ ուղղել սրա կամ նրա դէմ:

Վաղաժամ ենք համարում այսօր, երբ դեռ ևս լույս չէ սփռված այդ մութ գործի վրա, վեր կենալ ու ասել՝ թե ովքեր, ում թելադրութեամբ և ինչ դրդումներով են գործել այդ քստմնելի ոճիրը:

Այդ մենք կանենք ապագայում, երբ ունենանք մեր ձեռքի տակ բոլոր փաստերը:

Սակայն կարող ենք այժմից իսկ ասել առանց վերապահութեան, որ Զ. Առաքելեանի սպանութիւնը կատարված է միմիայն քաղաքական հողի վրա:

Մենք գիտենք, որ հայ իրականութեան մէջ առաջին դէպքը չէ սա: Գաղափարական պայքարի միջոցին խոսքի և գրչի զինուորների դէմ շատ անգամ են գործի հանվել մութ ոյժերը:

Մութ ոյժերը իրանց մաուզերներով:

Բայց բարբարոսական շրջանից մեզ ասանդ մնացած սարսափի և ահաբեկման այդ տխուր ժառանգութիւնը կատարեալ անախրօնիզմի պիտի լինի մեր օրերում:

Ու երբ մեր բարքերի այդ աղաղակող յետամնացութիւնը այսօր էլ մերկանում է մեր առջև իր ամբողջ հրէշաւորութեամբ, և ծանր հետևանքներով, մենք այլ ևս չենք կարող համբերել, չենք կարող չաղաղակել:

- Վերջապէս մինչև ե՞րբ:

Հայ ժողովուրդ

Ներկայ Հայոց Ազգային Խորհուրդը որոշել է, մեծամասնությամբ, որ Հայաստանի կառավարության կաբինետի ղեկը յանձնվի Դաշնակցության լիդեր Յ. Քաջազունուն, ուրեմն մեր ազգային քաղաքականության ղեկը նորից վարել Դաշնակցութիւնը, որի մինչև այժմ վարած քաղաքականութիւնը կործանեց, սպանեց Հայաստանը և հայ ժողովուրդը:

Հայ ժողովրդական Կուսակցութիւնը, ի դեմս իր ներկայացուցիչների, դէմ է եղել այդ որոշման և որոշել է չը մասնակցել կազմվող կաբինետին, գլխավորութամբ դաշնակցական Յ. Քաջազունուն:

Հայ ժողովրդական Կուսակցութիւնը այն համոզումն ունի, որ ներկայ պայմաններում և հանգամանքներում հայ ազգի և ապագա Հայաստանի բաղդը և բարօրութիւնը պահանջում են, որ կառավարության ղեկը չը լինի յեղափոխականների և սօցիալիստների ձեռքում, այլ ղեկը յանձնվի ատլի չափաւոր, ոչ-յեղափոխական և ոչ-սօցիալիստների ձեռքում, որպէս զի թէ Թուրքիան, թէ մեր հարևան թուրքերը, որոնց հետ հարկադրված ենք այսուհետև ապրել, բարի-դրացիական յարաբերութիւններ ստեղծել, լիակատար վստահութիւն ունենան, թէ հայերը հրաժարվում են շարունակելու այն ագրեսիվ քաղաքականութիւնը, որի վարիչները բացառապէս եղել են դաշնակցականները այդ ագրեսիվ քաղաքականութիւնը համարվել է հայ ժողովրդի քաղաքականութիւն, որովհետև այդ ժողովուրդը իր ձայների մեծամասնութիւնը տուել է Դաշնակցության: Սինչև Թուրքիան, Գերմանիան, մեր հարևան թուրքերը չունենան այդ հաւատը և վստահութիւնը, նրանք անկեղծ վերաբերմունք չեն ունենա դէպի մեզ:

Բացի դրանից՝ կայ և մի այլ կարտր հանգամանք: Ապագայ Հայաստանը կարող է ապաքինել իր ստացած սոսկալի հարուածներից, վէրքերից, զարգանալ բարգավաճել, եթե նրա մէջ զարգանայ առևտրա-արդիւնաբերական, գործարանական կեանք, ինդրուստրիա, գիւղատնտեսութիւն, ճարտարութեստ: Իսկ դրա համար և անհրաժեշտ է, որ կապիտալը գնայ Հայկաստան. բայց յայտնի է, որ կապիտալը կը գնայ միայն այն դէպքում, երբ նա սահմանափակումներ և նեղումներ չը կրէ, իսկ այդ կը լինի, եթե երկրի կառավարութիւնը լինի յեղափոխականների և սօցիալիստների ձեռքում:

Հայ կապիտալը, օտարազգի կապիտալը, արդիւնաբերողները բնավ չեն տանի իրանց կապիտալները Հայաստան, եթէ նրա կառավարութիւնը գտնվի յեղափոխականների կամ սօցիալիստների ձեռքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
«Հայկական հարցը» Առաքելյանի բնութագրմամբ	6
Հայ-ռուսական հարաբերություններն Առաքելյանի գնահատմամբ	29
Գրականության, արվեստի, լուսավորության ու կրթության հարցերը «Մշակում»	49
«Մշակը» հայ-վրացական հարաբերությունների մասին	71
«Արոր» ամսագիր, 1910-1913 թթ., խմբագիր Հ. Առաքելյան	85

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայ պատգամավորութեան հաղորդագրութիւնը	91
Մի նոր աղէտ	91
Բագուի կոտորածը	92
Նախազգուշական միջոցներ	93
Համերաշխութեան ձայնը	93
Խաղաղութիւնը նորից վտանգված	94
Լուրեր Հայկական հարցի մասին	94
Սիմեօն Ջաւարեան	95
Ողջոյն համազգային մեծ տօնին	96
Անհաջող ընտրութիւն	97
Կոնստանտին Խատիսեան	97
Հայոց հարցը եւ Անգլիան	98
Ազգային համերաշխութեան գաղափարը	99
Ժողովրդական առողջապահութիւնը	99
Մեր ծխական դպրոցները	100
Թուրքաց Հայաստանը	101
Մի խօսակցութիւն Խարլամովի հետ	101
Ինչ ապագայ է սպասում մեզ	102
Պետք է աչալուրջ լինել	102
Դէպի կործանումն	103
Կամ գործեցէք եւ կամ հեռացէք	103
Ազգային զօրահաւաքը	104
Ո՞րն է ելքը	105
Հայութիւնը լուռ է	105
Հ. Առաքելեանը մահացած	106
Հայ ժողովուրդ	108

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Ժողովրդական տնտեսական համալսարան

ԼԵՆԻՆԻՑ ԱՐԱՄԻ ԱԼՈՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Համբարձում Առաքելյան հրապարակախոսը

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի
Տեխ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլ 7:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1



ՄԱՍԻՍԿՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ 2014